Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ

ԱԶԳԱՅԻՆ ԳԵՏԱԿԱՆ ՀԱՎԱՏԱՄՔ

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)
Ն 661

Գարեգին Նժդեհ: Ազգային պետական հավատամք/
Ն 661 «Անմար Կրակներ» ՌԲՀԿ Կազմ.՝ Ա. Ն. Բարխուդարյան- Եր.:
Ասողիկ, 2011թ.-120 էջ:

Գիրքը կազմել է «Անմար Կրակներ» ռազմահայրենասիրական բարեգործական հասարակական կազմակերպության հիմնադիր նախագահ՝ Ասյա (Ալլա) Նիկոլայի Բարխուդարյանը:

Գիրքը տպագրվել է «Անմար Կրակներ» ռազմահայրենասիրական բարեգործական հասարակական կազմակերպության Ամերիկայի Միացյալ Նահանգի մասնաճյուղի նախագահ, մեծ հայրենասեր, բարերար Հարություն Կարապետի Կարմիրյանի միջոցներով:

Գիրքը վաճառքի ենթակա չէ, այն նախատեսված է Հայաստանի Հանրապետության և Արցախի Պաշտպանական բանակի զինծառայողների, ինչպես նաև հանրակրթական և ավագ դպրոցների, միջին մասնագիտական և ԲՈՒՀ-երի ուսանողների համար՝ մատաղ սերնդի և երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակության նպատակով:

Գրքի տպագրման գաղափարը Ասյա (Ալլա) Նիկոլայի Բարխուդարյանինը և Հարություն Կարապետի Կարմիրյանինն է:

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)

ISBN 978-9939-50-177-2

© Ա. Բարխուդարյան, 2011 թ.

ՆԱԽԱԲԱՆ

Հավերժ ճամփորդը, հայոց հոգեն՝ Գարեգին Նժդեհ:

Գարեգին Տեր-Հարությունյանը հայությանն ու աշխարհին առավելապես հայտնի է որպես Գարեգին Նժդեհ, ինչն էլ կարծես բնորոշում է մեծ հայի փոթորկոտ կյանքն ու անցած ուղին: Թերևս, բնորոշումից բացի, «Նժդեհ» եզրը կանխորոշեց հայորդու նվիրական ճակատագիրը, որը հանուն Հայի ու Հայքի նժդեհացավ՝ իմա՝ թափառեց, ճամփորդեց, մաքառեց հայոց լեռներում և տարածքներում, պայքարեց ու անմահացավ հավերժ:

Ցուրաքանչյուր հայ, ում համար հայրենիքն ու ազգը թանկ լինելուց բացի նաև հավիտենարժեք հասկացություններ են, պետք է իմանա Նժդեհի մասին, ապրի Նժդեհի գաղափարներով, կիսի մեծանուն հայորդու ճակատագիրը... Իզուր չէին Նժդեհի մտահոգությունները և՛ այնժամ և՛ հիմա, թե՛ հայրենասիրությունը այլևս բավարար պայման չէ, հայրենիքի փրկության համար հայրենապաշտ պիտի լինենք, պատգամել է նա:

Կան մարդիկ, ովքեր ի զորու են պտտել պատմության անիվը, ավելին՝ ազգի ու մարդկության անիվը, նրանք եղել են և կլինեն ինչպես այլազգիների, այնպես էլ հայերիս մեջ: Եվ նրանցից մեկն, անտարակույս, Գարեգին Նժդեհն է:

Մարդ՝ ով ապրեց ազգի կյանքով ու հանուն ազգի, հանուն հայրենիքի, ազգային մարդ, ով ազգակերտ նպատակների մեջ նկատեց մարդուն, իսկ մարդու մեջ՝ հայ տեսակին, հայ էակ՝ ով հայկական երակներով զգաց համամարդկայինը, երկրային արարած, ով երկնային տեսլականով կառչեց Հային ու Հայքին և Հայ Աստվածների պաշտամունքն ունենալով՝ ապրեց, գործեց ու նահատակվեց որպես արորդի աստվածամարդ՝ երկրային աստված...

Գարեգին Նժդեհը իր կյանքով մի մտապատկերային հայկական կաղապար ստեղծեց, որով պիտի իր հայրենապաշտությունն ու ազգային առաքելությունը գնահատի յուրաքանչյուր հայ: Այդ պատկերավոր կաղապարի մեջ «տեղավորվելով», ամեն մի հայորդի պետք է զգա իր չափն ու կշիռը, դերն ու նշանակությունը և գիտակցի՝ ինչքան նվիրվածություն պետք է ավելացնել Նժդեհյան կաղապարի մեջ հարմար զգալու, տեղավորվելու համար... Իսկ փա՜ռք այն հայորդիներին, ովքեր կկարողանան մեծացնել կաղապարի ծավալները, տարողունակությունը, քանզի ինչպես Նժդեհը կասեր, ամեն սերունդ պիտի գերազանցի իր նախորդներին...

Նժդեհը ոչ միայն հայ մարդ, այլև համամարդ է, նա հստակ գիտակցել է ինչպես հայ տեսակի, այնպես էլ մարդ էակի առաքելությունն ու արժեքային համակարգը: Նրա համար ճշմարիտ ազգայինն ու առաքինի համամարդկայինը նույնարժեք բնույթ են ունեցել: Բայց հստակ է եղել նաև այն, որ համամարդկային արժեքները ստեղծվում են ազգային արժեհամակարգերի գոյությամբ ու գործունեությամբ, և ապազգային դրսևորումները (համամարդկային հորջորջվող) չեն կարող վերազգային ընթացք ունենալ...

Նժդեհը հավասարապես ռազմական ու պետական, ազգային ու քաղաքական գործիչ է և նրա ներկայությունն ամենուր տեսանելի հետք է թողել... Որպես զորավար, նա բազմաթիվ մարտերի ու կռիվների մասնակից-հաղթող է և գնահատվել է ոչ միայն հայ ռազմիկների ու սպաների կողմից: Որպես պետական գործիչ՝ նա անհանդուրժող էր ինչպես արտաքին, այնպես էլ ներքին հակառակորդի նկատմամբ և դրա շնորհիվ է, որ այսօր Սյունիք-Զանգեզուրն ունենք Հայաստանի Հանրապետության կազմում: Որպես քաղաքական գործիչ նա չհանդուրժեց ՀՅԴ կուսակցական ներքին ու այլ խաղերը և հիմնեց հայի արիական ծագմամբ, ցեղի գենետիկ էությամբ առաջնորդվող «Ցեղակրոն ուխտեր»... Որպես ազգային գործիչ՝ նա գաղափարախոսական

և իմաստասիրական մի հսկայածավալ գործ կատարեց և ցեղակրոն ուսմունք արարելով՝ վերհառեց հայոց ազգային գաղափարախոսությունն ու իմաստասիրությունը:

Նժդեհին հաճախ են փորձում համեմատել կամ շփոթել Նիցշեի հետ, սակայն գերմանացի Նիցշեի ստեղծած «Գերմարդ»-ը որևէ համեմատական չունի Նժդեհի ստեղծած «Ցեղամարդ»-ու հետ: «Գերմարդ»-ը մերժում է թույլին, կարիքավորին, անգամ հրում է նրան դեպի կործանման, ինքնաաստվածացման է գնում... Իսկ «Ցեղամարդ»-ը պաշտպանն է ցեղի յուրաքանչյուր մասնիկի, իր կյանքը ծառայեցնում է ցեղակիցների բարօրությանը և պաշտպանն է հայրենիք-բնօրրանի...

Գուցե այս տարբերակումները չնկատելով կամ միտումնավոր շրջանցելով է, որ Նժդեհյան ցեղակրոնությունը ժամանակին փորձեցին համեմատել նացիստական ու ֆաշիստական գաղափարախոսությունների հետ, ինչն, իհարկե, շարունակություն չունեցավ, քանզի սին էր ու անփաստարկ:

Ցեղակրոն հայը երդվում է Հայոց ռազմի ու զորության Աստված Վահագնի աջի վրա և որևէ առնչություն չունի այլազգիների կուռքերի կամ աստվածների, առավել ևս հակամարդկային ու ապազգային մտորումների կամ գաղափարների հետ...

Նժդեհը այլևս Հայոց Անմահների շարքում է և բռնել է հավերժի ուղին... Տիեզերաաշխարհների Հայապատկան Տարածքներում... Նժդեհը այսօր հոգի է՝ ոգի, բայց վստահաբար երկնքում չի դադարեցրել իր հայրենիք-երկրի գործերով և ազգի հոգսերով զբաղվելը: Նժդեհի նման արորդի-հայորդիները մարմին, միտք, թե հոգի լինելով չեն դադարեցնում իրենց ներկայությունը անգամ մեր առօրյա կյանքում: Պատերազմի տարիներին սիրում էինք կրկնել նրա խոսքերը՝ «Երբ պատերազմի դաշտում քեզ մենակ ես զգում, հե՜տ նայիր և կտեսնես, որ քո հետևից գալիս են մեր բազում նահատակները»... Սա ասվում էր, և ազդեցությունն այնքան տեսանելի էր

դառնում, որ մտքում անգամ փախչող զինվորը պատկերացնում էր, թե ինչպես է փախչելով բախվելու Նժդեհի, Անդրանիկի, Արաբոյի, Սերոբ Աղբյուրի, Գևորգ Չաուշի, Հրայր Դժոխքի և այլոց հոգիներին, որ կանգնած են մարտադաշտում և մեր կողքին են ...

Հրաշալի է, որ մի խումբ նվիրյալ հայորդիների ջանքերով Նժդեհի աճյունը Ռուսաստանի Վլադիմիր քաղաքի գերեզմանատնից բերվեց հայրենիք: Դա 1983 թ. էր, և առ այսօր չեն դադարում ուխտագնացությունները մեծ հայի մասունքներին, որոնք վերաթաղված են Վայոց Ձորի Սպիտակավոր վանքի տարածքում, Սյունիքի Խուստուփ լեռան լանջին և Կապանի՝ Գարեգին Նժդեհի հուշահամալիրում...

Այդ ուխտագնացություններից մեկի ժամանակ ավանդական հուշագրում գրեցի. «Փա՛ռք քեզ Նժդեհ, որ հայ ես և փա՛ռք քեզ հայորդի, որ քո մեջ Նժդե՛հ ունես...»: Այս մեծ հայորդին վառ օրինակ է անմնացորդ նվիրյալ հայ տեսակի, որ կարող է առաջնորդել և՛ հայ մարտիկին, և՛ հայ մշակին, և՛ հայ գործչին, և՛ հայ...

Ճանաչե՛նք և սիրե՛նք մեր Նախնյաց, քանզի ով անցյալը չգիտի՝ նա ապագա չունի, իսկ ներկան անորոշ է, անգույն ու սին...

Հայոց Ազգային Բանակ «ՀԱԲ»
Կոտայք գնդի հրամանատար
Արմեն Ավետիսյան

ՆԱՄԱԿ ՀԱՑ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆԸ

Հոգեպես ծույլերն են ստեղծել դժվարին ու անկարելի խոսքերը.

Քույր ու եղբայր են չկարենալն ու չկարողանալը: Հազարամյոն ճամփորդությունն սկսվում է մի հատիկ քայլով: Չկա անկարելին, երբ կա զորեղ ու վճռական կամքը: Գիտցիր, եղել են կամքի հսկաներ, որոնք առաջարկել են Ալեքսանդր Մակեդոնացուն իր արձանը կերտել Արա լեռը տաշելով:

Թագավորը նա է, ով կարող է: Ես ուզում եմ, որ դու լինես թագավոր սերունդ:

Քանի որ գետափին ես, տկար ես: Անցար, Կեսար ես: Անցիր հայ երիտասարդ, անցիր Ռուբիկոնը (գետ, որ բաժանում էր Իտալիան հռոմեական Գալլիայից, 49 թվին մ.թ.ա. Կեսարը կտրեց-անցավ, որ իրավունք չուներ), որի հանդիպակաց ափին քեզ հաղթական դափնին է սպասում:

Հաղթության ու պարտության միջև ամբողջ պետություններ կան, ասել է բռնապետը:

Քո վաղվա հաղթանակի և պարտության միջև հայ ժողովրդի լինել-չլինելու հարցը կա, հայ երիտասարդություն:

Ահա թե ինչու քեզ պետք է հաղթել, քեզ պետք է հաղթանակի լուսապսակ ստեղծել քո ժողովրդի անվան ու ճակատի շուրջը: Իսկ դրա համար քեզ պետք է լինել ավելի քան հայ մարդ:

Գարեգին Նժդեհ

ԿՅԱՆՔԸ

Գարեգին Նժդեհը (Գարեգին Տեր-Հարությունյան) ծնվել է 1886 թվականի հունվարի 1-ին, Նախիջևանի գավառի Կզնութ գյուղում, հոգևորականի ընտանիքում:

Նախնական կրթությունը ստացել է Նախիջևանում, ապա Թիֆլիսի միջնակարգ դպրոցում: Այստեղ էլ նա ընդունվում է ՀՀԴ շարքերը:

Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո (1902թ.) Նժդեհը մեկնում է Պետերբուրգ, ընդունվում Պետերբուրգի համալսարանի իրավաբանական բաժանմունքը:

1904 թվականին ՀՀԴ կարգադրությամբ Նժդեհը մեկնում է Սալմաստ՝ որպես կուսակցական քարոզիչ:

Այնուհետև Սալմաստից մեկնում է Բուլղարիա, որտեղ ընդունվում է կուսակցական զինվորական դպրոցը: Շուտով Նժդեհը այդ դպրոցից անցնում է Սոֆիայի թագավորական զինվորական ուսումնարանը, որն ավարտում է 1907 թվականին:

Ավարտելուց հետո նորից վերադառնում է Կովկաս:

Այդ շրջանում (1907 թ.) ընդվզումներ են սկսվում Պարսկաստանում, որի տասը միլիոն բնակիչներից յոթանասուն հազարը հայեր էին:

Նժդեհը անցնում է Պարսկաստան:

Զինամթերք հայթայթելու միտումով 1908 թվականին նա նորից գալիս է Կովկաս: Ցարական կառավարությունը, որ նոր էր ճնշել 1905 թվականի շարժումները, լայն հալածանքներ է սկսում նաև ազգային շարժման դեմ. ձերբակալվել և բանտարկվել էին Ա.Ահարոնյանը, Ավ. Իսահակյանը, Հովհաննես Թումանյանը, Հ. Օհանջանյանը, Ս.Մանասյանը, Կորյուն և Զավեն Վարդապետյանները, Համազասպ Սրվանձտյանը և շատ-շատ ուրիշներ, շուրջ հինգ հարյուր հոգի: Նախնական

քննությունը տևեց... չորս տարի: Դատավարությունը տեղի ունեցավ 1912 թվին:

Իսահակյանն ու Ահարոնյանն ազատվեցին ու մեկնեցին արտասահման, Հ. Թումանյանն ազատվեց խոշոր դրամական երաշխավորությամբ, չորս հոգի դատապարտվեցին տաժանակիր աշխատանքի, որոնց թվում Խրիմյան Հայրիկի դիվանապետ Կորյուն վարդապետը, Հ. Օհանջանյանը, որոնք շղթայակապ աքսորվեցին Սիբիր: Քսանմեկ հոգի դատապարտվեցին աքսորի, քսանվեց հոգի՝ բանտային ռեժիմի, մնացյալներն արդարացվեցին: Այս իրադրությունն էր Կովկասում, երբ Նժդեհն անցավ պարսկական սահմանը:

Նոր Ջուղայի շրջանում նա ձերբակալվում է և պահվում Նախիջևանի և Երևանի բանտերում: 1911 թվականին, ազատվելուց հետո, մեկնում է Բուլղարիա:

1912 թվականին Սոֆիայում Անդրանիկի և Նժդեհի հրամանատարությամբ հայկական կամավորական գունդ է կազմավորվում:

Նույն թվականի հոկտեմբերի կեսերին Սոֆիայում գտնվող Բրոնշտեյն-Տրոցկին այդ մասին ասել է.

«...Ես Սոֆիայում պատերազմի դաշտ ճանապարհեցի հայկական կամավորական խումբը: Վաշտի հրամանատարն էր սպայական համազգեստով մի հայ, որին ուղղակի ընկեր Գարեգին էին անվանում: Գարեգինը բանաստեղծ էր, ճառախոս և զինվորական: Նա համակ կրակ էր կտրել իրեն վիճակված առաքելության կարևորության գիտակցումից...տասն օր շարունակ, օրական տասը ժամ զինավարժություններ էր անցկացնում...»:

Չնայած այս բավականին դրական գնահատականին, մի քանի տարի հետո նույն Տրոցկի-Բրոնշտեյնը, որ արդեն համայնավարական զինվորական նախարար էր, Նժդեհի դեմ ուղարկեց 11-րդ կարմիր բանակը, մոռանալով, որ նա լավ զինվորական է...

Բուլղարական կառավարությունը կամավորական խմբի պաշտպանական հրամանատար ճանաչում է Գ. Նժդեհին, քանի որ նա սպայական կոչում ուներ, չնայած խմբի փաստական հրամանատարն Անդրանիկն էր, որ դեռ սպայական կոչում չուներ: Մի քանի ամիս հետո, ելնելով Անդրանիկի քաջագործություններից, բուլղարական կառավարությունը նրան շնորհեց փոխտեղակալի աստիճան, ինչպիսին ուներ Նժդեհը:

1913 թվականին կամավորական գունդը լուծարքի է ենթարկվում:

1914 թվականին Անդրանիկն ու Նժդեհը գալիս են Թիֆլիս, որտեղ Ազգային Բյուրոն Հայկական կամավորական զորախմբեր էր կազմավորում՝ առաջին համաշխարհային պատերազմի կապակցությամբ:

Այդ զորամասերը մարտնչեցին Թուրքերի դեմ ռուսական բանակի հետ միասին, սակայն երբ Հայկական բարձրավանդակի մեծ մասն արդեն գրավված էր, ցարական կառավարությունը լուծարեց դրանք:

Նժդեհը վերադառնում է Թիֆլիս և ապա անցնում Ալեքսանդրապոլ:

Ցարական կառավարության տապալումից հետո ժամանակավոր կառավարությունը 1917 թվականի մարտի 21-ին Ռուսաստանի բոլոր ժողովուրդներին հայտարարեց հավասար:

Հեղափոխության ալիքը, առանց արյունահեղությունների, տարածվեց ռուսական կայսրության ամբողջ տարածքով:

Հայության պաշտոնական մարմիններն անմիջապես հեռագրով հայտնեցին Պետերբուրգ, որ Հայաստանը չի անջատվում Ռուսաստանից՝ օգտվելով հեղափոխության ընձեռած հնարավորություններից, այլ պիտի աշխատի ամրապնդել հեղափոխության նվաճումները, մինչև Սահմանադիր ժողովը կորոշի նախկին կայսրության մեջ մտնող ժողովուրդների կարգավիճակը:

Ամիսներ անց ժամանակավոր կառավարության հարաբերությունները բանվորագյուղացիական խորհուրդների հետ սրվեցին. անմիջապես պատերազմը դադարեցնելու կոչը բոլշևիկների կողմը գրավեց զանգվածների համակրանքը և նրանց օգնությամբ նրանք բռնագրավեցին իշխանությունն ու հաշտության պայմանագիր կնքեցին գերմանա-թուրքական ռազմաճակատում:

Նորընծա կառավարության կոչով զորքերը լքեցին ռազմաճակատի գիծը Հայկական բարձրավանդակում և զենքերը կամ տեղում վառելով, կամ մասամբ հետները վերցրած, հեռացան Ռուսաստան:

Անզեն ու անպաշտպան հայ ժողովրդի արևելյան հատվածն էլ մնաց թուրքական կանոնավոր զորաբանակների առջև...

Ստեղծվեց օրհասական վիճակ:

Գրեթե առանց դիմադրության թուրքական զորքերը գրավեցին ոչ միայն պատերազմում կորցրած տարածքները, այլև առաջացան մինչև Արաքս ու Ախուրյան, մինչև Սարդարապատ ու Ղարաքիլիսա:

1918 թվականի մայիսին Գարեգին Նժդեհի գործուն մասնակցությամբ կազմակերպվեց Ղարաքիլիսայի ճակատամարտը, որն ապահովեց Սարդարապատի թիկունքն ու փրկեց Արևելյան Հայաստանը բնաջնջումից:

Հայկական Հանրապետության հռչակումից հետո կառավարությունը Նժդեհին նշանակում է Նախիջևանի գավառապետ և նրան հանձնում չորրորդ գունդը, որի հետ նա մեկնում է Նախիջևան: Այդ ճանապարհին Նժդեհը թուրքերից մաքրում է Ավշար, Խալիսա և մի շարք այլ գյուղեր:

Արցախն ու Զանգեզուրն այդ ընթացքում կառավարվում էին տեղական հայկական կոմիտեների կողմից, քանի որ կենտրոնական կառավարությունը մի շարք դիվանագիտական նկատառումներից ելնելով չէր ուզում այդ տարածքները Հայկական Հանրապետության մաս հայտարարել:

Նույն ժամանակաշրջանում Անդրանիկը, սասունցի խմբապետ Մուշեղ Ավետիսյանը և այլք, ուղարկվեցին Զանգեզուր և մնացին այնտեղ մինչև Հայկական Հանրապետության լիազոր Շահմազյանի ժամանելը:

Անդրանիկը Զանգեզուրում պարենի պահեստներ հիմնեց և երկրամասի ապագան ապահովելու համար մի քանի վտանգավոր գյուղեր մաքրեց թուրքերից, արշավանքներ կազմակերպեց դեպի Արցախի ամենահեռավոր շրջանները:

1919 թվականի մարտի 12-ին, անգլիացիների պահանջով, Անդրանիկը հետ է կանչվում Զանգեզուրից: Անմիջապես այդտեղ ճգնաժամային վիճակ է ստեղծվում, արևմուտքից դեպի Զանգեզուր են առաջանում Թուրքիայի, իսկ արևելքից՝ Ադրբեջանի թուրքերը: Մեկ գիշերվա մեջ Աթաթուրքի հրամանով բոլշևիկ դարձած մուսավաթականները խորհրդային դրոշակ բարձրացրած, հարձակվեցին Զանգեզուրի վրա: Այդ պարագաներում է, որ Զանգեզուր է հասնում Գարեգին Նժդեհը:

Առանձնահատուկ եռանդով նա սկսում է կազմակերպել Զանգեզուրի ինքնապաշտպանության գործը:

Թուրքական տասնյակ գյուղեր, որ ժահրապալարի պես աճել էին երկրի տարածքի վրա, նա, ասես նշտարով, հատեց ու ժահրազերծեց հայոց աշխարհի այդ մասը՝ Զանգեզուրն ու Գողթանն ապահովելով ապագա Հայաստանի համար: Միաժամանակ նա շրջվեց նաև դեպի Նախիջևան ու Բարգուշատ, յոթանասուն-ութսուն թուրքական գյուղեր մաքրեց նաև այդ մասից՝ փրկելով կորստից Գնդևազից մինչև Ղամարլու:

1920 թվականի մայիսին 11-րդ կարմիր բանակը գրեթե առանց դիմադրության մտավ Բաքու:

Ադրբեջանը հայտարարվեց խորհրդայնացված և մուսավաթականների զավթողական նպատակներն անփոփոխ փոխանցվեցին խորհրդայնացված Ադրբեջանին, այս անգամ 11-րդ բանակի միջոցով իրականացվելու համար:

Մենշևիկյան Վրաստանից խլվեց Զաքաթալայի շրջանը և միացվեց Ադրբեջանին՝ «չեզոք գոտի» անվան տակ:

Գրավվեց և Ադրբեջանին միացվեց Ղարաբաղը:

Հերթը հասել էր Զանգեզուրին:

Ծածուկ Զանգեզուր ուղարկվեց տասնհինգ հոգուց բաղկացած մի խումբ, որի անդամներից մեկը պարսկահպատակ հայ էր, մեկը՝ լեհ, տասներեքը՝ թուրք:

Սրանք հանդիպումներ են ունենում գյուղացիության ներկայացուցիչների հետ և հայտարարում, որ տասնմեկերորդ բանակի հրամանատարությունը պահանջում է խորհրդայնացնել Զանգեզուրն ու կցել Ադրբեջանին:

Բացասական պատասխան ստանալով՝ հեռանում են և տասնմեկերորդ բանակի հրամանատարությանը տեղեկացնում նաև, թե երկրամասում գրեթե զորք չկա:

Հուլիսի 5-ի գիշերվա ժամը տասնմեկին բոլշևիկյան զորամասերը գաղտագողի մտան Զանգեզուր և օգտվելով զորաբանակի ու Նժդեհի բացակայությունից, թալանելով մի քանի հայկական գյուղեր՝ հասան Գորիս:

Հաջորդ օրն սկսվեց հայկական գյուղերի թալանն ու ահաբեկումը: Գորիսի բանտը տեղավորում էր 800 կալանավոր, այն լրիվ լցվում էր և աստիճանաբար, գնդակահարվածներից հետո, լրացվում նորերով:

Այն գյուղերում, որոնք տասնմեկերորդ բանակի հրամանատարի կարծիքով որակվում էին որպես «դաշնակցական կենտրոններ», մանուկից մինչև 80 տարեկան երկսեռ անձինք գնդակահարվում էին:

Հրամանատարի կարծիքով 80 տարեկանից հետո մարդը դժվար թե ապստամբեր նոր իշխանության դեմ. նրանց թողնում էին մահանալու բնական մահով:

11-րդ կարմիր բանակի ղեկավարությունը Նժդեհի գլխի համար խոստացել էր երեք միլիոն ռուբլի:

Նոյեմբերին դանակը հասավ ոսկորին և գրեթե ամբողջ Զանգեզուրն ապստամբեց «ազատարար» կարմիր բանակի դեմ: Երևանից օգնության շտապեց Դրաստամատ Կանայանը, կապավորները դրամ հասցրին Գ. Նժդեհին:

Չցանկանալով շարունակել արյունահեղությունը, Նժդեհը դիմեց կարմիր բանակի հրամանատարությանը հետևյալ վերջնագրով.

«Ղարաբաղի և Զանգեզուրի հայությունն արդեն գլխատված է և տնտեսապես քայքայված՝ կարմիր բանակի ձեռքով: Ձեր զորքերի ներկայությունը Սյունիքի սահմաններում այլևս անհանդուրժելի է:

Եթե չեք ուզում 11-րդ բանակի մնացորդներն էլ կոտորածի ու գերության մատնել, հրամայում եմ անմիջապես դատարկել Զանգեզուրը, հակառակ դեպքում ստիպված կլինեմ կռվով տիրելու Ձեր ձեռքում գտնվող երկրամասին»:

Գարեգին Նժդեհ, 14 նոյեմբեր 1920թ.

Մայրը՝ Տիրուհի (Տիրոխնի Խաթայի) Նազարի Գիուլնազարյան, 1930-ական թթ.

Գոհար-Մելիք Դադայեանը մոտ 1913 թ.

*

Կարմիր հրամանատարությունը, որպես պատասխան, Նժդեհի դեմ է ուղարկում Բաքվից նոր ժամանած Զավալ փաշայի գունդը, Կուրոչկինի հեծյալ զորախումբը:

Տաթևի և Գորիսի միջև տեղի ունեցած ճակատամարտում այդ թարմ ուժերը ջախջախվում են, Զավալը գերի է ընկնում:

Թուրքական դիակների վրայով Նժդեհն անցնում է Գորիս, բայց Գորիսն արդեն ապստամբել էր և քշել բոլշևիկներին, որոնք ամրացել էին շրջակա լեռներում և թնդանոթներով ռմբակոծում էին քաղաքը: Նժդեհն անմիջապես հարձակման անցավ և դրանց վռնդեց դիրքերից:

Զանգեզուրը մաքրված էր...

Զանգեզուրին կից թուրքական շրջաններում սով էր սկսվել և թուրքերը հրաժարվում էին կերակրել «ազատարար» զինվորներին ու ձիերին: Կարմիր բանակի հրամանատարությունն ուզում էր, որ Նժդեհը թույլ տա, որ նրանք Զանգեզուրի վրայով անցնեն Եվլախ կամ Երևան:

Նժդեհը պատասխանում է.

«Զանգեզուրի ապստամբական հրամանատարությունն ընդունում է ձեր առաջարկը՝ հաշտության բանակցություններ սկսելու մասին, բայց ոչ Զարազ գյուղում, այլ՝ Գորիսում, ուր և առաջարկվում է ուղարկել ձեր լիազոր ներկայացուցիչներին:

Օգտվելով առիթից ավելացնում եմ.

Դուք ձեր անհամար թերթերում ու թռուցիկներում որպես և ինձ ուղարկած ձեր վերջին երկու գրություններում, Զանգեզուրի աշխատավոր մասսաների ապստամբության և պարտության պատճառը համարում եք Զանգեզուրի ապստամբական հրամանատարությանը:

Ինչպիսի ինքնախաբեություն.

Արյան ու երկաթի սիստեմը, որով դուք կառավարել եք և

շարունակում եք կառավարել, հեղափոխական դեմոկրատիայի և պատմության կողմից թքված ու դատապարտված այդ սիստեմը ձեզ շատ հեռուն, բնական է, տանել չէր կարող:

Խոսեմ կոնկրետաբար.

Ղափանին տիրանալու համար դուք ավանգարդ ունենալով դարեր շարունակ հայի քրտինքով ապրող ռեակցիոն թրքությունը, հրի ու սրի եք մատնում շրջանիս գյուղերից ամենաբարեկեցիկը՝ Զեյվան և ձեր այդ վանդալական ակտը համարում հեղափոխական:



Գարեգին Նժդեհը բուլղարական սպայի համազգեստով

Կրկնում եք ձեր հարձակումները Արծվանիկի վրա և սանձարձակ արարքներով՝ կին ու երեխաների կոտորածով, բռնաբարություններով մեզ հիշեցնում եք տխրահռչակ ենիչերների բարբարոսությունները:

Քառասուն օր շարունակ ռմբակոծում եք Շվանիձորը և երբ երկու դավաճանների դավադրությամբ ձեզ հաջողվում է մտնել այդ չարաբախտ գյուղը, այդտեղ քարը քարի վրա չեք թողնում, սովորական սպանություններ, կին ու աղջիկների բռնաբարում, ալան-թալան և այլ ենիչերական ակտեր...

Ես հրամայում եմ հավաքել ձեր թնդանոթներից, ռմբաձիգներից ու գնդացիրներից այդ գյուղի գլխին թափված ամբողջ երկաթն ու արճիճը և նրանից Արաքսի ափին, մի բարձր սարի վրա, մի տխուր կոթող կանգնեցնել՝ հետևյալ սեղմ արձանագրությամբ.

«Նրանց անունը կարմիր էր, գործերը՝ սև.

Թող հավերժ անիծյալ լինեն նրանք»:

Դուք տաճիկ ասկյարներով պաշարում եք Ցայջին, տեղահանում ժողովրդին ու թալանում...

Պանիկայի մատնված ժողովրդի մի մասը կոտորվում է գյուղի պատերի տակ, մի մասը թափվում է գետն ու խեղդվում, իսկ մնացածները, գյուղի գրավումից հետո, իրենց ավերված տներում, մերկ ու քաղցած, անիծում են իրենց օրն ու արևը...

Այդ բոլորից հետո դուք զայրանում ու զարմանում եք, առանց խղճի խայթի, շարունակում ճառել աշխատավորության շահերից:

Ահա ինչո՛վ և ինչպե՛ս շահեցիք աշխատավոր գյուղացիության զզվանքն ու թշնամանքը և ստիպեցիք նրան պատվավոր մահը գերադասել անպատիվ կյանքից:

1919 թվականին Ռուսաստանն ու Թուրքիան Սամսունում պայմանագիր կնքեցին (որը 1921 թվականին Մոսկվայում վերակնքվեց):

Այդ պայմանագրի մի կետը հատկապես ուղղված էր Հայաստանի դեմ. Ռուսաստանը պարտավորեցնում էր Թուրքիային հարձակվելու Հայաստանի Հանրապետության վրա: Հայաստանի կառավարությունը անտեղյակ այս դավերից, դռները լայն բացած աշխարհասփյուռ հայության առջև, գրկաբաց ընդունում էր նաև Ռուսաստանից ներգաղթող հայերին:

Օգտվելով այդ հնարավորությունից, բոլշևիկները Հայաստան ուղարկեցին չեկիստների և սպանների՝ ծագումով հայ մի խումբ, որին պատվիրել էին կազմալուծել Հայաստանի Հանրապետության զորքերը, բոլշևիկյան քարոզչություն տարածել:

Այդ սպանները մտան հայկական բանակի մեջ և սկսեցին Թուրքերի հետ բարեկամության մտքեր ներարկել զինվորներին՝ այժմյան Թուրքն այլևս այն Թուրքը չէ, որ գալիս էր սպանելու ու Թալանելու. ներկայիս Թուրքը մեր եղբայրն է, բարեկամը:

Այս շարունակական պնդումները եթե չէին էլ համոզում, ապա սկսում էին վարանումներ առաջացնել, երկվության մեջ գցել մարդկանց, իսկ դա արդեն Թուլացնում էր, կամազրկում պաշտպանությունը:

Ըստ Սամսունի ռուս-Թուրքական պայմանագրի պահանջների 1920 Թվականի սեպտեմբերի 15-ին Թուրքերն սկսեցին հարձակումը: Հայաստանի վրա արշավեց Կարա-Բեքիրն՝ իր զորախմբով:

Թուրքերին օգնելու համար Հյուսիսից Հայաստան մտավ 11-րդ կարմիր բանակը:

Սեպտեմբերի 19-ին Ղազախի շրջանում 11-րդ բանակը գրավեց մի քանի հայկական գյուղեր:

Հայաստանի կառավարությունը, հասկանալով դրության անելանելիությունը, որոշում կայացրեց առանց դիմադրության իշխանությունը հանձնել բոլշևիկներին՝ ընտրելով երկու չարյաց նվազագույնը:

Դաշնակցական կառավարության որոշմամբ Դրաստամատ Կանայանը մնում է Երևանում և մտնում առաջին բոլշևիկյան կառավարության մեջ:

1920 Թվականի դեկտեմբերի 16-ին Հայաստանի խորհրդային կառավարության զինվորական կոմիսար Նուրիջանովի և Դրոյի ստորագրությամբ ուղերձ է հղվում Գարեգին Նժդեհին, կոչով՝ ընդունելու խորհրդային դրոշը և միանալու Ռուսաստանին ու Խորհրդային Ադրբեջանին:

1920Թ. դեկտեմբերի 25-ին Տաթևում տեղի է ունենում Համազանգեզուրյան առաջին համագումարը, որը հռչակում է Ինքնավար Սյունիքի հանրապետությունը: Նժդեհը նշանակվում է ռազմական ղեկավար՝ Սյունյաց երկրի Սպարապետ:

1921 Թ. փետրվարյան ապստամբության ընթացքում Նժդեհը գրավում է Վայոց ձորը և այն հայտարարում Ինքնավար Սյունիքի մաս:

Ապստամբության պարտությունից հետո, ապրիլի 27-ին, Տաթևում գումարվում է երկրորդ համագումարը, որը որոշում է Զանգեզուրը հայտարարել Լեռնահայաստան, իսկ կառավարությունը՝ Նժդեհի գլխավորությամբ, Լեռնահայաստանի կառավարություն:

1921 Թվականի հունվարի 22-ին Նժդեհին է դիմում նաև 84-րդ խորհրդային զորագնդի հրամանատար Սեմյանովը՝ խորհուրդ տալով «բռնել իրեն պարգած ձեռքը»:

Նժդեհը պատասխանում է.

«11-րդ բանակի հրամանատարին.

Ձեր նամակով դուք խնդրում եք, որ մենք ձեզ հետ հաստատենք բարեկամական հարաբերություններ:

Ես սկզբունքորեն հակառակ չեմ այդ առաջարկին, սակայն ներկա հանգամանքներում հաստատել անկեղծ բարեկամական հարաբերություններ համարում եմ միանգամայն աննպատակահարմար:

...Ինչպես ինձ, այնպես էլ ձեզ համար, գաղտնիք չէ, որ շնորհիվ Ձեր բարձր հրամանատարության վարած քաղաքականության, Հայաստանը դարձավ սոսկումի և արյան թատերաբեմ: Ձեր բարձր հրամանատարության թելադրանքով էր, որ

քեմալիստները գրավեցին Ալեքսանդրապոլը, Սարիղամիշը, Կարսը, Կաղզվանը և Իգդիրը, տնտեսապես քայքայեցին և մեռցրին այդ երկիրը, ժողովրդին բեռնակիր անասուններ դարձնելով, նրանց իսկ մեջքով ռազմամթերքն ու հարստությունը փոխադրեցին Տաճկաստանի խորքերը:

Այժմ հայությունը գլխատվում է սոցիալիզմի դիմակի տակ և ինչպես ինձ, այնպես էլ Ձեզ համար գաղտնիք չէ, որ Հայաստանի այն մասերում, որոնք գրավված չեն տաճիկներով և գտնվում են խորհրդային իշխանության ներքո, ստեղծված է այնպիսի կացություն, որ սպառնում է հայ գյուղացիության ֆիզիկական գոյությանը և, որ ամենագլխավորն է, գլխատվում, սպանվում է ժողովրդի կենդանի խոսքը: Հայ հեղափոխական դեմոկրատիայի ներկայացուցիչներ հարյուրներով բանտարկվում, աքսորվում և գնդակահարվում են: Այդ բանում տեսնում եմ խորհրդային ղեկավար շրջանների ակնհայտ նենգամիտ միտումները՝ գլխատել Հայաստանի մտավորականությանը, սոցիալիստական անկեղծ, հեղափոխական միտքը: Այն պայքարը, որ հիմա մղվում է Հայաստանում, դասակարգային բնույթ չի կրում. բոլշևիկները միմիայն տիրապետելու տենչով բռնված, ձգտում են հեռացնել ասպարեզից մյուս սոցիալիստական կուսակցությունները, որպիսիք են՝ դաշնակցականները, մենշևիկները, էսէռները և այլն:

...Անկեղծ, բարեկամական հարաբերություններ մեր մեջ կարող են ստեղծվել այն դեպքում, երբ հայ մտավորականությունը կազատվի բանտերից, երբ կդադարեք նրան հալածելուց, երբ դուք միջոցներ ձեռք կառնեք ազատելու այն հողամասերը, որոնք գրավված են քեմալականների կողմից, վերջապես, երբ կդադարեք Զանգեզուր ուղարկել զանազան մութ անձնավորություններ՝ «գաղտնի և շտապ» գործերով:

... Երբ Դուք գործով ապացուցեք, որ թշնամի չեք դժբախտ հայ ժողովրդին, որն ապրում է արևելքի և արևմուտքի ճանապարհի վրա, այն ժամանակ կարելի է բարեկամական

փոխադարձ հարաբերություններ ստեղծել Ձեր և մեր միջև:

Իմ կոնկրետ ցանկություններն են.

1. Երբ Դուք ազատեք բանտերից Հայաստանի հեղափոխական-սոցիալիստական կուսակցությունների անդամներին.

2. Մաքրեք քեմալականներից այն հողամասերը, որոնք գրավված են նրանց կողմից.

3. Հրաժարվեք Զանգեզուրում գաղտնի, ընդհատակյա աշխատանք կատարելուց, այն ժամանակ միայն կարելի է ստեղծել բարեկամական հարաբերություններ Ինքնավար Սյունիքի և Խորհրդային իշխանության միջև:

Սպարապետ Սյունիքի և Գողթնի
Նժդեհ
25.01.21թ. Գորիս



Լեռնահայաստանի
նախարարության զինանշանը

Սյունիքի Հանրապետության
զինանշանը

Գարեգին Նժդեհ, 1920 թ.

ԲԱՑ ՆԱՄԱԿ 11-ՐԴ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻՆ

Բարև՝

Մոռանանք, մի վայրկյան մոռանանք, որ մենք կռվող կողմեր ենք:

Մոռանանք, որ այն դուք էիք, որ խաբելով ավարի և ավերածության մատնեցիք ըմբոստ ու ազատասեր Ղարաբաղը, Սյունիքն ու Վայոց-ձորը:

Մոռանանք, որ մոռանալով հեղափոխական էթիկայի ամենատարրական պահանջները, զինակցելով արևելքի գերազանցորեն ռեակցիոն, կուլտավեր ու հայաջինջ ուժերի հետ, երեկվա հանրապետական Հայաստանը քեմալիստական դարձրիք:

Մոռանանք այդ բոլորը, չնայած պատմությունն ու ձեր ձեռքով խաչված հայ ժողովուրդը երբեք չի մոռանա. մոռանանք և խոսենք որպես երկու օբյեկտիվ կողմեր:

...Ձեր վերջին նամակի մեջ դուք առաջարկում եք ինձ բարեկամանալ Սովետական Հայաստանի կառավարության հետ և միամտորեն հարց եք տալիս՝ թե ու՞մ վրա եմ դրել հույսս:

Սովետական Հայաստան չկա:

Կա քաղաքականապես բռնաբարված Երևան անունով մի քաղաք և մեկուկես տասնյակ գյուղեր՝ այսինքն տերիտորիալ մի անհեթեթություն:

Ձեր դավադրությամբ Հայաստան երկիրը դարձավ քեմալիստական: Միամիտ չլինեք ենթադրելու, որ Մոսկվայի ձեր վերջին կոնֆերանսը մուկ չի ծնելու: Ձեր ցանկությամբ տաճիկները մտան Հայաստան, սակայն ձեր հրամանով չեն հեռանա, և խոստովանենք, որ եթե քեմալիստները քաղաքական հնարավորություն ունենան շարժվելու դեպի Երևան, ձեր՝ միայն թալանի մեջ մարզված և Ղարաբաղում կին ու երեխաներ կոտորելու գործում

մասնագիտացված զորքերը չեն, որ պիտի պաշտպանեն ձեր ձեռքով գլխատված և զինաթափ հայ աշխատավորությանը:

...Թվում է, որ իմ՝ Երևանի կառավարության հետ բարեկամանալուց կշահի միայն ձեր երեկվա բարեկամ և այսօրվա «թշնամի» Քեմալը, որովհետև հայ զինվորն անմարտունակ, փալաս է դառնում, երբ անգամ ձևականորեն կոչվում է կարմիր, բոլշևիկյան, սովետական:

...Ու՞մ վրա եմ դրել հույսս...

Ուժեղը նա՛ չէ, որ ուտող բերաններ, երկոտանի մեքենաներ, թալանչիներ, թնդանոթներ կամ արճիճ ունի, բայց սիրտ ու հոգի չունի, սրբություններ չի ճանաչում:

Ուժեղը նա՛ չէ, որ ոչնչով չի տարբերվում կարմիր ցարերից, սուլթաններից, որը խաբեությամբ դրախտ և հազար ու մի բարիք բերելու խոստումներով մտնում է մի երկիր և թալանում, գլխատում, ծայրահեղության է մղում ժողովրդին...

Ուժողը նա՛ չէ, որ ամբողջ բրիգադներով հարձակվում է Շվանիձոր անունով մի գյուղի վրա, քառասուն օր շարունակ թնդանոթներով ու գնդացիրներով արճիճ ու կրակ թափում հարյուրի չափ ապստամբների գլխին և... այդպես էլ չի կարողանում հաղթել ու նահանջում է, մոռանալով ծնկի գալ պաշտպանվողների առաջ՝ նրանց քաջության և անվեհերության համար:

Ուժեղը նա՛ չէ, որի ավանդարդը սուտն է, խաբեությունն ու պրովակացիան...

Ուժեղը նա՛ չէ, որ հանուն իր աննշան հաջողությունների, իր Պյուռուսյան հաղթությունների, դաշնակցում է անգամ սատանայի հետ...

Ուժեղը նա՛ չէ, որ կազմակերպված մեծ թալանն ու մեծագույն ոճիրն անվանում է մեծ հեղափոխություն, որ իր ամենագռեհիկ ու քրեական տարրերին, ինչպիսիք են սադիստ Աթարբեկյանն ու Ավիս Նուրիջանովը, անվանում է ռուսական մարատներ:

Ուժեղը նա՛ չէ, որի հաղթությունները ռազմական լինելով բարոյական չեն:

...Մենք շատ անգամ երգո՛վ ենք հաղթում:

...Այսպե՛ս եկաք, թալանեցի՛ք, խաբեցի՛ք, ապստամբեցրի՛ք ժողովրդին ու քշվեցիք:

Դուք պարտվեցիք, որովհետև դա պատմության վճիռն է... Դուք պարտվեցիք, որովհետև բարոյապես պարտված եք ձեր քանդված ու գլխատված բուն հայրենիքում՝ Ռուսաստանում, որովհետև ձեր ամեն մի քայլը, ամեն մի գործը բարոյական մի պարտություն է, էթիկական մի անձնասպանություն:

Սյունիքը հաղթեց ձեզ, որովհետև ձեր վարձկան զինվորների տեղ ուներ երկու հարյուրի չափ ուխտված վաշտապետներ, նույնքան Դավիթ-բեկյան գայլավաշտեր, միայն ձեզնից խլած երկու հարյուրի չափ գնդացիր, թշնամու գերեզման՝ խոր ձորեր, իրեն ապաստան՝ բարձր լեռներ, ռազմամթերք և ծով սեր դեպի հայրենիքը, գրանիտե հավատ, որ ապստամբած ժողովրդին միայն աստված կարող է հաղթել:

Մաքիավելին չի օգնի ձեզ:

Ձեր լավագույն զենքը՝ կարմիր սուտը, դրախտի պատրանքը, միայն մեկ անգամ հաջողություն կբերի ձեզ:

Խոստացած դրախտի տեղ՝ դժոխք, հազար ու մի բարիքների փոխարեն՝ սով, սիֆիլիս, արյուն, արցունք ու կոտորած, Քեմալ ու քեմալիստան բերիք հայ աշխատավորության համար...

Ց՛գրություն.

Ինքնավար Սյունիքի ապարապետ՝ ՆԺԴԵՀ
24.02.21թ. Գորիս

Գարեգին Նժդեհ

ԻՄ ՊԱՏԱՍԽԱՆԸ

(Հատված)

1937թ. Սոֆիա:

Հակառակ Հանրապետական Հայաստանի կառավարության և Մոսկվայի ներկայացուցիչ Լեգրանի միջև կնքած պայմանագրին, որով Զանգեզուրը թողնված էր թաթար Ադրբեջանին, իմ ժողովրդական բանակը, զենքի ուժով, Խորհրդային իշխանությանը պարտադրեց իր կամքը՝ Սյունիքի կցումը Հայաստանին:

...Ռուսաստանը մեր լեռնաշխարհում տասնյակ հազարներով սպանվածներ, գերիներ և մեծաքանակ ռազմավարներ թողեց...

...Մի ամբողջ տարի Սյունիքը հեգնեց Մոսկվայի Անդրկովկասյան ուժերը, նրան պատճառելով ծանրածանր կորուստներ, ջղայնություն և ամոթանք:

...Բոլշևիկները պայքարում մարդկայնություն և բարոյականություն չեն ճանաչում, նրանց համար գաղափարական հակառակորդներ չկան, կան միայն դասակարգային թշնամիներ...:

...Խորհրդային Ռուսաստանը,– ժամանակին կշեփորեր Զանգեզուրի «Կոմունիստ» հայատառ թերթը,– պետք է պաշտպանի և պաշտպանելու է Տաճկաստանի ազատագրական շարժումը: Դրա համար էլ Խորհրդային Ռուսաստանը պետք է ունենա մշտական կապ Տաճկաստանի հետ, որի ճանապարհը Զանգեզուրն է՝ Նախիջևանի վրայով»:

Հայաստանի խորհրդային կառավարությունը Կարինյանի գլխավորությամբ պատգամավորություն է ուղարկում Նժդեհի մոտ և Զանգեզուրը Խորհրդային Հայաստանին միացնելու պայմանով առաջարկում է զենքը վայր դնել:

1921 թ. հունիսի 3-ին Նժդեհը համաձայնվում է զենքը վայր դնել, պայմանով, որ Զանգեզուրը հայտարարվի Հայաստանի անբաժան մաս:

Հունիսի 13-ին Հայաստանի կառավարությունը հանդես է գալիս հայտարարությամբ, որով հավաստիացնում է Նժդեհին, թե այդ պահանջը կբավարարվի:

Միայն դրանից հետո Լեռնահայաստանի կառավարությունը որոշում է անցնել Պարսկաստան:

1921 թ. հուլիսի 10-ին Նժդեհն անցնում է Արաքսը...

Զորս ամիս մնալուց հետո՝ մեկնում է Եգիպտոս, այնտեղից՝ Բուլղարիա:

Նժդեհը իրեն հատուկ եռանդով ու հավատով լծվում է գաղափարախոսական աշխատանքի: Գրում և հրատարակում է մի շարք աշխատություններ («Էջեր իմ օրագրեն», «Որդիների պայքարը հայրերի դեմ», «Բաց նամակներ հայ մտավորականությանը», «Ցեղի ոգու շարժը», «Ամերիկահայություն. ցեղը և տականքը», և այլն), որոնք նշում են ժողովրդի գոյատևման ճշմարիտ ուղին:

1932 թ. Նժդեհը հրավիրվում է Ամերիկայի Միացյալ Նահանգներ, որտեղ լայն գործունեություն է ծավալում, դառնալով ամերիկահայ կյանքի առանցքը:

Նրա նախաձեռնությամբ, 1933 թ. Ամերիկայում ծնունդ առավ Ցեղակրոն շարժումը, որի արագ ծավալումն ու առաջ բերած խանդավառությունն ապացույց են, որ Ցեղակրոնությունը նոր սերնդի համար փրկության գոտի է՝ միջոց, որով հնարավոր է վերականգնել ժողովրդի ոգին՝ հետևաբար և ապահովել գոյատևումը:

1934 թ. հունիսին Բոստոնում բացվեց Ցեղակրոն ուխտերի առաջին համագումարը, որին մասնակցում էին քառասունից ավելի կազմակերպություններ: Ընտրվեց Կենտրոնական վարչություն՝ Աստուր Կիրակոսյանի ղեկավարությամբ:

Շարժումը տարածվեց ոչ միայն Ամերիկայում, այլև Կանադայում, Եվրոպայում, նույնիսկ՝ Հնդկաստանում:

Սակայն գտնվեցին ուժեր, որոնք ամեն միջոց ձեռնարկեցին

այն խափանելու և Նժդեհին հեղինակազրկելու համար:

Այդ նպատակով կազմակերպվում է Դուրյան արքեպիսկոպոսի սպանությունը, որի մեջ փորձում են մեղադրել Նժդեհին: Ստիպված նա թողնում է Ամերիկան և 1934 թ. նոյեմբերին անցնում Բուլղարիա: Սահմանագլխին ձերբակալվում է, սակայն հանցանշաններ չլինելու պատճառով ազատ է արձակվում:

Սովետական զորքերի կողմից Բուլղարիայի գրավումից հետո, Նժդեհը ձերբակալվում է 1945 թ. սկզբներին (ավելի ճիշտ՝ այնպիսի իրավիճակ է ստեղծվում, որ ինքն է հանձնվում բուլղարական համայնավարներին) և տարվում է նախ Մոսկվա, հետո ուղարկվում Երևան:

Բանտարկյալը հարցաթերթիկում իր մասին տվել է հետևյալ տեղեկությունները.

Տէր - Յարութիւնեան Գարեգին Եղիշի, ծն. 1886թ., Նախիջեւան, Երեւանի նահանգ:

Մշտական բնակավայրը մինչեւ ձերբակալուելը- Սոֆիա, Յար Բորիսի փող. 92:

Զբաղմունքը եւ մասնագիտութիւնը- Լրագրող:

Աշխատանքի վերջին տեղը - Խմբագրութիւն «Ռազմիկ» թերթի, «Սվետոգլաս» ամսագրի:

Պաշտօնը- Լրագրող:

Ազգութիւնը -Հայ:

Քաղաքացիութիւնը- Բուլղարիա:

Կուսակցությունը -Անկուսակցական:

Կրթութիւնը-Բարձրագոյն:

Սոցիալական ծագումը-Հոգեւորականի որդի:

Դատուածութիւնը-Չունեմ:

Ժամանակաւոր կալանքներ-Չունեմ:

Ընտանիքի կազմը-

Հայրը-Տէր Յարութիւնեան Եղիշ Սահակի, մահացել է 1888թ:

Կինը-Տէր Յարութիւնեան Էփիմէ Սուքիասի, ծն. 1902. ք. Սոֆիա, փող. Յար Բորիսի 92:

Երեխաները- Տէր Յարութիւնեան Սուքիաս, ծն. 1902թ.:

Եղբայրները-քոյրերը

– Տէր Յարութիւնեան Լևոն Եղիշի, ծն. 1884 թ., որտեղ է ապրում՝ չգիտեմ:

– Տէր Յարութիւնեան Աննա Եղիշի ծն. 1881 թ., որտեղ է ապրում՝ չգիտեմ:

– Տէր Յարութիւնեան Յոկինա Եղիշի ծն. 1880 թ., որտեղ է ապրում՝ չգիտեմ:

Բանավոր դիմանկար

Հասակը- Բարձր (171 սմ):

Կազմուածքը-Գէր:

Ուսերը-Հորիզոնական:

Վիզը-Կարճ

Աչքերի գույնը- Մուգ շագանակագոյն:

Դեմքը-Ուղղանկիւն:

Ճակատը-Բարձր:

Շրթունքները-Հաստ:

Կզակը-Ուղիղ:

Երբ է բանտարկվել-*1944 թ. հոկտեմբերի 11-ին. հրաման թիւ 476:*

Հարցաքննությունը տևում է 1945 թ. սկզբներից՝ մինչև 1948 թ. աշունը: Դատապարտում են 25 տարվա ազատազրկման: Երեք տարի մնում է Երևանի բանտում, խիստ մեկուսացված պայմաններում և միայն վճիռն արձակելուց հետո տարվում է Ռուսաստան՝ Վլադիմիրի բանտը:

1952 թ. Նժդեհին նորից բերում են Երևանի բանտը, ուր մնում է շուրջ 1 տարի, մինչև Ստալինի մեռնելը: Այդ ընթացքում Հայաստանի ՆԳ մինիստրը իր մեքենայով Նժդեհին հանում է քաղաքը դիտելու:

Վ.Պ.Կուզմենկո

1951սեպտեմբեր, Վլադիմիր

Գարեգին Նժդեհ

ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԸ

Տեսա մի բուռ հող թաքցրած
Ալեհեր բանտարկյալի մոտ.
Իր բանտախուցն էր նա բերել
Հայրենի երկրից մի բեկոր:

Պահում էր որպես բալասան
Եվ հաճախ խոնարհվում նրան.
– Անթեռսը Ձեզ կնախանձեր,
– Ասացի մի անգամ նրան:

– Շատ եմ մաքառել, սիրելի՛ս,
Պայքարել քառասուն տարի,
Եվ ահա... այսքանն է, – ասաց,
– Իմ բաժին հողը հայրենի:

Տխուր ու դաժան պատերով
Բանտային մեր խուցը մի օր
Խուզարկու զինվորներ մտան
Եվ հողը այդ խլեցին մի բուռ:

Տեսա արցունքները նրա՝
Մանկան պես արտասվող ծերունու.
Ինչ ասել է հող հայրենի,
Որին կապվել ես ողջ կյանքով:

Ստալինից հետո Նժդեհին նորից ուղարկում են Սիբիր, Բայկալ լճի հյուսիս-արևելքում գտնվող Տայշետ քաղաքի բանտը:

Նժդեհը մահանում է Տայշետում, 1954 թ.:

Կտակի համազոր գրությամբ նա խնդրել էր մահից հետո իր մարմինը, շորերը, թղթերը, ժամացույցը եղբորը հանձնել, և թաղվել Հայաստանում:

Բոլշևիկները եղբորը հանձնեցին միայն շորերն ու ժամացույցը:

1924 թ. հունիսի 29-ին Սոֆիայի գերեզմանատանը Քրիստափոր Միքայելյանի գերեզմանին, հուշարձանի բացման առթիվ Նժդեհը, ի միջի այլոց, ասաց մեր ժողովրդի մասին.

...Գողգոթայեն, Արևմտահայաստանեն կբարձրանար աղաղակը հավատավառ խաչոցյալի օգնություն, փրկություն...

Մարդկությունը կպատասխաներ.

— Ծարա՞վ ես, արբ արցունքդ...

— Կոտորվու՞մ ես, դու ես մեղավոր, որովհետև թույլ ես...

— Շղթաների մեջ ծնվում, ապրում և մեռնու՞մ ես, դու ես մեղավոր, որովհետև թույլ ես...

— Կողոպտվու՞մ ես, դու ես մեղավոր, որովհետև թույլ ես...

— Կախ է գլու՞խդ, խոնարհ է ճակատդ, մեջքդ երկտակվա՞ծ, պատվիդ տերը չե՞ս, առանց գաղափարի և վեհության սողու՞մ ես միայն, դու ես մեղավոր, որովհետև թույլ ես...

Ի՞նչը քեզ մղեց միամտորեն հավատալու ցնորապաշտ նազրովեցու* վտանգավոր խոսքին:

Ո՞վ ասաց, որ թույլը մեղավոր չէ, որ թույլ է, և որ ուժեղը երաշխիք չունի, որ ուժեղ է:

Դու խաբված ես, ժողովուրդ, դու զոհն ես քրիստոնեական բարոյախոսության, որ շարունակվում է մնալ որպես ներկ և շպար, որպես քող և դիմակ ուժեղների հոգու համար:

*Նկատի ունի Հիսուս Քրիստոսին:

Թուլությունը ծնված է սնուցանելու ուժը:

Ու՛ժն է ծնում իրավունքը:

Ուժեղի՛ն է աշխարհը, հայրենիքը, ազատությունը և ամեն ինչ:

Ուզու՞մ ես վերջ տալ Գողգոթայիդ, ուզու՞մ ես վերջ տալ գերմարդկային տառապանքիդ, որի վրա ամեն օր մեռնում ես:

Ուզու՞մ ես փրկվել:

Եղիր ուժե՛ղ, քանի որ թույլերը բարեկամ չունեն աշխարհի վրա: Իսկ ուժիդ ապացույցը տալու համար, ցույց տուր երկու բան՝ առաջինը, որ գիտես մեռնել գիտակցորեն՝ կռվում, գործոն և իմաստալի մահով, երկրորդը՝ որ գիտես մեռցնել:

Ապացուցեցի՞ր այդ, ունեցա՞ր այդ երկու առաքինությունները, մասնավորապես առաջինը՝ փրկված ես:

...Վառեցե՛ք մեր ժողովրդի հոգու մեջ ինքնահարգանքի զգացումը և նա կարժանանա մարդկության հարգանքին:

Մարդկային պատմությունն այլ բան չէ, քան պատմությունն ազգերի արժանապատվության համար մղված պայքարի...

Գարեգին Նժդեհ

ԲԱՑ ՆԱՄԱԿՆԵՐ ՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ

Քննադատել՝ հոգեպես տաղտալի է նշանակում:

Ա.

Վերջին տասնամյակի դեպքերը, արևմտահայերի կոտորածը, նրա կորուստը, ռուս-տաճկական նոր սահմանագծումը, սրա հետևանքով Մերձավոր Արևելքում մեզ համար առաջ եկած ծանր պայմանները, հայրենազուրկ հայության տագնապալի վիճակն արևմտյան գաղութներում և այլն, մեզ դրին նոր իրողությունների առաջ:

Ցնցվեց մեր կյանքն իր էական բոլոր կողմերով:

Հսկայական փոփոխություններ առաջ եկան, ուշագրավ երևույթներ:

Եվ հանրածանոթ իրողություն է, որ այս դեպքերը զարգացան բոլորովին հակառակ մեր ցանկության, արտաքին գործոնների թելադրմամբ:

Մենք անզոր եղանք ուղղություն տալ դրանց:

Դա նշանակում է, որ ներքուստ մենք պատրաստ չէինք դեպքերի իմաստը հասկանալու, դրանք մեր քաղաքական ձգտումներին հարմարեցնելու:

Մենք հոգեբանական մի սարսափելի թերություն ունենք և զարմանալի չէ, որ հետևանքը այսօրվա անմխիթար կացությունն է:

Այս կացությունը առանձնապես ողբերգական բնույթ է ստանում այն պատճառով, որ մինչ մի կողմից ժողովուրդը հասունանում է, նրա մեջ անկախության գաղափարը դառնում է

հոգեբանություն, մյուս կողմից նա տկարացել է, փոքրացել, արևելքի պայմաններում ինքնուրույն պետություն ստեղծելու համար, թվական ուժի տեսակետից, նրա կարողությունը դարձել է հարցական:

Բնական է, որ հայոց պետության կորիզը պիտի լինի Խորհրդային Հայաստանը՝ իր 28.000 ք.կմ տարածությամբ և մոտ մեկ միլիոն բնակչությամբ:

Բարոյանյութական առաջընթաց. ասել է՝ ներուժ ինքնապաշտպանության:

Այլևս ոչ ոք չի հավատում, մեր ժողովրդից զատ, թե կարելի է կանգնեցնել առաջընթացի հաղթական կառքը՝ գետնին փռված պարտվածների և թույլերի հառաչանքներով: Այլևս ոչ ոքի համար գաղտնիք չէ, թե պետությունները բնական հակառակորդներ են, որոնցից ամեն մեկը ձգտում է տարածվել, ուժեղանալ, շահել իր հարևանների հաշվին:

Հարձակվում է, ով իրեն պատրաստ և ուժեղ է զգում հարձակվելու՝ լավագույն պաշտպանությունը համարելով հարձակողականությունը:

Հարձակվում է նա, ով իր դիմաց թուլություն է տեսնում: Ամեն մի ժողովուրդ, երկաթե անհրաժեշտությունից դրդված, անում է այն, ինչ անում են բոլորը:

Թույլը սարսափում է, չլինի կուլ գնա ուժեղին, իսկ ուժեղն արթուն հսկում է, որ իր հակառակորդը չգերազանցի իրեն: Խաղաղասիրաշտ և անարի ժողովուրդները տկարանում և դառնում են որսը նրանց, որոնց ուժն աճում և ծավալվում է անդիմադրելիորեն:

Հասկանանք և հետևյալը.

Հանուն խաղաղությա՛ն չեն կնքվում պայմանագրերը, այլ՝ հանուն պետությունների կենսական շահերի:

Պետությունները հաշվի են առնում միջազգային իրավունքը և հարգում իրենց ստորագրած պայմանագրերը, քանի դեռ շահում են գոյություն ունեցող դրությունից:

Սակայն հենց որ մի այլ դրություն, հենց որ մի ուրիշի թղթե բարեկամությունը իրենց ավելի շահավետ թվաց, նրանք թքում են պայմանագրերի վրա, լքում իրենց նախկին զինակիցներին և սպառնում աշխարհի խաղաղությանը:

Ա՛յս է իրերի իրական դրությունը, ա՛յս է աշխարհը, այլ ոչ այն, որով օրորվում և օրորվում է մեր սենտիմենտալ ազգը՝ իր սխալ ու խաբուսիկ պատկերացումով:

Բ

Ոչ աշխատասեր և նյութական ապագայի համար այդքան ձիրքերով օժտված ժողովուրդ, զարմանալիորեն իդեալիստ է դեպի խաղաղությունը, աղոթում է նրա արևին և չի հավատում, թե պատերազմի ձմեռ կգա:

Սակայն պատերազմը գալիս է հակառակ մեր ցանկության, քանի որ հակամարտությունն է կառավարում աշխարհը:

Ա՛յս ճշմարտությունը չի ուզում հասկանալ մեր ժողովուրդը՝ դրա համար էլ խաղաղ տարիների քրտնաջան աշխատանքով կուտակած բարիքները պատերազմի օրերին տալիս է թշնամուն, ինքը՝ մնում մուրացկան, օտարի ձեռքին նայող:

Մենք կուզենայինք, որ մեր ժողովուրդը վերջապես ըմբռներ, որ խաղաղությունը հավիտենական չէ, այլ միայն ժամանակավոր զինադադար:

Խաղաղությունը նույնիսկ նորմալ վիճակ չէ, խաղաղություն չկա՛ մեր երկրագնդի վրա և չի կարող լինել մարդկային պատմության մեջ:

Պատերազմը ժողովուրդների կյանքում անխուսափելի պահ է. դա չի մղվում սոսկ գիտակցական հաշիվների համար, դա մեկն է մարդկային առաջընթացի ամենաբուռն արտահայտություններից: Պատերազմը բնազդն է, այդ է պատճառը, որ մարդիկ պատերազմում են գրեթե ակամայից, հակադրվելով

գիտակցության պահանջներին, բարոյական օրենքներին և հետևանքներին: Գիտակցությանն անդրադառնում են հաշվեհարդարից, հաղթությունից կամ պարտությունից հետո:

Խաղաղությունը մարդկության համար ոչ այլ ինչ է, քան հոգնածությունը:

Պարտվում է այն ժողովուրդը, որ շուտ է հոգնում:

Պատերազմի է ձգտում նա, ով կազդուրված է:

Պատերազմը առողջի, ուժեղի ցանկությունն է, ինչպես խաղաղությունը՝ թույլի, հոգնածի բաղձանքը, երազը:

Անշուշտ, խաղաղությունը հոգնած ժողովուրդների համար բարիք կլիներ, եթե հաղթողները չչարաշահեին խաղաղությունը:

Խաղաղության չարաշահումն ավելի է աղետավոր պարտված ժողովուրդի համար, քան նույնիսկ պատերազմը:

Պատմության մեջ քիչ են կոտորածային ոչնչացումների դեպքերը, մինչ հսկայական ժողովուրդներ աննպաստ խաղաղության մեջ, առանց արյունոտ հարվածների, անհետացել են դանդաղորեն:

Ներկա Հայաստանը կազմում է հազիվ մեկ տասներկուերորդ մասը մեր պատմական հայրենիքի: Դա հայրենիք չէ, այլ հայրենի անկյուն:

Այժմյան իր սահմաններում նա չի կարող տեղ տալ ի սփյուռս աշխարհի ցաքուցրիվ հայրենազուրկ հայության, որի վիճակն աղետավոր է երկու տեսակետից. Թուրքիայում՝ կոտորածի, այլ երկրներում՝ խաղաղ բնաջնջումի, ձուլումի:

Հայրենի անկյուն և թափառական ժողովուրդ...

Մի ճակատագիր, որ տատանումի և երկմտության է մատնել մեր ժողովրդին, այսինքն՝ ազգային հոռետեսության: Իսկ վա՛յ այն ժողովրդին, որ վարակված է այդ ախտով, այդպիսին կանգնած է կործանման եզրին:

Ջսարսափենք, բայց և առանց սին պատրանքների և ավելորդ նախապաշարումների ընդունե՛նք այդ դառը ճշմարտությունը. մեր ապագան վտանգված է:

Ֆ

Անիմաստ կլիներ ընդունել այդ ճշմարտությունը, եթե այն մեզ միայն սարսափի պիտի մատնի, այլ ոչ ցնցի:

Ցնցումները ժողովուրդների կյանքում փրկության լծակներ են և անբարոյական ու կորած է մի ժողովուրդ, որ հանուն իր գոյության անընդունակ է խոր ցնցումների:

Հոգեկան ցնցումների ընդունակ ժողովուրդները միայն կարող են վերանորոգվել:

Աղետավոր չէ կորուստներ ունենալը, շատ ավելի աղետավոր է վերագնահատումների անընդունակ լինելը:

Առանց վերագնահատումների անիմաստ է որոնումը, իսկ առանց որոնման մեռնում է ոչ միայն ժողովրդի միտքը, այլ նաև ինքը՝ ժողովուրդը:

Վերագնահատման պետք է ենթարկել ոչ միայն դեպքերի առարկայական բնույթը, այլ նաև, և գլխավորապես, մեր հոգևոր կյանքի ենթակայական տարրերը:

Պիտի որոնե՛նք, փնտրե՛նք, գտնե՛նք մեր դժբախտությունների իրական պատճառները, ճանաչենք մեր իսկական վերքերը, ախտորոշենք մեր ժողովրդի հոգին, որից հետո միայն խոսք կարող է լինել բուժումի մասին:

Ո՞վ է մեղավոր. երկրի աշխարհագրական դի՞րքը, քրիստոնեական Եվրոպա՞ն, մահմեդական Ասիա՞ն, ճակատագի՞րը...

Բոլորը, բացի մեզնից, կտրամաբանի մեր անուղղելի քաղքենամտությունը:

Այս մտայնությունը... գանգատվում, դժգոհում, անիծում է ճակատագիրը և կրկնում անվերջ, թե ընկած ենք աշխարհի մեծ ճանապարհների վրա...

Այստեղ կա մի խղճուկ ճշմարտություն, բայց դրա փոխարեն՝ հոյակապ առավելություններ:

Չէ՞ որ մեր բարձրավանդակն անառիկ է, մեր լեռները՝ մեկ-մեկ անխոցելի պատնեշներ:

Անտեսել այս իրողությունը և լոկ ողբալ ճակատագիրը՝ ոչ այլ ինչ է, քան թույլի, վախկոտի ինքնարդարացում, տկարի հոգեբանություն:

Այստեղ ոչ միայն նախապաշարում կա, այլ նաև առաքինության պակաս:

Անարդար կլիներ հավատալ հիվանդին, երբ սա գանգատվում է աշխարհից:

Աշխարհը պատկերացում է, իսկ պատկերացման աղբյուրը՝ սեփական հոգին:

Հոգու հիվանդություն ունեն այն ժողովուրդները, որոնք բողոքում են սեփական հայրենիքից:

Գուցե, իրո՛ք, աշխարհի ամենաանառիկ բարձրավանդակներից մեկի վրա բազմած ժողովուրդն անարժան է իր ճակատագրին, բայց ճակատագիրը երբեք ապերախտ չէ:

Լիներ հզոր՝ աշխարհի այդ հոյակապ կամրջի վրա հրաշքներ կգործեր հայությունը:

Տկար էր, տկարացավ՝ դարձավ անարժան իր բնաշխարհին:

Հիվանդ, դժբախտ ժողովուրդ, որ մինչև հիմա երկու առաքինություններ է ունեցել՝ իր դժբախտությունները վերագրել արտաքին աշխարհին և փրկությունը հուսալ արտաքին ուժերից:

Այստեղ է պատճառը մեր տարօրինակ հավատի և խանդավառության, երբ օտարը որևէ խոստում է կատարում, և նույնքան տարօրինակ հիասթափության ու հուսալքումի՝ երբ դրժում է իր խոստումները:

Աղետալի ինքնաժխտում, որ մեզ հոգեբանորեն այնքան անարժեք է դարձրել, որ անգամ մեր դժբախտությունների մեջ մեղքի որոշ բաժին էլ մեզ տալը զլանում ենք:

Մենք այնքան անարժեք ենք թվում մեզ, որ չենք կարծում, թե քաղաքական աշխարհում որևէ բանի պատճառ, անգամ դժբախտության, կարող ենք և մենք լինել:

Տարօրինակ է,— տրամաբանում է մեր քաղքենամտությունը,— մեր հավատը դեպի Եվրոպան՝ կույր զգացում էր, մեր

ներողամտությունը դեպի քրիստոնյա թշնամին՝ միամտություն և մենք ջարդվեցինք ու լքվեցինք:

Ոչինչ տարօրինակ չկա, ջարդվեցինք և լքվեցինք, որովհետև Եվրոպացու հոգեբանությանը բոլորովին անծանոթ էինք:

Դեպի Եվրոպան մենք ունեինք քրիստոնեական զգացում և շնորհիվ մեր միստիցիզմի՝ մեր ազգային հիվանդության, մեր սեփական տրամաբանությունները վերագրում ենք եվրոպացուն և ամենախոր կերպով հավատում, որ քրիստոնյա ժողովուրդները նույն զգացումն ունեն մեր նկատմամբ, թե բոլոր պատերազմները մղվում են հանուն մեր փրկության:

Այս ինքնախաբեությունը մեզ մղեց քաղաքական մուրացկանության և քանի որ թույլ էինք՝ լալկանության:

Մուրացկանություն և լալկանություն՝ մի ամբողջ ժամանակաշրջանի հոգեբանություն, քաղաքական մեր միակ զենքը: Լալկանությունը, սակայն, ապացույց է հոգևոր տհասության կամ վախկոտության:

Մուրացկանությունը զզվելի է ընդհանրապե՛ս, իսկ քաղաքական մուրացկանությունը՝ առավել:

Մուրացկանին օգնում են ոչ այնքան կարեկցանքից, այլ շատ հաճախ՝ զզվանքից:

Քաղաքականության մեջ կարեկցանք չկա, զզվանք՝ շատ քիչ:

Անորակելի է մուրացկանությունը քաղաքականության մեջ:

Աներես մուրացկանի եսականությունը բնական է համարում, որ մարդիկ, թեկուզ ամենանվաստ, գթան իրեն: Է՛լ ավելի աներես է մուրացկանը և պահանջկոտ, եթե նա նաև հաշմանդամ է:

Մուրացկանի եսամոլությունն ու հաշմանդամի պահանջկոտությունը դարձել են մեր հոգեբանությունը:

Հոգեբանական այս երկու հատկանիշներն ավետարանի

ներշնչմամբ ստացել են քաղաքական իմաստության, դիվանագիտական զենքի բնույթ:

Քրիստոնեական հոտի համար չքնաղ առաքինություն. սակայն՝ միայն հոտի:

Այսօր մենք անիծում ենք քաղաքական բարերարներին, սակայն մոռանում, որ մուրացկանին, հաշմանդամին անկելանոց են տալիս, ոչ անկախ հայրենիք:

Այդպիսին էինք, երբ քրիստոնեական հոտ էինք:

Այսօր հավակնություն ունենք մեզ քաղաքական ուժ համարելու, բայց չենք ազատվել հոտային հոգեբանությունից, որը թափանցել է քաղաքական հոսանքների մտայնության մեջ և դրանք կառչել են օրիենտացիաների գաղափարին:

Ճիշտ է, նկատելի է մի քայլ առաջ՝ քրիստոնեական նախապաշարումից մինչև օրիենտացիա, սակայն այդ բոլորի մեջ կա մի խոստովանություն, այն է՝ թե մեր ժողովրդի որոշ տարրերը քաղաքական կյանքի համար թերևս պատրաստ չեն, խակ, անուժ, անարի և, ապա բոլորովին չազատագրված նախկին մտայնությունից:

Հայ քաղաքական մտքի դեգերումների մեջ ներկայիս դրությունը մտքի կիսանկախ դրություն է՝ կես քայլ առաջ:

Այս շրջանը կարճ ժամանակի մեջ այնքան աղետավոր հետևանքներ ունեցավ և թվում է, թե շարունակում է էլ ավելի մթագնել, արյունոտել մեր ճակատագիրը, պառակտելով, ներքուստ թուլացնելով մեր ժողովուրդը:

Մեր մի շարք հոսանքների օտարահակ տրամադրության, մեր ինքնավստահության պակասի և մեր մենակությունից սարսափելու շնորհիվ, մեր ժողովուրդը, որ այլ դեպքում պիտի կարողանար իր ինքնապաշտպանության գործը կազմակերպել հաջորդաբար՝ դարձավ կամազուրկ մի ամբոխ ու պարտվեց:

Մեր պարտությունները հոգեբանական էին, պարտվեցինք ոչ թե նրա համար, որ թվապես ու տեխնիկապես թույլ էինք, այլ որովհետև այդպիսին էինք հոգեպես:

Օտարի հովանու տակ հայը եզակի և ռազմաշունչ կռվող է, իր սեփական դրոշի տակ՝ հաճախ անարի, պարտվողական:

Կարսում մենք ունեինք բնական ու արհեստական դիրքերի գերազանցություն, թվական առավելություն, ավելի լավ պարենավորում, բայց և այնպես, պարտվեցինք, որովհետև չունեինք վճռական մենակի հոգեբանություն, ինքնուրույն կերպով որևէ բան անելու հավատ: Պարտվեցինք, որովհետև մենք միայն, որպես ազգ, մասամբ գիտակցեցինք մեր պարտականությունը, մասամբ հասկացանք աշխարհի իրական պայմանները, փորձեցինք ոտքի կանգնել, բայց ոչ ամբողջովին և ոչ մեր ներքին ուժերի դրդումով:

Պարտվեցինք, որովհետև մեր ցեղի ոգու բովանդակ ուժերն օգտագործելու փոխարեն՝ հովանավորներ փնտրեցինք:

Վաղը կկորչենք ի սպառ, եթե մնացինք այս մտայնությամբ: Կփրկվենք, եթե ազատվենք նախապաշարումներից, եթե փորձենք ոտքի կանգնել, սակայն ոչ արտաքին դրդումով, օտարների ցանկությամբ, այլ մեր ներքին բնական, անզուսպ մղումով:

Այսպիսով միայն կազատագրվի և կազատվի որևէ ժողովուրդ:

Այդ ճանապարհին, եթե եղան օժանդակիչ ուժեր, պիտի օգտագործենք որպես զինակից, բարեկամ:

Օգտագործել, և ոչ աղերսել. ընբռնե՞ց հայն այս տարբերությունը՝ կանգնած է փրկության ուղիղ ճամփին:

Մինչև հիմա բարեգործներ և հովանավորներ ենք փնտրում,— հիվանդ ենք, թույլ և տհաս մտահոգեպես:

Սրանից հետո զինակիցների մասին պիտի խոսենք, որովհետև հոգով առողջանալ, արիանալ ենք ուզում:

Զինակիցներ և ոչ բարերարներ, այդ նշանակում է, թե հայն արի է և ինքնապաշտպանվելու ընկեր է փնտրում: Քաջի իրավունքն է դա, նրա, ով վճռել է մենակ հաղթել և զինակցում է միայն ավելի հեշտ հաղթելու համար:

Արի ժողովուրդ, սրան են միայն զինակցում, ձեռք մեկնում պետությունները: Հասկանանք և այս ճշմարտությունը:

Փրկվելու համար պետք է նաև արիանալ, այսինքն՝ հաղթահարել սեփական սարսափը:

Սարսափից ազատագրված հոգին միայն ընդունակ է աշխարհն առարկայորեն տեսնել, պատկերացնել:

Երկյուղը միշտ էլ ճիվաղներ է ստեղծում՝ մտացածին հրեշներ:

Ժողովուրդները հաճախ մեռնում են հենց այս ճիվաղներից:

Քաղաքական գիտակցության թերին, անինքնավստահություն, սարսափի հոգեբանություն. ահա մեր եռագլխյան թշնամին:

Եվ մինչև որ չկարողանանք այս ներքին թշնամին սպանել, անկարելի է, որ արտաքին թշնամուց ազատվել կարողանանք:

Ասված է. «Մարդս մի բան է, որ պիտ հաղթահարվի»:

Այսպես, մինչև որ հայ մարդը չկարողանա ինքզինք հաղթահարել՝ սպանել սարսափի անասունն իր մեջ, ներշնչվել նոր մտայնությամբ, հոգեփոխվել, կարճ՝ մինչև որ չդառնա արի և արիապաշտ ժողովուրդ՝ անհնար է, որ նա կարողանա ոչ միայն քաղաքականապես ազատվել, այլ և ազգովին ոչնչանալու վտանգից խուսափել:

Արևելքում մեզ համար ստեղծված պայմանների մեջ կարող է ապրել արի և արիապաշտ հայությունը, բայց ոչ այսօրվանը:

Պատերազմների մեջ հաղթանակում է արին. այս նշանակում է՝ հաղթում է նա, ով սանձահարել է իր սեփական սարսափը, ով թշնամու հետ չափվելուց առաջ կառուցել է հաղթանակի շենքն իր հոգում:

Մեքենական կոպիտ ուժերի բախումը չէ պատերազմը, այլև ժողովուրդների հոգեկան դարբինը:

Դեռ ավելին՝ պատերազմը ժողովուրդների աստվածների գոտեմարտն է: Տեխնիկան՝ զենքն է, միջոցը հոգին, պատերազմի դարբինը:

Զենքն անհրաժեշտ է, սակայն արի բազուկների մեջ:

Պայքարի պատրաստվող ժողովուրդները նախ սպառազինվում են հոգեպես:

Անտեսվա՞ծ է այս պայմանը՝ անխուսափելի է պարտությունը...

Ինքնապաշտպանություն՝ ահա թե ի՞նչ են թելադրում ժամանակն ու առաջադիմությունը:

Ինքնապաշտպանություն՝ ահա մեր կրոնը:

Ինքնապաշտպանություն՝ ահա միակ միջոցը, որ ապահովում է ոչ միայն ժողովրդի, այլ նաև նրա աստվածների գոյատևումը:

Բնավ եսամոլություն չէ, երբ մի ժողովուրդ իր ինքնապաշտպանությունը հայտարարում է իր կրոնը:

Ինքնապաշտպանությունը ոչ միայն բնական իրավունք է, այլ առաջնակարգ պարտականություն ամբողջ մարդկության և բնության հանդեպ ընդհանրապես:

Ժողովուրդները ապրում են իրենց, ստեղծագործում մարդկության համար:

Ժողովուրդներն ստեղծագործելու պարտականություն ունեն՝ հետևաբար և ապրելու իրավունք:

Մի ժողովուրդ, որ անընդունակ է ինքնապաշտպանության՝ զուրկ է տարրական առաքինություններից, առաքինություններ, որոնց չափանիշը ինքնապաշտպանության համար ցուցահանված ընդունակությունն է միայն: Զու՞րկ է մի ժողովուրդ ինքնապաշտպանության ընդունակությունից՝ զուրկ է գոյության բարոյական իրավունքից:

Աղերսում էինք կյանքի, գույքի, պատվի՝ ապահովության, ոչ միայն տկար էինք, զուրկ առաքինությունից:

Ժողովուրդների կյանքը բռնավորների շնորհը չէ, նրանք չեն կարող ողորմությամբ ապրել և պետք չէ ապրեն:

Մակաբույծ է մի ժողովուրդ, եթե իր ինքնապաշտպանության համար հենվում է միայն օտար ուժի շնորհին: Կյանքում

մակաբույծն անբարոյական է, իսկ նմանը տեղ չունի պատմության մեջ:

Առանց զայրանալու ընդունենք և այս ճշմարտությունը:

Ինքնապաշտպանությունը մի ժողովրդի գոյության ներքին ճիգն է: Մինչև հիմա այդ ճիգն արտահայտվեց որպես աղոթք, աղերսանք, մուրացկանություն, հետևանքը՝ հազար և հազար կրավորական զոհեր:

Փտած են մեր հին զենքերը, եղծանված է հին մագաղաթը: Նոր ավետարանի խոսքը պիտի լսենք հիմա, ավետարանը արիության:

Վահագնի հետ պիտի խոսենք հիմա, Աստվածը հին արիական հայության: Նոր սուրբ գիրք պիտի գրվի մեր ժողովրդի համար՝ արիների ավետարանը:

Արիություն՝ սա պիտի լինի մեր սերունդների կոչումը, քանզի այդ բարձր հատկությունն է փրկում ժողովուրդները ֆիզիկական և բարոյական անկումներից, քանզի աստվածային միակ արժեքն է արիությունը, որով ժողովուրդները կգնեն իրենց անկախությունը և կապահովեն զայն:

Արիության պատգամախոսները պիտի դառնան հայ մտավոր և հոգևոր կյանքի բոլոր ղեկավարները:

Եվ դպրոց, և եկեղեցի, և քաղաքական կուսակցություն, և մամուլ, և ապակուսակցական կազմակերպություններ՝ բոլորը, բոլորը պիտի համակվեն նոր մտայնությամբ, պիտի կրկնեն նոր ճշմարտություններ, կրկնեն անվերջ, անդադրում, մինչև որ արիական ինքնապաշտպանության գաղափարը կդառնա ժողովրդական մտայնություն, ազնիվ կիրք, հոգեբանություն...

Դ

Եկեղեցին վերագնահատումի պիտի ենթարկի քրիստոնեական սիրո իր սխալ ընբռնումը, որպեսզի դադարի թուլությունը առաքինություն համարել և սպանել մեր ժողովրդի կամքը:

Քրիստոնեական սիրո խորհուրդը ամբողջ դարեր պատճառ է դարձել մեր ժողովրդի անօրինակ ողբերգության:

Սիրում է նա, ով ուժեղ է, ով հոգու առատություն ունի, ում ուժի բաժակը լցված է հորդելու, թափվելու աստիճան:

Արգասավոր չէ թույլի սերը:

Միայն արին, քաջը, միայն հերոսը կարող է զոհաբերել:

Անընդունակ է թույլը ինչպես սիրո, նույնպես և զոհաբերության:

Մի ժողովուրդ, որ ընդունակ չէ այս երկու առաքինության՝ դիպվածների կպարտի իր գոյությունը:

Մենք առնվազն կարող և հզոր պիտի լինենք, որպեսզի կարողանանք սիրել և զոհաբերել:

Սխալվել, չարաչար սխալվել է մեր եկեղեցին՝ «տընանկ» -ների և «սնանկ»-ների բարոյականություն քարոզելով:

Սրանից հետո այն սիրո և զոհաբերության ընդունակ արի ժողովրդի մասին պիտի խոսի, եթե ուզում է, որ քրիստոնեության հետքերը մնան Փոքր Ասիայում և Հայաստանում:

Ուժեղ և արիական ժողովուրդ, այնպիսին, որ ընդունակ լինի արհամարհել մահը հանուն սեփական գոյության:

Ինքնապաշտպանությունը հայ ժողովրդի՝ ահա հայ եկեղեցու նոր հավատամքը:

Ընդունե՞ց այս ճշմարտությունը, չքարոզե՞ց, չտարածե՞ց ամեն օր այս փրկարար գաղափարը, եկեղեցին իր բոլոր միջոցներով չնպաստե՞ց մեր ինքնապաշտպանության գործին՝ կործանված է:

Մամուլի պարտականությունն է՝ խտացած ճշմարտություններ տալ ժողովրդին:

Նպատակը՝ այս ճշմարտություններով լուսավորել ժողովրդի ուղին դեպի ապագան:

Զունի՞ մամուլն այս կոչումը՝ ավելորդ մակաբույծ է դա և զուր տեղը ժողովուրդները կերակրում են նրան իրենց հաշվին:

Դժբախտաբար որոշ բացառությամբ այսպիսին է մերը, հայկականը:

Լրագրություն և ոչ մամուլ, որ ժողովրդի միտքն իզուր զբաղեցնում է արտաքին եղելություններով, լուրերով, որոնք զգալի արժեք չունեն:

Այս մտայնությունը իշխել է մեր լրագրության մեջ գրեթե իր սկզբնավորման օրից:

Լրագրությունը խանդավառվում է արտաքին բարենպաստ նշաններով, մի դիվանագետի կարեկից ժպիտով, մի անվանի եվրոպացու հայասեր արտահայտությամբ, մի միսիոներական ընկերության հայանվեր ջանքերով, մի խաղաղասիրական կոնգրեսի հայանպաստ բանաձևով, մի պառլամենտական գործիչի զգացված ճառով որևէ հայկական կոտորածից հետո, և վերջապես այնպիսի բաներով, որոնք ժողովուրդների ինքնապաշտպանության կամ փրկության համար ոչ մեկ իրական նշանակություն ունեն:

Եվ այսպես ամբողջ տասնամյակներ... և ոչ ոք է ուզում հասկանալ, որ այդպիսով մեղսակից է դառնում հայկական ողբերգության՝ շեղելով ժողովրդի ուշադրությունն իր փրկության միակ զենքից՝ ինքնապաշտպանությունից:

Եղել են լրագրային արտահայտություններ, հաճախ նույնիսկ ինքնապաշտպանության քարոզ, սակայն այդ բոլորը թերի, ոչ զերծ արտաքին ուժերի հանդեպ ունեցած նախապաշարումներից, հետևաբար ոչ ամբողջովին ճշգրիտ, ոչ օգտակար:

Լրագրություն, որ տասնյակ տարիների ընթացքում չի կարողացել իր ժողովրդի դժբախտության իսկական պատճառները

մատնանշել, հազար և հազար զոհերից հետո մի ընդհանուր ճշմարտություն գտնել և ջանալ այդ ճշմարտությունը զանգվածների հոգեբանությունը դարձնել:

Լրագրություն, որի որոշ օրգանները արտաքին ուժերի հանդեպ ներող են, քծնող, խնկարկող, իսկ ներքուստ՝ պառակտիչ, անհանդուրժող և ամբարտավան:

Լրագրություն, որի որոշ օրգանները ղեկավարվում են փողոցի առաքինություններով կամ տարփողելով մեծ ժողովուրդների ուժն ու հմայքը, վատաբար արհամարհելով սեփականը:

Լրագրություն, որ բորբոքում է թայֆայական կրքեր և ընդունակ չէ մի տարրական ճշմարտություն ըմբռնելու՝ այն է, թե ժողովրդի ինքնապաշտպանությունը մի գործ է, որի մեջ ամեն հոսանքի և ուղղության մարդիկ միակամ պիտի լինեն:

Լրագրություն, որ տարիների խանդավառությունից՝ այժմ հիասթափ՝ այսօր հայհոյում է աջ ու ձախ բոլոր ազգերն ու լեզուները, անընդունակ ըմբռնելու, թե մեղավորը օտարները չէին...

Լրագրություն, որ ամեն օր աղաղակում է, թե հայությունը զոհ գնաց աշխարհակալ ժողովրդների քաղաքականության և անգիտակցաբար խճճվել է դիվանագիտական կնճիռների, դիպլոմատիական ծիծաղելի դիլետանտիզմի մեջ:

Այսպիսի լրագրությունն ավելորդ է:

Ինչպես հայ եկեղեցին, նույնպես և մեր մամուլը պիտի հոգեփոխվի:

Լրագիր մենք շատ ունենք, նույնիսկ ավելորդ, իսկ պետք է վերադաստիարակիչ հրապարակախոսություն:

Հրապարակախոսություն, որ անսխալ կերպով ախտանշի մեր ցեղի հոգսերը և արմատական միջոցներ առաջարկի, որ վերագնահատումի ենթարկի մեր անցյալը և նոր ճշմարտություններ որոնի, որ լուսաբանի մեր ժողովրդի կնճիռները, ի հայտ բերի նրա թաքուն առաքինությունները, որ կռահի իր ժողովրդին

սպառնացող վտանգը և դառնա նրա հոգևոր սպառազինումի ահազանգը:

Մամուլ, որ վերջապես ազատվի օտարահակ մտայնությունից և արիություն քարոզի, որ խլյակների փոխարեն հերոսական ժողովրդի մասին խոսի... Եվ այդպես՝ մինչև որ հայությունը, խրոխտաբար կանգնած իր բարձրավանդակի վրա, կապացուցանե աշխարհին, թե ինքը արի է՝ տեր իր հայրենիքին և ճակատագրին:

Ե

Հրամայողաբար պիտի հեղափոխվեն նաև մեր կուսակցությունները:

Մեր ներքին հակամարտությունները զինակցում են արտաքին թշնամուն՝ ընդդեմ մեր ժողովրդի և երկրին:

Դժվար է հավատալ, թե կուսակցամիջյան այլանդակ պայքարի կատաղությունը բխում է միայն դեպի հարազատ ժողովուրդն ունեցած սիրուց, ժողովուրդ, որի փրկության մասին տարբեր ըմբռնումներ ունեն պայքարող կողմերը:

Միջկուսակցական պայքարի միակ «մարտական միջոցը» պիտի լիներ բարոյական կշտամբումը և ոչ ավելին. ոչ սուտը և զրպարտությունը, իրողության խեղաթյուրումը, կամ այլ բարոյազուրկ ու դատապարտելի միջոցներ:

Մանկորեն միամիտ են այն կուսակցությունները, որոնք ժխտելով բարոյականությունը քաղաքական պայքարի մեջ՝ կարծում են, թե կարող կլինեն բարոյական մաքրություն պահել իրենց շարքերում:

Բարոյականի աղքատություն՝ ասել է բարոյական ուժերի աղքատություն:

Ժողովրդի մի մասի անունից հայհոյել մյուսին՝ հակառակորդին և տղայաբար ժխտել նրա գոյության իրավունքը՝ դեռ չի նշանակում դաստիարակել իր շարքերը:

Անիմաստ և զզվելի է քննադատությունը, եթե ստեղծագործություն չէ դա:

Ով օրն ի բուն զբաղվում է միայն իր հակառակորդի թերությանց քննադատությամբ, նա առնվազն կոմպրոմիսներ է կատարում իր սեփական հոռությունների հետ:

Այդպիսին կարո՞ղ է շահել, բայց շահած կլինի ի հաշիվ իր բարոյական առողջության:

Այդպիսին կարո՞ղ է վնասել իր հակառակորդին, բայց ինքը ոչինչ կշահի:

Ստորությունը մնում է ստորություն՝ անգամ այն դեպքում, երբ դա կատարվում է հանուն ամենանվիրական շահերի, դա նախ բարոյազրկում է և տկարացնում իրենից օգտվողին:

Անվերջ բարի խոսել իր կուսակցության և չար՝ այլոց մասին, և ծիծաղելի է, և անարդար:

Հոգեպես անառողջ է նմանը:

Զարաշահել զանգվածների մութ զգացումները, կույր ատելություն սերմանելով հակառակորդի հանդեպ, նշանակում է ոչ թե ազնիվ պայքար մղել, այլ խուժանավայել:

Այդպիսին չարիք է և իր ժողովրդի, և հակառակորդի համար:

Կույր ատելությամբ հիվանդ՝ մեր կուսակցություններից ոմանք մոռացել են հայ ժողովրդի ինքնապաշտպանության սրբազան գործը, հանուն որի, իբրև թե, կյանքի են կոչված:

Եվ դա կոչում են ժողովրդասիրություն, երբ էապես ժողովրդասպանություն է:

Այո՝ ժողովրդասպանություն:

Մտավոր կարճատեսություն է չհասկանալ, թե անվերջ ու անդադրում վերանորոգություն է կյանքը:

Հոգևոր անշարժություն,— ասել է բարոյական մահ, մահացում:

Անտարբերություն, հոռետեսություն, բարոյազրկում, ժողովուրդների անձնասպանության դանդաղ ձևերն են սրանք:

Վերանորոգվելու անընդունակ ժողովուրդները մեռնում են ամեն ժամ, ամեն վայրկյան:

Այո, հոգևարքում են այն ժողովուրդները, որոնք հոգեպես ծույլ են, որոնք ղեկավարվում են պատահականությամբ, խճճված են քաղաքական մոլորությունների և հոգեբանական սխալների մեջ:

Մեր կուսակցությունները կամ չեն հասկանում այդ, կամ չեն ուզում հասկանալ:

Չկա, չի նկատվում մտքի ու հոգու լարում, իսկ ճշմարտությունները կարելի է հասկանալ միմիայն այդ լարումով:

Չկա ստեղծագործություն, չկա բարոյական ուժերի մթերում: Կա ընդհակառակն՝ հասկացությունների քաոս և անարխիա, բարոյական լճացում, բարոյական մակաբուծություն, հոգեբանական մի աղետալի մթնոլորտ, որի մեջ չեն աճում, չեն փթթում բարոյական ուժեր:

Իսկ նման մթնոլորտում կդաստիարակվեն անարի, փոքրոգի և պարտվողական սերունդներ միայն. անարի ժողովուրդ, որի ուժերի մեծագույն մասը սպառվում է վախի և անհանգստության մեջ:

Կա օտարահակ օրիենտացիաների գերագնահատում և սրանց խելագար հակամարտությունը, միջավայր թույլի հոգեբանության ծննդի և աճի:

Կա անվճռականություն,— ասել է կա այն ամենը, ինչ որ անհույս և վտանգված է դարձնում մեր ժողովրդի ապագան:

Սեղմ ասած՝ ստեղծվել է մի դրություն, որ մահվամբ է սպառնում մեր ժողովրդին:

Ջ

Անհատը թե հավաքականությունը, բարոյապես կատարելագործվելով, ուղղակի թե անուղղակի կերպով նպաստում է իր շրջապատի բարոյական զարգացմանը:

Մեր կուսակցությունները, որ զբաղված են բյուզանդական վեճերով և ամեն գնով իրար գետին զարկելու անմիտ ցանկությամբ, միմյանց թերությունների ցուցադրությամբ, սեփական այլանդակությունները քողարկելու սին ճիգերով, թողած այդ ամենը՝ հրամայողաբար պիտի զբաղվեն ինքնադաստիարակությամբ:

Անհատ թե ժողովուրդ՝ սրանք միշտ էլ ավելի ուժեղ են, քան կարիքը, քան վտանգը, քան թշնամին, սրանք միշտ էլ կարող են գերազանցել իրենց, բարձրանալ իրենցից, եթե չի պակասում սեփական ուժերով ոտքի կանգնելու կամքը:

Բարձրանալով՝ հոգեպես բարձրացնել մեր ժողովուրդը, ինքնուղղումով սրբագրել ժողովրդի հոգին:

Ժողովուրդները չեն պարտվում, եթե չեն ուզում պարտվել, գիտակցելով այդ ճշմարտությունը, մեր կուսակցությունները իրենց շարքերի միջոցով պիտի ներշնչեն ժողովրդին՝ նրան հոգեպես գոտեպնդելու համար: Կուսակցությունները, դրանց միջոցով և ժողովուրդը, խորապես պիտի գիտակցեն.

• Քանի դեռ տրտնջում է, աղերսում, լալիս մի ժողովուրդ՝ պետք չէ օգնել նրան, քանզի այդպիսին կամովին հրաժարվում է իր գոյության իրավունքից:

• Զարժե և չի կարելի օգնել ընկածին, եթե նրան պակասում է ինքնօգնությամբ ոտքի կանգնելու կամքը:

• Ով չի աշխատում իր բովանդակ ուժերով՝ իրավունք չունի ուրիշներից օգնություն սպասելու:

• Սեփական ուժերով ինքնապաշտպանվելու անընդունակ ժողովուրդները պատժվում են մահվամբ:

• Իրավունքը ուժի հասկացողություն է, այլ ոչ

տրամաբանական: Պայքարը հանուն իրավունքի՝ բարոյական հիմքը ժողովուրդների գոյության, անեծք չէ, այլ օրհնություն:

• Դատապարտված է մի ժողովուրդ, եթե նա իրավունքը զոհաբերում է իր հանցավոր հանգստին, այլ ոչ հակառակը:

• Թույլը մեղավոր է, որ թույլ է: Անբարոյականություն է թուլությունը՝ ստեղծված սնուցանելու ուժը: Ժողովուրդները իրենց թուլության մեղքերը կքավեն որպես պարտություն, ստրկություն, որպես անփառունակ գոյություն:

• Անպարտելի է այն ժողովուրդը, որ ղեկավարվում է ոգու ձեռքով:

• Այնտեղ, ուր կա ոգու, ասել է՝ բարոյական ուժերի ապացույցը, այնտեղ թվական գերազանցությունը, քարը, մետաղը գրեթե կորցնում են իրենց նշանակությունը: Ոգու հետ զինակցողը բարոյական ուժերի հետ է զինակցում, որի միջոցներն աճում են անհավատալիության աստիճան, դառնում անսպառելի:

• Գլխավոր դերը ժողովուրդների պատմության մեջ խաղում են ոչ արտաքին պայմանները, ոչ քաղաքական օրիենտացիան, ոչ էլ դիպվածները, այլ իրենց հոգեբանական նկարագիրը:

• Ժողովրդի գոյության արտաքին պայմանները հարազատորեն կապված են նրա ներքին հոգեկան դրության հետ: Ասել է՝ ամեն ժողովուրդ այնտեղ է, ուր նա հասել է իր բարոյական ուժերի մղումով:

Գիտակցելով այդ՝ մեր կուսակցությունները, եկեղեցին, դպրոցը, մամուլը պիտի հոգեփոխեն ժողովրդին:

Գիտակցելով, հարազատելով և գործադրելով այդ փրկարար ճշմարտությունները՝ մեր մտավորականությունը պիտի կարողանա վերադաստիարակությամբ հոգեբանորեն բարձրացնել հայությունը, պիտի կարողանա ժողովրդի ոգու անպարտելիությամբ ապահովել նրա ֆիզիկական և բարոյական գոյությունը:

Ապագան վտանգված ժողովուրդների վերջին և միակ խաղաթուղթը՝ վերադաստիարակությունն է:

Դաստիարակություն, որ հեղաշրջեր մինչայժմյան թույլի մեր հասկացությունը իրավունքի և քաղաքական բարոյականի, քրիստոնեության, ուժի և թուլության, պատերազմի և խաղաղության մասին:

Դաստիարակություն, որ ազգային հզոր զգացումով և արթուն գիտակցությամբ զիներ հայությունը, որ արիացներ և դառնար մայրը բարձր ժողովրդասիրության և գաղափարապաշտության, մղեր ընդհանուրի շահը միշտ էլ գերադասել անձնականից, թելադրեր անհատին ընդհանուրի երջանկության մեջ փնտրել անձնական երջանկությունը, մտատրամադրեր բոլորին, բոլորին՝ ավելի պարտականությանց տեր զգալ իրենց, քան իրավունքների, որ մղեր հայ մարդուն մեռնել ապրելու և ապրեցնելու, այլ ոչ թե ապրել մեռնելու համար, որ իրականացներ սոցիալական հնարավոր արդարությունը մեր ժողովրդի մեջ...

Փրկարար դաստիարակություն, որ տար մեզ անհրաժեշտ առաքինություններն այն ժողովուրդների, որոնք արի են և վստահությամբ կնայեն իրենց ապագային, որ բարձրացներ մեզ մինչև գերագույն ըմբռնումն ու զգայնությունը, հատկություններ, որոնք կհարյուրապատկեն ժողովուրդների բարոյական կորովը:

Դաստիարակություն, որ հոգեփոխեր և փրկեր մեր ժողովուրդը:

Ահա այս նոր դաստիարակության ստեղծագործ և փրկարար գործին է, որ անվերապահորեն և վճռաբար պիտի լծվեն մեր կյանքի և պատմության ընթացքը շարժող բոլոր հավաքականությունները՝ ազգային մի բարձր մարմնի հսկողության տակ, ընտրված բոլոր հոսանքներից:

Հրապարակ հանելով մեր ժողովրդի հոգևոր վերանորոգման անհրաժեշտության խնդիրը՝ կուզեի հավատալ, թե մեր մտավորականությունը հոգեպես անհանգիստ է մեր ժողովրդի ապագայի նկատմամբ, թե նա, մեր ունեցած ահավոր կորուստներից

հետո, ժողովրդասպանության համազոր կհամարի հնի շարունակությունը և երկաթե անհրաժեշտությունից մղված՝ առաքինություն կունենա անկուսակցականանալ գոնե մեր ժողովրդի ինքնապաշտպանության խնդրում:

• Մեր պատմությունն այսուհետև աղետալի սխալների կրկնությունը չպետք է լինի, այլ սրբագրությունը:

Էլ ոչինչ այն ամենից, ինչ որ արվել և արվում է արտաքին թշնամու գործը հեշտացնելու համար, սա պիտի լինի ինքնազգաստացումի և փրկության հրավիրող մեր օրվան աղաղակը:

Արե՞ց այդ, վարվե՞ց այսպես մեր մտավորականությունը՝ վաղն ազգովին պիտի լինենք այն, ինչ որ ուզում ենք լինել:

Մարդկային աչքը դեռ չի տեսել այն մեծությունը, որին կարող են հասնել անհատներն ու ազգերը՝ իրենց հոգեկան ուժերի զարգացմամբ:

Վաղն այն ժողովուրդներինն է, որոնք գիտակցում և գործադրում են այս ճշմարտությունը:

Վաղը հաղթելու է նա, որը մինչ այդ վաղը իր հոգու մեջ կտանի հաղթանակը:

Հասկանանք, հարազատենք այս ճշմարտությունը և աշխատենք վաղվան համար, եթե չենք ուզում կորչել որպես ազգ:

ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆԸ՝ ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Էջեր իմ օրագրեն:

Ես ճշմարտություններ գիտեմ, որոնցից մեկն ասում է՝ ուզու՞մ ես գուշակել, տեսնել ժողովրդի ապագան՝ նայիր նրա երիտասարդությանը:

Նայելով քեզ, հայ երիտասարդությանը, վարդագույն լավատեսությամբ չեմ լցվում ես:

Մեր վաղը, մեր ապագան կախված է ներկայից:

Վաղն ազգովին պիտի հնձենք այն, ինչ որ սերմանում ենք այսօր. այսօր, երբ դու նվազ խոստումնալից ես, երբ քո մեջ, չնորհիվ մեր օրերի նյութապաշտական ոգու և համատարած հուսալքության, թուլացել է պաշտամունքը երկու աստվածությունների՝ հայրենի ժողովրդի և երկրի:

Քո մի մասի մտքի ու սրտի սնունդը, ավաղ, չի կազմում «առյուծոսկրի ուղնուծուծը»:

Տկարանալով բարոյապես, դու թուլացնում ես մեր ժողովրդի լավագույն ապագայի հույսը:

Ահա թե ինչու ուզեցի մտերմաբար մի քիչ խոսել քեզ հետ, ուզեցի օրագրիս մի քանի անարվեստ էջերով,— ծնունդը իմ խորհրդածությունների,— ստիպել քեզ ևս մտածելու մեր վաղվա մասին:

ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ժողովուրդների պատմությունն այլ բան չէ, քան իրենց գոյամարտի, իրենց հաղթությունների և պարտությունների պատմություն:

Պատերազմներն են օրորել մարդկության պատմությունը, ոչ թե խաղաղությունը, որը բնական վիճակ չի եղել, այլ պատերազմների կարճատև դադար միայն:

Աշխարհը կառավարում է հակամարտության օրենքը: «Մի զինվոր սպանում է Արքիմեդին»:

Հաղթում է ուժե՛ղը և ոչ արդարը:

Վա՛յ թույլերին:

Բոլոր ժողովուրդները՝ լուսավորյալ թե վայրենի՝ ձգտում են արևի տակ կայուն տեղ գրավել:

Նրանք զենքի են դիմում երբեմն ռազմասիրությունից, երբեմն՝ մրցակցությունից, երբեմն՝ կույր ատելությունից մղված:

Պատերազմում են, երբ պետք է նորանոր շուկաներ ձեռք բերել, ծովերի տեր դառնալ, երբ պետք է պաշտպանվել կամ ապահովել այս կամ այն երկրի անկախությունը:

Պատերազմի համար են աշխատում եվրոպական իմպերիալիզմը, անգլիական ծովատիրությունը, ամերիկյան դոլարապաշտությունը, համիսլամականությունը, դեղին վտանգը, պանիսլամիզմը և այլն:

Պատերազմ է անվերջ, և եթե ժողովուրդները կռվադաշտում չեն, ապա զորանոցներում են, ուր խելահեղորեն պատրաստվում են նորանոր բախումների:

Ձեզոքության են դիմում ծույլերը միայն, հաճախ բաժանելով պարտվածների ճակատագիրը: Էապես չկան չեզոքներ: Եթե երկուսն այսօր բարեկամ են՝ նշանակում է նրանք զինակցել են մի երրորդի դեմ:

Ամեն մի պատերազմ երկու նորերի պատճառ է դառնում, որովհետև կռվող կողմերից ոչ ոք իրեն վերջնականապես պարտված կամ հաղթած չի համարում:

Եվ միշտ էլ պարտված կողմը, դեռ իր նահանջի ճանապարհին, մշակում է փոխվրեժի ծրագիր:

Մեկը հարձակվում է, մյուսը պաշտպանվում, այդ երկուսից ո՞րն է մեղավոր:

— Ոչ մեկը. իրավունք ունեն երկուսն էլ, պատերազմն արդար է երկուսի համար էլ,— ասում է ֆրանսիացին:

— Ես սիրում եմ թղթախաղում տանողին, ինչպես և կռվում հաղթողին,— ասում է անգլիացին:

— Եթե մեզ համար օգտակար է, ուրեմն կարելի է,— ասում է գերմանացին:

— Կամ բոլորի բարեկամը, կամ բոլորի թշնամին,— ասում է ամերիկացին:

Եվ որովհետև հնարավոր չէ բոլորի բարեկամը լինել, նա գործնականում մնում է բոլորի թշնամին:

Պատերազմի դեմ մոգական խանդով ու զայրույթով խոսել են մարդկության ամենաընտիր ներկայացուցիչները, բայց և այնպես նա շարունակում է գոյություն ունենալ՝ հեգնելով իմաստուններին:

«Գազանների խնջույք», «ազգամիջյան սպանդ», «խելագար իրականություն», «մարդկությունը կրծող սև վերք», «օրինականացած կողոպուտ», և այլն... ահա պատերազմն իր թշնամիների համար:

«Ոչ,— ասել է Հյուգոն,— կյանքը չի կարող աշխատել մահվան համար: Սպանությունը մնում է սպանություն, միևնույն է թե ինչ ես կրում՝ ոճրագործի գլխա՞րկ, թե՞ ֆրանսիական կայսեր թագը»:

«Ոչ, նրանք բնավ կիսաստվածներ չեն. նրանք մարդ էլ չեն»,— աշխարհակալների մասին ասել է Ֆենելոնը:

«Լուսավոր ազգերը նման են որսկան շների: Մի

անբարոյական բնազդ գրգռում է նրանց՝ ոչնչացնելու իրար, առանց օգուտի և իմաստի»,– ասում է Անատոլ Ֆրանսը:

«Նա,– ասում է Լակտենցին,– որն սպանել է միայն մեկին, դատապարտվում է որպես հանցագործ: Բայց մորթեցեք հազար հոգի, արյունով հեղեղեք երկիրը, դիակներով վարակեք գետերը և ձեզ տեղ կտան փառքի Օլիմպոսի վրա...»:

Սակայն պատերազմը ունի իր պաշտպանները.

«Առանց պատերազմների աշխարհը կվերածվի մի նյութապաշտական ճահճի»:

«Պատերազմը՝ դա լավերի հաղթանակն է»:

«Առանց պատերազմի աշխարհը կընկնի մի վտանգավոր լեթարգիական քնի մեջ»:

«Անբարոյականանում են անմարտունակ ազգերը»:

Սրանք ժխտում են պատերազմների պատահական բնույթը, դրանք համարելով որոշ ճակատագրական օրենքների ծնունդ, որպես մարդկային բարեշրջման բուռն և խոշոր արտահայտություն:

Քսան դարեր են անցել Գողգոթայից մինչև մեր օրերը, բայց խաղաղության, եղբայրության ու սիրո ուսուցչի «աստվածաշունչ» խոսքը շարունակում է մնալ որպես «ձայն բարբառո հանապատի»:

Երկու հակամետ ուժերի արյունոտ պայքարն է լցնում մարդկային պատմությունը և հույս չկա, թե մեր դարում սուրը կփոխվի արորի:

Ուժերից մեկը ձգտում է վերացնել սահմաններն ազգերի միջև, իսկ մյուսը համառում է հաստատուն պահել ազգամիջյան թշնամանքը՝ սեփական գոյատևումն ապահովելու համար:

Այժմ իշխում է երկրորդը, ուժեղ ու հաղթական է վերջինը:

«Խաղաղություն ես ուզում՝ պատրաստվիր կռվի, սա է օրվա հրամայականը»:

Եվ, կարծեք խաբուսիկ խաղաղությունից սարսափած՝ բոլորը, բոլորը պատրաստվում են, զինվում...

ՀԱՅՐԵՆԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆ

Մ՛է, հայրենիքը ոչոտ չէ,
ուր անատանարար կարելի է ուտել ու պառկել:
ԼԱՄԸՆԵ

Հայրենասիրությո՛ւն... Մարդկային բարոյական հատկություններն իր մեջ միացնող այդ գերագույն առաքինությունն է ազգերի գոյության անհրաժեշտ պայմանը, նրանց ուժի և մեծության անսպառ աղբյուրը:

Այդ նվիրական զգացումը զարգանում է աստիճանաբար:

Սկզբում բնազդական՝ զարգանալով դառնում է իմացական, ոգիանում է...

Այն զարգանում է ժողովրդի ինքնագիտակցության և արժանապատվության զգացումի հետ, և կործանվում՝ նրա բարքերի ապականության, նյութականացման հետ:

Հայրենիքներն ապրում են հայրենասիրությամբ, կործանվում՝ դրա պակասից:

Ժողովուրդն առանց հայրենասիրության նույնն է, ինչ մարմինն առանց հոգու:

Այն մայրն է մի շարք առաքինությունների՝ գաղափարականության, անձնվիրության, արիության:

Այն պատերազմողի բարոյական ամրությունն է, կախարդական զրահը, անվրեպ զենքը: Հայրենասիրությամբ հարուստ ժողովուրդը դեպքերի խաղալիքը չէ, այլ՝ հրամայողը:

Այդպիսին «նավաբեկությունների» ժամանակ բարոյապես չի զինաթափվում, այլ վստահ իր ուժերին՝ ուղղում է մեջքը, վերագրավում իր նախկին դիրքերը, դրությունը:

Փոքր ազգերը պարտադրորեն ավելի հայրենասեր պիտի լինեն, քան մեծերը, մենք ավելի՝ քան բոլորը:

Հայրենապաշտ պիտի լինենք մենք:

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ռազմավարի հանճարը բխում է իր հոգու վեհությունից:

Եթե չեն ծնվում, ապա դառնում են առաջնորդներ: Նա հաճախ սրտի և գործողության մարդ է, քան՝ մտքի:

Հակառակ նրանց, որոնք լավագույն բանակները վերածում են հոտերի, նա գիտե հոտերը վերածել իսկական բանակների:

Նա առյուծների խումբը ղեկավարող ոչխար չէ, այլ՝ ոչխարների հոտը կառավարող առյուծ:

Նրա համար բարձր ճշմարտություններ կան. հոգեբանորեն՝ արի, բարոյապես՝ անձնազոհ, քաղաքականապես՝ ինքնահարգ:

Ահա թե ինչու կատարյալ առաջնորդը հոգեբանորեն վերաստեղծում է իր բանակը, տալով նրան իր հոգին:

Նա միաժամանակ դաստիարակ է:

Եվ հոգեբան է նա:

Նա իր բանակի ոգու մոգական բանալին ունի: Գիտե, որ հավատ ներշնչել զինվորին, նշանակում է տասնապատկել նրա ուժերը:

Գիտե, որ կռվի ժամանակ զինվորը ավելի բարոյական մենակությունից է վախենում, քան մահից, ահա թե ինչու երևում է ամեն տեղ, հասնում ամենքին, որպեսզի ոչ ոք՝ զինվոր, թե ղեկավար, իրեն մենակ չզգա, որ անխաթար պահի զորքերի ներքին բարոյական կապը, որ ամեն մեկին զգացնել տա, թե իր հետ է ամբողջ բանակը, ազգը, ցեղը և ինքը՝ հաջողության Աստվածը:

Զինվորի համար կռվի ժամանակ դրոշակը, ազգը, հայրենի երկիրը և նրա սրբությունները խորհրդանշողը առաջնորդն է, ահա թե ինչու կատարյալ առաջնորդը միշտ էլ իր զորքերի հետ է, նրանց կողքին և նրանցից առաջ:

Նա ներշնչում է իր զորքին՝ թշնամիները նման են շների, որքան վախեցար, այնքան կհարձակվեն:

Ամեն մի կռվի վրա նա նայում է որպես «դրոշամարտի», որպես դրոշի համար մղվող կռվի և լարում իր և իր բանակի բովանդակ կարողությունները:

Ամեն մի արնոտ բախում նրա համար մի նոր քննություն է, ուր իր ժողովուրդը մի ավելորդ անգամ ևս պիտի ապացուցի, թե արևի տակ իր տեղն ունենալու իրավունքն ունի:

Նա ասում է.

— Իր հողի վրա պարտվելը կրկնակի և աններելի պարտություն է: Իր երկրի սահմաններում պարտվող ժողովուրդն իրավունք չունի խոսելու անկախ հայրենիքի մասին:

Իր հողի վրա կռվող, պաշտպանվող ժողովրդի հետ են իր մեծ մեռելները՝ մի ուժ, որի առաջ անզոր են բոլոր տեսակի թշնամիները:

Նրա հետ է իր երկրի արևը, որի առաջ թշնամին «ձյունե մեծություն» է միայն:

Նրա սիրտը լցնում է իր դաշտերի շունչը, իր լեռների սեգությունը:

Նրան օրհնում է հայրենի երկինքը:

Հաղթություն,— աղոթում են կանայք ու կույսերը նրա համար:

Հաղթություն,— երգում են մանուկները:

Հաղթություն,— ղողանջում են զանգերը:

Բոլորը և ամեն ինչ կանչում են, ասում՝ «Քեզ հետ ենք, առա՛ջ»: Ամեն ինչ և բոլորը կանչում և հրամցնում են նրան՝ «Հաղթի՛ր մեզ համար»:

Եվ հաղթում է նա: Գաղափարապաշտ է կատարյալ ղեկավարը:

Նա իր առաջնորդն ունի, որը, սակայն, ոչ աստիճանով իրենից բարձր զինվորականն է և ոչ էլ երկրի իշխանությունը:

Աներևույթ է, բարոյական է նրան առաջնորդող ուժը:

Կառավարություն, բարձր հրամանատարություն, ձևական օրենք՝ այդ բոլորը շատ քիչ բան կարող են տալ:

Դիմադրություն, հնարավորության սահմաններում՝ հաղթություն. այսքան համեստ են ձևական իշխանության և օրենքի պահանջները:

Կառավարությունը, բարձր իշխանությունը, օրենսդիրը կարդարացնեն ձեր պարտությունը, եթե կարողացաք ձևականորեն արդարացնել ձեր հանցավոր քայլը:

Ո՞է որ միշտ էլ «երկու բերանով» կարելի է «ապացուցել», որ պարտության օրը հացը ժամանակին չհասավ, թշնամին թվական գերազանցություն ուներ, մեր նահանջի ճանապարհը վտանգվելու վրա էր և այլն:

Եվ հասկանալի է դա:

Կառավարություն, բարձր հրամանատարություն, դատավորներ, սովորական մարդիկ են սրանք, որոնք վաղը միևնույն դրության մեջ կարող են ընկնել:

Ահա թե ինչու սրանցով և սրանց հրահանգներով առաջնորդվող ռազմավարը, եթե գերադաս ուժեր չունի, կարող է երբեմն դիպվածով մասնակի հաջողություն ունենալ, սակայն երբեք բախտ չի ունենա հաղորդագրելու ռազմադաշտերից՝ «Եկա՛, տեսա՛, հաղթեցի՛»:

Ահա թե ինչու իդեալական ղեկավարը երկրի ձևական իշխանությունից զատ միշտ էլ ունի նաև մի այլ իշխանություն՝ իր ժողովրդի մեծ մեռելների բարոյական իշխանությունը, որ հարյուրապատկելով նրա ուժերը, հարյուրապատիկ պահանջկոտ է և աններող:

Նրա համար միշտ էլ ճիշտ է հետևյալը: Մի բանակ, որն իրեն մեջ հաղթել է մահվան վախը՝ անպարտելի է և ամենակարող:

Նա գիտե այդ ճշմարտությունը, ասել է, գիտե և հաղթելու գաղտնիքը:

Ցու՞րտ է, ավելի լավ, թու՞յլ է թշնամին՝ հարձակվի՛ր:

Անձրևու՞մ է, ավելի լավ, թույլ է թշնամին՝ առաջացի՛ր: Բու՞ք է, մառախու՞ղ, ուրախացիր, որպես գայլը, և առա՛ջ: Իսկ երբ իջավ յոթնիցս օրհնված գիշերը՝ ցնծա՛, դու արդեն հաղթել ես: Դու չես կարող չհաղթել, որովհետև կռիվը տարվում է քո նվիրական հողի վրա, քո երկրի սահմաններում, ուր ամեն ինչ քեզ հետ է, ուր ամեն ոք և ամեն ինչ կանչում են՝ «Քեզ հետ ենք, առա՛ջ»:

Վերջապես, նա ընկերն է իր զինվորի: Զորքը եթե ոչ առաջին, ամենաուշը երկրորդ օրը բնազդաբար ճանաչում է իր առաջնորդներին:

Նա շատ շուտ է տարբերում «մեծը»՝ «փքվածից»: Նա հարգում է գիտակցական կարգապահությունը, բայց չի սիրում պաղ և անհոգի պաշտոնականությունը: Նա ուզում է, որ իր առաջնորդը լինի ավելի սրտի մարդ և ամենագլխավորը՝ նաև զինվոր: Եվ այդպիսին է կատարյալ առաջնորդը, նրան պաշտում են, բայց չեն վախենում նրանից:

Անբարոյացուցիչ է վախը: Կեղծ է այն ամենը, որ հիմնված է վախի վրա՝ կրոն, բարոյականություն, կարգապահություն և այլն:

Կառավարելու մի հատիկ միջոց ունի նա՝ խոսքը. խիստ, բայց ընկերական, խոսքը՝ երբեմն որպես սանձ և միշտ էլ որպես խթան: Նա կառավարում է անձամբ, արհամարհելով ճանապարհը մատով ցույց տվող ղեկավարներին: Ներշնչված պատմությունից, նա իր զինվորներին և ղեկավար տարրերին փոխանցում է իր ապրումներն ու գաղափարները: Խիստ է, բայց ոչ կոպիտ: Հպարտ է, բայց ոչ փառասեր:

Հաննիբալին հաղթող Հռոմի կոնսուլներից Հանիբալի աքսորված Սցիպիոնը չէ նա, որը մեռնելով աղքատության մեջ, կտակում է գրել իր գերեզմանաքարին՝ «Ապերախտ հայրենիք, դու տեր պիտի չլինես իմ ոսկորներին»:

Նա Հելլադայի մեծ ռազմավարներից Ֆոկիոնն է, որ Հանիբալի մահվան դատապարտված, թույնը խմելուց առաջ

ասում է որդուն՝ «Հանձնարարում եմ քեզ ծառայել հայրենիքիդ սրտանց և հավատարմորեն և ամենագլխավորը՝ մոռանալ, որ իմ ծառայության համար նա ինձ վարձատրեց մահվամբ»:

Այսպես է կատարյալ զեկավարը: Նա միաժամանակ և դաստիարակն է, և ռազմարվեստագետը, և կախարդը, և ընկերը, նա Աստվածն է իր բանակի:

Խեղճ է ժողովուրդը, երբ նրա առաջնորդն ավելի փառասեր է, քան հանճարեղ, երբ նրա առաջնորդին պակասում է մտքի ու սրտի մշակույթը, երբ բռնված նախանձի չար դևով՝ նա տառապում է բարոյական դեղնախտով, երբ նա դավանում է անձնական բարիքներ խոստացող այս կամ այն գահավիժող վարդապետության, երբ տկարություն ունի մեծ ներկայանալու փոքր և փոքր՝ մեծ գործերում:

Ժողովրդի համար անեծք է, երբ առաջնորդը տգետ է, եսամոլ, նախանձ:

Չկա, չի կարող լինել ավելի զարհուրելի թույն, քան առաջնորդի վատ օրինակը:

Եթե առաջնորդը մտավորապես ծույլ է՝ հոգևոր հնավաճառներ են դառնում նրան շրջապատողները: Վա՞տ է շրջապատը, դառնում է վատթարագույն: Հայրենասեր չ՞է, հայրենատյաց հրեշներ են վխտում նրա շուրջ:

Ճակատագրական է առաջնորդի դերը ժողովրդի կյանքում:

Ուժեղ իմացականություն, մեծ սիրտ և բոլորանվեր ծառայություն. նա՛ առաջնորդը:

Առաքյալի սիրտ, իմաստասերի գլուխ, աղամանդե ճակատ. ահա կատարյալ առաջնորդը:

Վաղվա առաջնորդն իր հոգու սնունդը պիտի առնի նա՛խ իր ցեղի, ապա Արևելքի հոգու աղբյուրներից:

Արևմուտքում էլ են սիրում հայրենիքը, բայց այնպես, ինչպես շունն է սիրում իր թաղը... Շատ է մեծ աշխարհաքաղաքացիների թիվն արևմուտքում, ինչպես և Ամերիկայում:

Ճապոնացին, ընդհակառակը, ուր էլ որ լինի, ինչով էլ որ

զբաղվի, միշտ էլ ենթարկվում է իր հայրենիքի օրենքներին:

Ճապոնացին ապրում է, երբ դա պետք է, և մեռնում է՝ երբ դա արդարացի է:

Արևմուտքում ակնբախ իրողություն է հասարակական դարվինականությունը՝ քողարկված իրարակերությունը:

Ճապոնիայում գոյության կռիվը դեռ իսպառ չի անասնացրել մարդուն:

Ճապոնիան ունի իր Բուշիդոն, մենք՝ մեր Վահագնը:

Նա արիապաշտ է, մենք՝ էլինք:

Նա ցեղապաշտ է, մենք՝ պիտի դառնանք:

Հայ առաջնորդի մի ձեռքը պիտի արևմուտքում լինի՝ ճարտարարվեստի նորույթները յուրացնելու համար, մյուս ձեռքը՝ իր ցեղի բարոյական օրենսգրքի վրա:

Այդպիսին պիտի լինի վաղվա առաջնորդը: Ո՛չ պիտի ասել մարդկային նախիրը լոկ բազմացնող անդեմ անհատին և այո՛, երիցս այո՛ ցեղադրոշմ, ամբողջական, ինքնուրույն ու զորեղ հայ մարդուն:

Կանգնեցրեք այն բոլորին, որոնք ապրել գիտեն առանց մտածումի, որոնք սեփական անզորությունն ատելու քաջությունն իսկ չունեն, որոնք խաբկանքի քաղցրության մեջ են պահում ժողովրդին:

Ո՛չ՝ կրավորաբար մտածողին ու սոփեստին:

Այո՛ մեծագործության ծարավ մշակին մշտաջան:

Ո՛չ հոգևոր թզուկին, որ հաջողեցնում է բարձրանալ հսկաների ուսերի վրա, մի քիչ հեռուն տեսնելու համար:

Այո՛ նրան, որ գիտե նախատեսել դեպքերի ընթացքը և ցանկալի ուղղություն տալ դրանց. լուսավորել գիտե դրանց:

Այո՛ նրան, որ լուսավորել գիտե իր ժամանակաշրջանը, նոր ուղիներ բանալով ժողովրդի առաջ, բանուկ ճամփաներից դուրս:

ՑԵՂԱԿՐՈՆՈՒԹՅՈՒՆ

«Ես հազար անգամ հանձն պիտի
առնեի բնության վտանգը, քան՝ ցեղիս պլատերումը»:
ԳԱՆԴԻ

Հայ կյանքը, սակայն, ունի և մի ուրիշ կողմ, ուր տեղի է ունենում ցեղի ոգու նոր շարժը, ուր հոգիների մեջ սկսել է հոսել թրքատյացությունը որպես հրեղեն հեղեղ, նույնքան զորավոր, որքան ցեղապաշտությունը: Մեր կյանքի այդ բաժնում հայ տառապանքն ու ամոթանքը միացած, նախապատրաստում են ծնունդը նոր հայի: Տիտանական ցավից ծնունդ է առնում մի նոր կրոն՝ հպարտության կրոնը: Իր սեփական տառապանքի մեջ մկրտված հայն է աշխարհ գալիս: Նա իջնում է ցեղի ոգու բարձունքներից՝ ցեղի խոսքը շրթունքներին: Նա սեր է ավետարանում, սեր դեպի ինքնակառուցում՝ ինքնահաղթահարումի ճամփով: Եվ մահ է քարոզում, մահ հայ տկարությունը սնուցանող բոլոր չաստվածներին՝ հին ու նոր: Նա գալիս է վերականգնելու մեծությունը հայ անունի, որ այնքան հայհոյված է այսօր:

Չէ, այլևս չի կարելի այսպես ապրել, քանզի աննախընթացորեն սպանիչ է մեր նվաստությունը: Այս ցնցող գիտակցությունից ծնունդ առած՝ աշխարհ է գալիս ցեղային բարոյականով մեռոնված հայը: Նա, որ ներուժ կերպով ապրել է մեր ժողովրդին վիճակված ողբերգությունն ու ամոթանքը. նոր հայը, որի դրոշակից վաղը պիտի կախվի մեր ցեղի հաղթանակը:

Այսպես էի գրում ընդամենը երեք տարի առաջ: Նախատեսում էի ծնունդը նոր հայի: Սպասում էի ցեղահայտնության: Եվ հայտնվեց ցեղակրոնը:

Ընթերցող, ճանաչու՞մ ես ցեղակրոններին, որոնց ցեղականչ «Լսիր»-ը զրնգում է որպես բարձր զանգակատնից իջնող

զողանջ և ՄԵԾ ՈՒԽՏԻ առջև ծռում հազարավոր ծունկեր, խոնարհեցնում հազարավոր ճակատներ, սարսռեցնում հազարավոր սրտեր: Ճանաչու՞մ ես ցեղապաշտ սերունդը, որն աշխատում է դառնալ արդարության գործիք՝ այն խուժ ազգի դեմ, որ փորձեց գոյության գրքից մեր ցեղի անունը սրբել:

«Հայերը հպարտ զգալու որչափ իրավունք ունեն, եթե մի անգամ իմանան թե իրենք փառապանծ անցյալ են ունեցել: Բայց չգիտեն, դժբախտաբար»:

Անգլիական արդի մեծագույն մարդաբաններից պրոֆեսոր Հետտոնի այս խոսքին որպես պատասխան, նորահաս սերունդը հայտարարում է՝ «Ես ճանաչում եմ իմ ցեղը, ես հավատում եմ իմ ցեղին, ես պաշտում եմ իմ ցեղը, ես ցեղակրոն եմ»:

Նա հայտարարում է, որ այլևս ըմբռնել է Էմերսոնի խոսքի իմաստը, թե՝ «Every man is a bandle of his ancestors». Նա սկսել է հասկանալ, որ ամեն անհատ իր նախահայրերի կծիկն է. Նա ընբռնել է ժառանգականության օրենքի այն ուժը, որով նախահայրերի զորութենականությունը փոխանցվում է անհատին, որպես կենսական կարողություն: Նա ըմբռնել է, որ մարդկային բոլոր կենսակարողությունները միայն ցեղական արևի տակ են ծլում, ծաղկում և բացվում:

Նա հասկացել է, թե ցեղը և ժամանակը հավիտենակից են. թե անանց է ցեղի ազդեցությունը, թե ցեղն է ժողովրդի ուժերի աղբյուրը, թե մարդկայնորեն և ազգայնորեն զորավոր է նա, ով ազատ է ասելու՝ ցեղիս զավակն եմ և ահա, օտարության մեջ իսկ, իր կաթն եմ ծծում: Նա հասկացել է, թե անհատը, կտրվելով իր ցեղից, ապրելով մեկուսի, առնվազն դժվարացնում է իր հոգևոր աճը: Եվ ընդհակառակն՝ մնալով մշտահաղորդ ցեղի գերագույն ուժերին, նա՝ անհատը, ապրում ու ապրեցնում է ցեղի հավիտենական արժեքները և հենց դրանով էլ նպաստում է իր հոգեկան ինքնահսկայացումին:

Նա սկսել է հասկանալ, թե անհատների ու ժողովուրդների վերելքն ու անկումը պայմանավորվում են իրենց հարազատ

ցեղի մասին կազմած ըմբռնումով: Որքան բարձր է անհատների և ժողովուրդների հասկացությունը իրենց գերագույն ծնողի՝ ցեղի մասին, նույնքան հոգեպես կայտառ, զորավոր, ստեղծագործ են նրանք: Ժողովուրդների բարոյականը, սրանց հոգևոր կեցվածքը նույնպես պայմանավորվում են իրենց ցեղի մասին կազմած պատկերացումով: Եվ հենց այս պատկերացումը, ցեղաճանաչումի այդ հոգևոր հայելիացումն է կռում ու կոփում ժողովուրդների նկարագիրը, որով և ճակատագիրը:

Ես ցեղակրոն եմ. այսպես են խոսում հայ մանուկը, պատանին, երիտասարդը, մեր ցեղի բարեկամներին ուրախություն, իսկ թշնամիներին՝ ցավ պատճառելով:

Ցեղակրոնությունը ճիգ է թափում իր ուխտերի միջոցով կյանքի կոչելու կրոնաքաղաքական կաշկանդումներից զերծ ամբողջական հայը, նոր հայը, որ զորե դիմանալ մերօրյա աշխարհի քայքայիչ պայմաններին: Նա ցեղաճանաչ է, նա գիտակցում է, որ իր ցեղը ամենադաժան պայմաններում իսկ եղել է և մնում է ինքնատիպ ստեղծագործող, որ ինքը զավակն է այն մեծ նախահայրերի, որոնք հոգեվարելիս լալիս էին, որ չեն մեռնում ձիու վրա՝ գոռ ճակատամարտում: Նա գիտակցում է, որ ինքը ցեղային բողբոջն է սրտի, մտքի և կամքի այն հսկաների, որոնք մի հատիկ փառք ճանաչեցին՝ «Պատվո վերքերով զարդարել իրենց մարմինները և կռիվներում իրենց ճակատի քրտինքը սրբել նիզակներով»:

Քիչ է խոսում ցեղակրոնը, որովհետև գործապաշտ է, ջանապաշտ, որովհետև «Ջանքն է, որ իրապես մեր մեջ ստեղծում է նոր էակ, մարդկային անասունի մեջ պատրաստում մարդու հայտնությունը և մարդու մեջ՝ դյուցազնի արշալույսը»:

Նա խոսում է ուսանելու և ուսուցանելու համար, իսկ ուսանում և ուսուցանում է գործելու համար: Նա այնպես է խոսում, որ իր ձայնի մեջ ունկնդիրները ցեղի ձայնը լսեն: Նա խոսում է այնպես՝ որ իր լսարանը զգա, թե կա գերագույն հեղինակություն՝ ցեղը, որ խոսում է ցեղակրոնի շրթունքներով:

Ցեղային ինքնահարգանք, ինքնավստահություն և նկարագիր՝ ահա թե ինչ է մշակում ցեղակրոնն իր մեջ:

Նա իր գործն անթերի կատարելու կամք ունի: Նա ատում է անաշխատասիրությունը և արհամարհում անջանությունը: Լեցուն քսակի սնոտի հպարտության փոխարեն՝ նրա մեծագույն հպարտությունն է դժվարություններ հաղթահարելը:

Ցեղակրոնը սկզբունքի բարձրության է հասցրել իր ժամանակը օգտակար կերպով գործածելու ձևը. նա ունի իր սրբավայրը, իր ուխտը, որտեղ կռում ու կոփում է դասակարգային և ընկերային եսականություններից զերծ նոր հայը:

Ցեղակրոնը չի սիրում նրանց, ովքեր ցեղը սիրում են իրենց զգացումի ուժով, բայց մտքի տկարությամբ, ինչպես և նրանց, ովքեր սիրում են մտքի ուժով, բայց կամքի տկարությամբ: Ցեղակրոնը նրանց հետ է, ովքեր ցեղը սիրում են իրենց անհատականության բովանդակ ուժով՝ մտքի, զգացումի և կամքի բովանդակ թափով:

Ցեղակրոնի համար հայ կոչվելու արժանի չէ նա, ով երկրագնդի վրա հայ անունից ավելի մի այլ բան է սիրում:

Նա համակված է պարտականության խոր գիտակցությամբ նրանց հանդեպ, ովքեր էի՛ն և չկան և նրանց՝ ովքեր չկան, բայց պիտի գան: Այդ իսկ պատճառով՝ նա ապրում է ավելի բարձր կյանքով, նա իր կյանքին միացնում է անցյալի խորհուրդը և ապագայի հրայրքը:

Նրա կյանքում ավելի գեղեցկություն, ուրախություն և քաղցրություն կա: Եթե ամեն ոք, ինչպես ասում է Շիլլերը՝ իր մեջ կրում է մի իդեալական մարդ, ապա՝ ցեղակրոն սերունդը իր մեջ կրում է վաղվա անխառն ցեղամարդը:

Այդ իսկ պատճառով, բոլոր հայրենիքներից և քաղաքական սահմաններից ներս, նա մնում է իր ցեղի հպատակը:

Նա ձգտում է՝

ա. Ցեղակրոնության միջոցով իր մեջ զարգացնել այն բարոյակենսաբանական հատկությունները, որոնք կերտել են մեր ցեղի դիմագիծը:

բ. Հայկական առհավետության դրական ուժերը վերածել կենդանի ուժի:

գ. Կյանքի կոչել հոգեպես և կենսաբանորեն զորավոր հայը, որը պահանջում է իրերի նոր վիճակը գաղթաշխարհում՝ առաջ եկած մեր տեղահանության, կոտորածների և տարհանումի բերումով:

դ. Աճեցնել օտար այլասերիչ ազդեցություններին հակազդող հայ ոգու դիմադրական ուժը:

Անցողիկ ասենք, որ ցեղակրոնը չի սիրում լսել միջավայրի այլասերիչ ազդեցության մասին: Այո՛, դա ազդում է, բայց դա անզոր կլինի սպանել ինձ, քեզ, նրան, եթե մենք ապրում ենք ցեղորեն:

Ցեղերի պատմությունը մեզ սովորեցնում է, թե առանձին մարդը, ինչպես և ժողովուրդը այնքան հզոր է և արդյունավոր, որքան իր էությունը բաց է իր ցեղի հոգևոր մակընթացության առջև:

Ցեղակրոնը չի սիրում ցեղորեն անկերպարանքը, նվաստը և վախկոտը, մասնավորապես այդ վերջինը: Այդ իսկ պատճառով՝ ցեղակրոն ուխտերի մեջ խստիվ արգելված է «Մի՛ վախենա» խոսքը: Վախենալ մեկի համար, ցեղակրոնի հասկացողությամբ, ասել է թշնամանալ նրան:

Վախը ենթակային դարձնում է անակտիվ, ինքնապաշտպանվելու անկարող, դա սպանում է նրա պայքարելու կամքը և խղճմտանքի անկախությունը. կարճ ասած՝ ամեն վսեմ զգացում: Նա հաճախ անհատների միջոցով հոգեպես հարվածում է, կազմալուծում ազգը: Ըստ ցեղաբանների՝ վախի թագավորությունը տարածվում է մինչև ցեղերը: Դա արտահայտվում է կա՛մ տարերայնորեն, կա՛մ պարբերաբար: Վերջին

ախտանշական ձևը՝ նախերգանքն է ցեղի հոգևարքի: Դա նշան է, որ ազգ այլևս չէ, այլ մարդկային նախիր:

Ազգերը նախրանում են, երբ մնում են անցեղահաղորդ: Երբ ցեղահաղորդ չէ ազգը, նրա մեջ ցեղի ուժերը՝ Տիգրան, Վարդան, Վահան, մնում են քնած:

Ցեղակրոնությունը գալիս է հրահրելու այդ ուժերի զարթոնքը և նրանց արտահայտություն տալու:

Ցեղային կարողությունների և առաքինությունների զարգացումն ու արտահայտությունը պահանջում են որոշ հոգեբանական մթնոլորտ: Ցեղակրոնությունը ձգտում է հենց այդ մթնոլորտն ստեղծելու:

Նա ճգնում է աշխարհ բերել ցեղամարդը՝ ամբողջական հայ մարդը, որի մեջ և միջոցով պիտի արտահայտվեն ցեղի բովանդակ դրական ուժերն ու հատկությունները:

Անցեղահաղորդը քարշ է տալիս իր մանր ու պարզունակ գոյությունը: Նա չի ճանաչում ավելի բարձր և ընդարձակահորիզոն կյանքը: Նմանը տկար է և դժբախտ, քանզի դեռ չի զգացել իր միությունը ցեղի հետ: Նաև երկչոտ է անցեղապաշտը, որովհետև չգիտի օգտվել իր էության մեջ մթերված կենսաբանական հոգևոր ուժի ակնաղբյուրից, նրա շտեմարանից՝ իր ցեղի ուժից:

Երկար այն ճամփան, որ մեր ցեղն է կտրել, անցել, իրավունք է տալիս ցեղակրոնին հավատալու, որ դա հյութասպառ եղած չէ, որ, ընդհակառակը՝ նրա հողը անախտ է, մաքուր, իսկ հունդը՝ ազնիվ, զորավոր: Ցեղակրոնը լավատես է և խորապես հավատում է իր գործին: Նա սովորելու կամք, ավելի իմանալու և կարողանալու ծարավ ունի: Նոր ուխտակից գտնել՝ ահա մի գործ, որի մեջ ցեղակրոնը հոգնել չգիտի: Նա համոզված է իր դավանանքի փրկարար ճշմարտության մեջ: Նա տառապում է՝ տեսնելով ցեղի ստինքից կտրված հայ մանուկը, պատանին, երիտասարդը: Ոգեկոչող է ցեղակրոնի խոսքը՝ խռովիչ, հոգեփոփոխվող և նոր ապրումի ու հոգևոր լիության սնուցիչ: Ջ՞է

որ ցեղն է նրա հոգևոր կյանքի աղբյուրը: Ցեղաշունչ է իր խոսքը, դա խորհել է ստիպում: Նա չի սիրում պայքարի մտնել հին սերնդի՝ իր նախորդների թողած զենքներով միայն, նա գիտակցում է թե՝ անարդիական զենք, ասել է անզիտություն, անզեն բազուկ: Նա աշխատում է գիտության զինարանից առնել իր կռվի զենքերը:

Այսպես վարվելով հանդերձ, նա չի մոռանում, որ «Մարդս ինքն է իր առաջին զենքը»:

Հաղթել՝ ասել է գերազանցել: Գերազանցելու ճիգ է ցեղակրոնությունը: Պետք է գերազանցել իր ցեղի արտաքին թշնամիներին, իսկ այդ բանում հաջողելու համար՝ պետք է գերազանցել իր նախորդ սերնդին: Այդպիսով միայն ճշմարտորեն հարգած կլինենք մեր նախորդներին: Բավական չէ հիացական վերաբերմունք, անգամ պաշտամունք ունենալ անցյալ սերնդի հանդեպ, պետք է գերազանցել նրան: Հենց սա՛ է կյանքի առաջադիմության օրենքը և հարգանքի այն պսակը, որ յուրաքանչյուր հետնորդ պարտավոր է դնել նախնյաց հիշատակների կոթողին:

Ցեղակրոնի համար չկա ավելի մեծ վատություն, քան հոգևոր խզումը սերունդների միջև: Նորահաս սերունդը կտրվեց անցնող կամ անցած-գնացած սերունդներից՝ նա էապես կտրվում է մինչ այդ գոյություն ունեցող ցեղի արժեքներից ու սրբություններից: Հին սերունդից կտրվողը դառնում է հոգեպես անհող ու անուղի: Էականը հոգեհաղորդակցությունն է սերունդների միջև, որի շնորհիվ վերջինները փոխանցում են ցեղի հավերժական բոցը, ինչպես մոմը բոց է առնում մոմից: Անդարմանելի չարիք է հոգեխզումը ժողովուրդների կյանքում՝ հին և նոր սերունդի միջև, որովհետև մեկ է, միևնույնն է օրգանապես իրար կապված ավանդույթների, բարոյականի և արժեքների խախտման հոգեբանական հիմքը:

Գերազանցապես հայկական է ցեղակրոնության գաղափարը: Այդ շարժումը կաղապարված է մեր ցեղի էության վրա:

Ցեղակրոնության գաղափարը 1919 թ. ոտքի էր հանել մեր Դավիթբեկյան ուխտերը Սյունյաց աշխարհում: Փոխառիկ գաղափարները՝ սոցիալիզմ, կոմունիզմ, չեն փրկի մեզ, դրանք օտարներից փոխառնված տեսաբանական զգեստներ են, որոնք այնքան են համընկնում մեր հոգուն, մեր արյունին, որքան սովորական զգեստը՝ մեր մարմնին:

Ցեղակրոնություն ասելով՝ Լեռնահայաստանում ժամանակին հասկանում էին ցեղային առյուծություն: Մեր ուխտերի խորհրդանշանն էլ առյուծն է, որ վեդական կրոնի մեջ խորհրդանշում էր երեք բան՝ կռիվ թշնամու դեմ, պաշտամունքի հասնող սեր և գերագույն հրաժարում անձնական «ես»-ից:

Իսկ բագրատունյաց զինվորի համար, Անիի շրջանում, առյուծը խորհրդանշում էր հայ մարդու հավատը դեպի իր ցեղի ուժը:

Ցեղակրոնությունը՝ հաջողապես ուղղված այս շարժումը դարձել է մի դպրոց նորահաս սերնդի համար:

Ցեղի հետքերով՝ ահա թե ինչ ասել է ցեղակրոնություն: Ցե՛ղը, ցեղային արյո՛ւնը, ցեղի կա՛մքը՝ աստվածացված. ահա՛ դա մի այլ բացատրությամբ: Դա ասել է՝ խանդավառ ծառայություն և հնազանդություն ցեղին: Դա պաշտամունք է ցեղի՝ իր ուժի, հանճարի և բազուկի: Դա մեր հավատն է դեպի մեր ցեղի կարողությունները:

Պաշտել ցեղը, ասել է բոլորանվեր հանձնվել ցեղի կամքին և աշխատել, որ այդ կամքը դառնա ինքնազոր և հաղթական: Ցեղակրոնը՝ ներկայացուցիչը իր ցեղի ոգու, դավանում է թե՝ Հայաստանը է՛ր, և պիտի՛ մնա մինչև վախճանը ժամանակների:

Ցեղակրոնը, որի պաշտամունքի տարրերն են՝ ցեղային հանճար, ուժ և արիություն, իր մեջ մշակում է զորության մարդուն: Նրա մոտ կենդանի է օրը վերջին վճռական ճակատամարտի, որի համար չի ուզում անպատրաստ գտնվել:

Ցեղակրոնը դա հայն է՝ նոր կենսազգացողությամբ, հայը, որ իր մեջ սկսել է զգալ հայ երկրի ընդերքում քնած երկաթը:

Հայը, որի էության մեջ ցեղի առյուծ-կամքն է արթնացել՝ ճակատելու, նորաստեղծելու և հավերժանալու կամքը:

Հոգով արծիվ հայն է դա, որ նոր է իջել ցեղի պատմության բարձունքներից և ահա թևահարում է վերստին դեպի վեր, դեպի հայոց պատմության կատարները: Դա գորշ առօրյայից, կյանքի թմբիրից, հոգևոր մեռելությունից արթնացած հայն է, որ շնչում է խոր, որի աչքերը վառվում են նոր հույսի խանդից, որն իր կրծքի տակ զգացել է իր ցեղային ուժերի ալեկոծվող ծովը, որը նոր կենսազգացությամբ ապրում է մի նոր կյանք՝ ուժի, արիության և հպարտության:

Դա Վահագնապաշտ հայն է՝ ուժապա՛շտը, զոհապա՛շտը:

Ցեղապրումի ընդունակ հայն է դա, որ մի օր իր աչքը օտար հորիզոններից դարձրեց դեպի մեր երկիրը, մտասուզվեց մեր պատմության ալեծուփ օվկիանիայում, և, մեր ցեղի կյանքի մագաղաթին նայելով՝ իր էության խորքից աղաղակեց.

Ես կարդացի ցեղիս թողած աստվածային հետքերը երկրագնդի վրա, տեսա, համբուրեցի, պաշտեցի, և դարձա ցեղակրոն:

ՑԵՂԱԿՐՈՆՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՄՔԸ

Մի ժողովուրդ, որ ինքն իրեն դեռ չի նվաճել, իսկ ինքնանվաճումը հնարավոր է միայն ինքնաճանաչման ճամփով, ընդունակ չէ, արժանի չէ մեծագործությունների:

Ժողովուրդների հոգևոր արդյունազորությունը մեծ է այնքան, որքան բյուրեղացած է նրանց ցեղային գիտակցությունը, որքան բացահայտված է նրանց էությունը, հոգին:

Հազար խորհուրդ ունի հայ հոգին, որ իր խանդավառ մարգարեին է սպասում, որը պիտի հայտնվի մի օր և այն բացահայտի մեզ:

Հայությունը ցեղաճանաչությամբ միայն կկարողանա իր էության չգիտակցված ուժերը լծել գոյամարտի գործին: Այո՛, դեռ ցեղաճանաչ չենք, դեռ կանչում ենք մեզ, ձայն ենք տալիս, փնտրում, բայց դեռ չենք գտել մեզ, դեռ չենք ճանաչել մեզ որպես ցեղ:

Փնտրում ենք Հավիտենական Հայը, փնտրում ենք նրան հեթանոս դարերում՝ իր պատմության լույսի տակ, իր գրականության մեջ, իր իմաստասիրության և վարած ճակատամարտերի, իր ինքնիշխանության, իր կոտորածների, արտագաղթերի և հայրենաշինության մեջ, փնտրում ենք նրան իր բնաշխարհում և օտար հորիզոնների տակ, փնտրում ենք, բայց դեռ չենք գտել:

Գիտենք, սակայն, որ ինքնաճանաչությամբ կարելի է տիրապետել այն տարերքին, որ հավիտենական է հայ էության մեջ...

Ցեղորեն անինքնաճանաչ՝ դեռ կույր հայ ոգու խորքերում, և այդ իսկ պատճառով՝ անզոր մերօրյա ճակատագրական խնդիրների առջև, որպես ժողովուրդ, մենք շարունակում ենք մնալ նվաստ ու նահատակ, երբ աշխարհը պահանջում է լինել ինքնահարգ և հարգանք պարտադրելու աստիճան զորավոր:

Անասելիորեն զորութենական, բայց դեռ իր ինքնահաղթահարումը գլուխ չհանած՝ հայ էությունն իր անսպասելի չինարարական եռանդը մսխում է ընդունայն: Մեր ժողովուրդը դեռ շարունակում է արյան տուրք տալ իր ցեղային

անինքնաճանաչությանը: Դեռ շարունակվում է հայոց ողբերգությունը՝ մի անօրինակ ողբերգություն, որ մեր ազգային ուժի և հպարտության փոխարեն՝ մեր տկարությունն ու նվաստությունն է սնուցանում: Արդ՝ մեկնելով այն կենսաբանական ճշմարտությունից՝ թե՝ երբ ժողովուրդների մեջ տկարանում է ցեղի շունչը, սկսում է նվազել սերունդների կենսունակությունը, հոգեպես մանրանում են անհավատները, շեշտվում է նրանց այլասերումը և վրա է հասնում անժամանակ զառամությունը, մեկնելով այդ ճշմարտությունից, քեզ, նորահաս սերունդ, ցեղիդ ձայնն եմ բերում: Ես քեզ ցեղակրոնություն եմ քարոզում: Ցեղակրոնություն, որով անհայրենիք հայությունը հոգևոր զրահ կհագնի՝ օտար այլասերիչ ազդեցություններին դիմանալու համար:

Այդ դավանանքը, քո միակ դավանանքը, որևէ առնչություն չունի այլ վարդապետությունների հետ, իսկ եթե կրոն է դա, ապա կրոնն է ցեղային հպարտության, ուժի և արիության, դա կրոնն է հայ նորահաս սերունդի:

Ցեղակրոնությունը՝ անասելիորեն վիրավորված, անարգանքի փոշիների մեջ գցված, իր խոսքի մեջ ապտակված, ցնցված հայ հոգու ծնունդն է:

Ապրել առանց սեփական իրավունքի, արժեքի և արժանիքի գիտակցության, առանց ներքին հպարտության, առանց սեփական կյանքի, չի կարելի այլևս, նորահաս սերունդն այդպես չպետք է ապրի:

Անցեղաճանաչ, անզոր ու նվաստ է հինը:

Մեզ պետք է նոր հայը, որին սպասում ենք ցեղակրոնությունից:

Մեզ պետք է ցեղակրոն հայը, որ զորեր դիմանալ մերօրյա քաղաքական նենգախաղի աշխարհին:

Ցեղակրոնությունը, ցեղի ճանաչումն է դա, ճանաչումը մի գերբնական ուժի, էության:

Այդ ուժ-էությունից ծնված լինելու գիտակցությունն է դա.

այդ ուժ-էությանը ցմահ հավատարիմ մնալու ուխտն է դա:

Ես ցեղակրոն եմ. և ահա երդվում եմ Վահագնի աջի վրա՝ երբեք չմեղանչել ուխտիս դեմ, ապրել, գործել ու մեռնել որպես ցեղամարդ:

Ինձ համար անհատականության և ազատության ամենաբարձր արարքը՝ դա հնազանդվելն է ցեղիս:

Ես ցեղաճանաչ եմ, և ահա գիտեմ, թե մեծ է իմ ցեղը, թե իմ ցեղն ավելին է տվել մարդկությանը, քան ստացել է նրանից, գիտեմ, թե ինչի է ունակ իմ ցեղը:

Ես ցեղահավատ եմ, և ահա պաշտում եմ մի ա՛յլ աստվածություն՝ ցեղիս արյունը, որի անարատության մեջ է իմ ցեղի ապագան:

Ես ցեղահաղորդ եմ, ահա զգում եմ, որ իմ անձը ավելի իմ գերագույն ծնողին՝ իմ ցեղին է պատկանում, քան իմ անմիջապես ծնողներին:

Իմ ժողովրդի քաղաքական ճակատագրով զբաղվելու պարտականությունն ունեմ ես, և ահա պայքարում եմ մի մեծ ճակատագրի համար, որին արժանի է իմ ցեղը:

Ցեղակրոն եմ, ասել է ուր էլ որ լինեմ, ինչ դիրք էլ որ ունենամ՝ կմնամ հպատակն ու մարտիկն իմ ցեղի:

Դավանում եմ, որ իմ սերունդը ավելի մեծ պարտականություն ունի, քան ուներ անցնող ազատագրական սերունդը: Պարտականության մեջ ցեղակրոնի իմ բաժինը՝ առյուծի բաժինն է, ամենամեծը:

Ցեղակրոնը, որի նշանաբանն է՝ ավելի, էլ ավելի զորություն, պաշտամունք ունի իր ցեղի մարտական ուժի հանդեպ:

Զոհապաշտ եմ ես, և ահա երկյուղածորեն ոգեկոչում եմ նրանց, որոնց պաշտամունքը հավիտենական է, որոնք առյուծացան իրենց արիության մեջ, աստվածացան իրենց հոյակապ նվիրումի մեջ, որոնք իրենց արյունը չռայլեցին մեր ցեղի գոյությունը և պատիվը հավիտենականացնելու համար:

Ցեղակրոնն էլ է ձգտում երջանկության՝ տեսնել, թե ինչպես է աճում իր ժողովրդի զորությունը և արդարորեն

ընդարձակվում է Հայաստանը:

Ցեղով է ապրում, ստեղծագործում և հավերժանում ժողովուրդը: Արդ, թե ինչու ցեղային անհատականության եղծումը ցեղակրոնը համարում է ոճիր՝ ուղղված մարդկության, ի մասնավորի, իր ժողովրդի դեմ:

Ցեղակրոնը խորշում է այն բոլոր վարդապետություններից և հոսանքներից, որոնք միտում են մեր նորահաս սերունդը հեռու պահել ցեղի կազդուրիչ ստինքից՝ կաթից:

Նա խորշում է հայ իրականության մեջ գեռացող այն բոլոր ուժերից, որոնք, թեպետև հասարակական դիրքով հակոտնյա, բայց ընդհանուր հոգեբանությամբ միացած,ճակատ են կազմել մեր լուսավոր ազգայնականության դեմ:

Ավելի պարզ: Ազգայնականության երկու ձևերից՝ ազգայնական անհատապաշտություն և եսապաշտություն, ցեղակրոնը ողջունում է առաջինը, որն այլ բան չէ, եթե ոչ ազգ-անհատի արդար և արգասավոր ձգտումը՝ հավատարիմ մնալ իր ցեղի ոգուն, կատարելագործել իր պատմական տիպը և պաշտպանել իր հավաքական անձի ազատությունը:

Ցեղակրոնի այդ ձգտումը լիուլի համապատասխանում է համամարդկային բարոյականի և առաջադիմության բարձր սկզբունքներին:

Պարտվողականություն, կրավորական տառապանք, սարսափի հոգեբանություն, մտքի անիշխանականություն, կրոնական անդենականություն, դասակարգային և հարանվանական եսականություն՝ այդ ամենից խորշելով խորշում է ցեղակրոնը:

Ցեղակրոն եմ, ասել է պարտավո՛ր եմ, կամենու՛մ եմ, կարո՛ղ եմ գերազանցել, և պե՛տք է գերազանցեմ ցեղիս թշնամիներին:

Ուժապաշտ՝ տկարություն ու նահանջ չի ճանաչում ցեղակրոնը: Նրա մոտ կենդանի է ուժի ծարավը, զոհաբերության քաղցրությունը, և ցեղի ուժերի կենտրոնացման ճիգը:

Արտաշեսյան իր նախնիների մեծությանը հետամուտ՝ նա

պատկառում է իր ցեղից և աշխատում ամենուրեք արժանավոր ներկայացնել դա:

Հայ մարդու հետ ցեղակրոնը խոսում է հայերեն, որովհետև գիտակցում է, թե լեզվի մահը արագացնում է ժողովուրդների հոգևոր մահը:

Ինքնամսխումի մեջ ազատ չէ ցեղակրոնը:

Քաջառողջ լինելու իրավունք և պարտականություն ունի նա, որի ձեռքին է եկող սերունդների ճակատագիրը:

Նրա համար նախընտրելի են այն գիտությունները, արվեստներն ու արհեստները, որոնք կարելի է ծառայեցնել ցեղի հզորությանը և հաղթանակին: Ցեղակրոնը՝ մարտիկ է կամ պատրաստվում է դառնալ այդպիսին:

Անձնական կամքի մշակությամբ՝ ցեղակրոնը սատարում է հայ ոգու հսկայացմանը:

Ցեղի կամքի աստվածացումը՝ ահա թե ինչի է ձգտում նա:

Այդ անմեռ կամքին ահա, որ չմեռավ դաժան դարերի հարվածների տակ, և չթողեց որ Հայության մեջ Մամիկոնյանների ռազմաշունչ ոգին մեռնի, ցեղակրոնն ասում է վճռաբար՝ այո և ամեն:

1934 թ. հունիսի 1-ից 3-ը Բոստոնում, «Հայրենիքի» շենքում, բացվեց Ցեղակրոն ուխտերի առաջին համագումարը: Մասնակցում էին 40-ից ավելի կազմակերպությունների պատգամավորներ: Ցեղակրոն ուխտերի առաջին առաջնորդ ընտրվեց Աստուր Կիրակոսյանը:

1940 թ. հունիսի 30-ից հուլիսի 3-ը Չիկագոյում գումարված Ցեղակրոն ուխտերի 8-րդ համագումարում որոշվեց այն վերանվանել Հայ երիտասարդների դաշնակցություն:

Վերանվանման հիմնական պատճառն այն էր, որ որոշակի ուժերի ծառայող մամուլն սկսել էր Ցեղակրոնությունը մեկնաբանել որպես ֆաշիզմի նման ինչ-որ բան:

Դժվար էր այլոց հասկացնել Ցեղակրոնության էությունը, առավել ևս, որ այդ «այլերը» ձգտում էին... չհասկանալ:



Իմ թանկագին Լևոն և Փառանձեմ

Խնդրում եմ ինձ գրել հետևյալ հասցեով՝ Տաշքենդի մարզ, Կարասույի շրջան, Կույլուկի փ/բ, միջմարզային հիվանդանոց Ուիտլիկի ՆԳՆ Ուզբ. ԽՍՀ: Նամակներն ուղարկեք օդային փոստով: Ուղարկեք փող, նաև պանիր, յուղ և վիտամիններ:

Անհամբերությամբ ձեր նամակներին եմ սպասում: Հիմա կարող եք գրել ամիսը մի քանի անգամ: Հուսով եմ, որ ինձ կթույլատրեն տեսակցություն Լևոնի հետ: Այդ մասին կգրեմ օրերս:

Ինձ՝ որպես հիպերտոնիկի մինչև հիմա չե՞ն ակտավորել:

Ինձ դեռ թույլտրված չէ նամակագրություն Բուլղարիա՝ կնոջս և որդուս հետ:

Աստված գիտե, թե ողջ են արդյոք: Եթե ողջ են ուրեմն համոզված են, որ կենդանի չեմ, քանի որ տասնմեկ տարի շարունակ նրանք ինձնից ոչ մի նամակ չեն ստացել:

Գիտակցությունից, որ որդիս իրեն որբ է համարում, սարսափելի տանջվում եմ: Առողջ եղեք:

Ձեր Գարեգին

27 փետրվարի, 55թ



Իմ թանկագին դուստր Լիլյա

Ստացա քո առաջին պատվերային 3. IV.55թ. գրած նամակը:

Հասկանալու համար, թե նամակդ կարդալիս ես ինչ վերապրեցի, պետք է ողբերգական ճակատագրով հայր լինել, ինչպիսին ես եմ: Չէ՞ որ սիրելիս ես քեզ չեմ տեսել: Երբ դու ծնվել ես, ես Երևանում չեմ եղել: Ինչպես է քեզ մեծացրել մայրդ ես չգիտեմ, բայց ենթադրում եմ հեշտ չի եղել: Ես նրան՝ մորդ երախտապարտ եմ հավետ: Նա անկարելության աստիճանի բարի էր, բնույթով՝ քնարական, իդեալներով կին, մի խոսքով հրաշալի մարդ, սակայն մեզ ճակատագրով վիճակված չեր միասին ապրել: Համբուրիր մորդ և ասա նրան, որ 7 տարի սրանից առաջ Վլադիմիրի բանտից ես նրան տասնմեկ նամակ եմ գրել բայց պատասխան չեմ ստացել: Երջանիկ կլինեմ, եթե ուղարկես մորդ, քո և իմ սիրելի թոռնուհիների լուսանկարները:

Համբուրում եմ բոլորիդ:
Քո հայր Գարեգին:
Հ. Գ Քեզ հե՞տ է ապրում արդյոք մայրդ:

12 ապրիլի 55թ.

ԱՌՅՈՒԾԱՅԻՆ ՄԱՅՐԵՐ

Տկարության և կեղծիքի դեմ պայքարի մեջ հայ երիտասարդը պետք է իր կողքին ունենա հայրենակրոն մայր:

Մայրերի՛ ափերի մեջ պիտի փնտրել ազգերի ճակատագիրը:

Մայրերը պիտի հովազներ ծնեն, այլ ո՛չ թե կատու:

Բնությունը կնոջ ձեռքով է գրում տղամարդկանց սրտի մեջ:

Ահա թե ինչու հայ կինը հայրենասիրության տաճարի սրբազան կրակը անշեջ պահողն է:

Հայ կինը ավելի հերոսուհի, քան թախծության մայր պիտի լինի:

Նրա շուրթերին չպետք է պակասեն Ժաննա դ՛Արկյան խոսքերը.

«Եթե հոգնած եք՝ դադար առեք, բայց մի լքեք կռվադաշտը, մի դասալքեք»:

Կնոջ հայրենասիրությունը որպես աստվածային կրակ, բոց ու ջերմություն՝ կարթնացնի քնած առյուծն իր ժողովրդի մեջ:

Ժողովրդի բարքերը,– գովելի թե պարսավելի,– կախում ունեն մայրերից:

Իրենց զավակներով պիտի ճանաչել ու գնահատել կանանց:

Ո՛չ իմասնասերներ, ո՛չ թագավորներ օգնության կանչեցեք հայրենիքին, այլ մայրական ազդեցությունը:

Ամեն ինչ՝ սեր, հարգանք, ակնածանք հայրենասեր մորը:

Հաճախ վիրավոր, բայց հոգեպես անպարտելի ժողովուրդներն են միայն հաղթում պատմության մեջ:

Հաղթում են ա՛յն ժողովուրդները, որոնք ծանոթ չեն հուսահատություն կոչված ախտին:

Գարշում եմ այն հայրենասերից, որ հայերեն չի խոսում... այլախոս հայրենասե՞ր.

Անհեթեթությո՛ւն:

Ավելի լավ է համր լինել:

Միայն կնոջ միջոցով կարելի է հոգեփոխել ընտանիքը և դրա միջոցով՝ հայրենիքը:

Սկսենք հայ կնոջից.

Հայրենապաշտորե՛ն դաստիարակեք հայ կնոջը և նրա՛ն թողեք սերնդի դաստիարակումը:

...Նրա պաշտպանությանն ու գուրգուրանքին հանձնենք մեր լեզուն:

Ապագան վտանգված մեր ժողովուրդը միայն մե՛կ ելք ունի՝ դառնալ արիադավան և արիախնամ:

Հայ կնոջի՛ց սպասեք հոգեկան այդ հրաշքը:

1927 թ. Սոֆիայում տպագրվեց Նժդեհի «Որդիների պայքարը հայրերի դեմ» աշխատությունը:

«Ո՞ւր եք գնում, ո՞րն է փորձառության ձայնը՝ քմծիծա՞ղը, հուսալքո՞ւմը, անճարակությո՞ւնը թե քնախտը... Խոսե՞նք թե լսենք:

Լսենք, որպեսզի կեղծ փորձառության դեղահատեր հրամցնեն մեզ, ինքնարդարացման անվերջանալի ճառեր կարդան մեր գլխի՞ն... Ո՞րն է կյանքի օրենքը:

Կյանքի օրենքը պայքարն է:

Այն ցեղը, որ իր կյանքի և արևի համար է պայքարում, իր մեջ ուժ, հղացում և իրատեսություն կգտնի, որպեսզի չարը փոխի բարու...

Շարժման մեջ դրեք ցեղի ուժերը և հայոց հինավուրց ոգին կխոսի:

Այն մեր արյան մեջ է:

ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ԽՈՀԵՐ

Երկու բան չեմ ներում մարդուն՝ իր ստորությունները, որոնցով սնվում է իր բարոյական տկարությունը, ապա՝ իր տկարությունը, որից ծնունդ են առնում իր ստորությունները:

*

Ընկեր ու բարեկամ փնտրի՛ր տառապանքի, ճշմարտության և կատարելության ճամփաների վրա: Ընկերացի՛ր ամեն տառապողի, ճշմարտության հետամտողի հետ, և միայն նմանների առջև բա՛ց էությանդ դռները:

Այս ճամփաներից դուրս, սակայն, եղիր և՛ փականք, և՛ բանալի շրջապատիդ համար:

*

Թեև ամեն ժողովուրդ իր հայրենիքն ունի, մարդկությունը, սակայն, դեռ մնում է անհայրենիք:

Մարդկությունն է մարդկության հայրենիքը, որ դեռ գոյություն չունի:

*

Արդար լինելու համար՝ մարդկանց մեջ, թեկուզ թշնամիդ լինեն, փնտրի՛ր նախ նրանց լուսավոր կողմերը:

Սկսեցի՞ր բացասականներից՝ պիտի չնկատես դրականները, վասնզի պիտի չուզենաս նկատել:

*

Պայն ստոր կրքերից զերծ մարդն է ընդունակ պայծառորեն խորհելու: Զարերը թանձրամիտ են լինում:

*

Սրբության բարձրունքներից մինչև գոյության գռեհը, ահա՛ ուղիների այն աշխարհը, ուր դեգերում է մարդկային ոգին: Եվ, բևեռանում, հաճախ վսեմանում կամ գռեհկանում: Հենց այդ բևեռացմամբ պիտի բացատրել սուրբի և սինլքորի գոյությունն աշխարհում:

*

Կռիվներում հերոսանալուց ավելի դժվար է կյանքում հերոսավայել կեցվածք ունենալը:

Հերո՞ս ես՝ ապա ուրեմն՝ աշխատիր բոլոր պարագաներում արժանի լինել անվանդ:

*

Սեր սեփական ցավերը մեղմելու, մոռանալու մի հատիկ միջոց կա՝ մտածել այլոց ցավերի մասին:

*

Հաճախ կաշառվում են պատմաբանները, պատմությունը՝ երբե՛ք:

*

Ամեն մարդ իր տեսանելի կամ աներևույթ դաստիարակիչն ունի, որի դերն ու ազդեցությունն իր նկատմամբ շարունակվում են մինչև գերեզման:

Մեկի փոխարեն՝ ես երկուսն ունեցա՝ Մամիկոնյաններն ու Մասիսը: Առաջիններն ինձ հայրենիքի համա՛ր մեռնելու տենչ ներշնչեցին: Երկրորդը՝ սե՛ր դեպի հոգևոր բարձրունքները:

*

Որքան վսեմ է ժողովրդի հասկացողությունը հայրենիքի մասին, այնքան զօրավոր է նրա երկիրը, նրա հայրենասիրությունը:

*

Իմ հայրենիքը - դա մարդկայնօրեն այն լավագոյնն է, որ կայ Հայաստանում:

*

Կեսարը կ'ուզէր լինել առաջինը գիւղում, եւ ոչ երկրորդը՝ քաղաքում: Հեթանոսական փառասիրություն: Ես կըցանկանայի լինել վերջինը Հայաստանում, միայն թէ ազատ եւ անկարօտ լինէին նրա բոլոր գաւակները:

Նման հայրենիքում բաւարարված կը լինէին բոլոր փառասիրությունները եւ ապահովուած՝ բոլորի երջանկությունները:

*

Ներիր, Տեր, ներիր ինձ, եթէ մի օր հայրենիքիս օգտակար լինելու համար մեղանչեմ քո դէմ: Արդար է հայրենիքին ծառայել ամէն ինչով, բացի ստորությունից:

*

Սեռիր այնպէս, որ մահդ էլ ծառայի հայրենիքիդ - ահա իմ դաւանած հայրենասիրությունը:

Հերոսական գործէրեն աւելի ոգեշնչող է մահը հերոսական:

*

Հերոս չէ նա, ով գիտակցում է, որ ինքը հերոս է: Ոգու հսկայ լինելով հանդերձ, ծերություն չճանաչող մանուկ է հերոսը, որը սխրագործելիս իսկ կարծում է, թե կատարում է մի շատ սովորական գործ, եւ ոչ աւելին:

*

Ես իմ կյանքով հաստատեցի Հերոդոտոսի խոսքը. «Վտանգավոր է չափից ավելին ցանկանալ»:

Ես ուզեցի, որ մեր ցեղի գոյության թշնամին հենց իմ օրով նստի իր հայրենիքի փլատակների վրա, և վայե նախանձելով յոթնիցս անիրաված իմ ժողովրդի ճակատագրին:

ՆԺԴԵՀ ՄԱՐԳԱՐԵՆ...

Նոստրադամուսի մարգարեություններում

Բազում հիմքեր կան գոնե հարևանցի անդրադառնալու մարդկության պատմության մեջ թիվ 1 կանխագուշակը համարվող Միշել Նոստրադամուսի /1503-1566/ որոշ պատգամախոսություններին ու պայծառատեսություններին, որոնք ինչքան էլ մշուշապատ թվան, իսկ դրանց հավանական բացատրանքները ճշգրիտ գիտությունների լեզվով՝ ոչ ավելի, քան տարածաժամանակային տիրույթում հարաբերակցված և ընդամենն ավելի կամ պակաս մոտարկված, մեր կարծիքով բավարար համոզիչ երևան են բերում հոգևորական արմատներից սերած Գարեգին Տեր-Հարությունյան-Նժդեհի /1886-1955/ զուգիմաստ պայծառագույն կերպարը: Մեր ապացուցողական թարգմանությունները խստիվ համեմվել են դասական գրքի /Джон Хоуг "Нострадамус, полное собрание пророчеств" М., 2004/բնօրինակ՝ միջնադարյան հին ֆրանսերեն տողերի և հոուգյան մեկնաբանությունների հետ:

1. Ցենտորիա 1, քատրեն 96 /այսուհետ 1ք 96 տեսքով/.

Ոմն մեկը, որ կմեղադրվի երևակայությամբ փոփոխված տաճարների և աղանդների քայքայման համար, նա վնաս կպատճառի շատ ավելի ժայռերին, քան ողջերին, ականջները լեցուն են վերամբարձ ճառերով:

Հիրավի՝ Մեծն Նժդեհն է «ոմնը», ով ազգային ու համամարդկային արժեհենքի վրա բարձրացրած սկզբունքորեն ինքնատեսակ ուսմունք առաջարկեց /իր իսկ ըղձապատվիրանով Նոր Աստվածաշունչ՝ «Արիների ավետարան», ցեղակրոնություն, համահեղինակյալ տարոնականություն/ իսկական, հանրաշահ կրոնի, եկեղեցու դերը սխալ ըմբռնող «ողջերին»՝ փչրելով կարծրատիպերով ծանրաբեռ «ժայռերը».

ըստ որում, այս ամենը համեմելով համաշխարհային ճարտասանության գոհարանուն արժանի «ճառերով» և երիցս իսկապես՝ ամբաստանվեց ու զրպարտվեց ազգակիցների և կուսակիցների կողմից /ՀՅԴ, ՌԱԿ, ՀԿԿ, ՀՀՇ, հայտնի հայագետ Հակոբ Սիրունի և այլոք/:

2. 5ք 54

Սև ծովից և Մեծ Թաթարիայից հայտնութենվում է արքան, որ կժամանի, որպեսզի տեսնի ալիան /Ֆրանսիան/. /Նա/ կթափանցի Ալանիան և Հայաստանը և Բյուզանդիայում /Ստամբուլում/ կթողնի իր արյունոտ մականը:

Արժե նախ մեջբերել Ջոն Հոուգի ծավալուն վերծանության սկիզբը. «Քատրենը շարունակում է Արևելքից հոգևոր ուսուցչի թեման» /տես՝ նաև վերջին պարբերությունը, էջք 375-376/:

Հայտնություն արքան, մեր կարծիքով, Նժդեհն է, գլխավոր գաղափարախոսական ու պատմագիտական երկերը երկնել է, հրատարակել սևծովյան երկրներում /Բուլղարիա, Ռումինիա/, ի դեպ՝ նաև բուլղարահայ ցեղակրոն տասնյակ ռազմիկներին երկրորդ աշխարհամարտի գեհենից փրկելու համար անձամբ մեկնել ու գործել է Սև ծովի գլխավոր ցամաքամասում /Ղրիմ/, իր տառապաշատ կյանքի վերջին արարներից մեկն անցկացրել «Մեծ Թաթարիայում» /Կենտրոնական Ասիա, Տաշքենդի բանտ և բանտային հիվանդանոց. 1954-55 թթ./: Որպես պատվիրակ մասնակցելով Ֆրանսիայում 1932 թ. գումարված ՀՅԴ ընդհանուր ժողովին՝ վերջինիս որոշմամբ ստանձնել է իր գլխավոր առաքելություններից մեկը /ազգապահպան աշխատանքներն ԱՄՆ-ում, հիմնական ու ծացուցիչ ցեղախառնարան այս երկրում և այլուրեք Ցեղակրոն ուխտերի ստեղծում, որոնց իրավաժառանգ Հայ երիտասարդաց դաշնակցությունն առ օրս գործում է շուրջ 7 տասնամյակ անընդմեջ/:

Նժդեհին «գաղափարական և պետական թշնամի» հորջորջելուն և արտերկրում հետապնդելուն զուգահեռ՝ «թրքաբոլշևիկյան» /Նժդեհ/ խորհրդային իշխանությունները նրա որոշ հարազատների աքսորել են Հայաստանից: Մասնավորապես՝ Նժդեհի մայրը՝ Տիրուհի /Խաթայի/ Գյուլնազարյանը, միակ եղբայր Լևոնի ընտանիքը ստիպված են եղել տարիներով /1920-1930-ական թթ./ ծվարել Վլադիկավկազում՝ Հյուսիսային Օսեթիայի՝ Ալանիայի մայրաքաղաքում /Արտակ Վարդանյան, «Նժդեհյան մասունքներ», էջ 7, Եր., 2001: Միաժամանակ Նժդեհի դարձին ու վերադարձին Հայաստանահայության գոնե ցեղաշունչ սերունդքն սպասել է ամենայն անձկությամբ և մշտապես՝ այդ դժվար ժամանակներում: 1921 թ. հուլիսին՝ հայրենիքից հեռանալուց առաջ, «Խորհրդային Հայաստանի Հեղկոմին» /պետք է լիներ՝ Ժողկոմխորհին/ ուղղած վերջնագրում պահանջել է նաև հետևյալ պայմանների ընդունումը.

«Ա.Լեռնահայաստանը պարփակում է իր մեջ ամբողջ Զանգեզուրի գավառը, Լեռնային Ղարաբաղը, Վայոց ձորն ու Գողթանը: Բ. Լեռնահայաստանը իբրև Հայաստանի անբաժան ինքնավար մասը, ենթարկվում է Հայաստանի կենտրոնական կառավարությանը»: Նախազգուշացնում է. «Դուք գիտեք, որ ցանկության դեպքում ես միշտ էլ հնարավորություն կունենամ... վերագրավել Լեռնահայաստանը»:

Իսկ ինչպես նշված է Բոստոնի «Հայրենիք» թերթի 1923 թ. նոյեմբերի 4-ի համարում՝ ըստ խորհրդային գործկոմի նախագահի՝ «ժողովուրդը ցարդ կապված է Նժդեհի հետ, միշտ կհիշե զայն և կկարծե, որ ան հեռացած չէ Զանգեզուրեն և մի օր մը դուրս պիտի գա բոլշևիկներու դեմ»: Վերջապես՝ կան ոչ քիչ բանավոր վկայություններ, որ մեր պետական կազմավորումների /Հայկական ԽՍՀ, Նախիջևանի ԻԽՍՀ, Լեռնային Ղարաբաղի ԻՄ/ հայ բնակչության տարբեր շերտեր ընդհուպ մինչև երկրորդ աշխարհամարտի բռնկումն ապրել են Նժդեհադարձի լուրերով:

«Ստամբուլում արյունոտ մականը թողնելու» փոխաբերությունը կողմնակի փաստագրումն է Նժդեհի առաջնորդած լեռնահայաստանյան դյուցազնամարտում «թուրքական կոմունիստական գնդի» ոչնչացման, և անկասկած մի թափանցիկ ակնարկ՝ Թուրքիայի մասնատմամբ կամ ջախջախմամբ Արևմտյան Հայաստանի ազատագրման Նժդեհյան ծրագրի /«Հայկական իռեդենտա»/, ինչպես նաև՝ «Իմ տապանագիրը» վերտառված քաղաքական կտակի. «...այնժամ պիտի հանգչեմ և ես, հայոց աշխարհի երեք հսկաները-Մասի՛ս, Նեմրո՛ւթ և Սիփան, իրար ձայն տան, կանչեն ցնծագին՝ «հեյ, հեյ, էլի հայո՛ւն ենք, էլի հայ, էլի Հայաստա՛ն»...» /Նժդեհ, «Բանտային գրառումներ», Եր., 1993, էջ 94/:

3. էջ 94

Նա կժողովի Մեծ Գերմանիայում Բրաբանտն ու Ֆլանդրիան, Գենտը, Բրյուգեն ու Բոլոնիան. հաշտությունը /զինադադարը/ կեղծ է: Հայաստանի մեծ դուքսը կծառանա առ Վիեննա և Քյոլն:

Եթե առաջին «նա»-ն Հիտլերի անվիճահարույց դերանունն է, ապա «Հայաստանի մեծ դուքսը», բազմաբազում հիմքերով կարող է լինել Գարեգին Նժդեհը:

Երկրորդ աշխարհամարտի սկզբնափուլում Նժդեհն ինքը հասկանալի պատճառով միանգամայն հավանական է համարել հիտլերյան Գերմանիայի հաղթանակը համայնավարական ԽՍՀՄ-ի նկատմամբ /տես՝ Գարեգին Նժդեհ, «Երկիր», առաջին և երկրորդ հատորների համապատասխան հոդվածներ, Եր., 2002/: Եվ այս մեկնանկյունից յուրովսանն արել է ինչպես բուն Գերմանիայում ու արբանյակ երկրներում /ներառյալ Ավստրիայում/ «պատանդառված» հազարավոր հայ ռազմագերիների, ավելին՝ տասնյակ հազարներով հաշվվող եվրոպահայության /վիեննահայության/, այնպես էլ բուն հայրենիքի տարածքում, լավ թե վատ, գոյատևող վերոհիշյալ երեք հայկական իրավասուբյեկտների ու էլի ոչ միայն սրանց,

այլև ողջ ԽՍՀՄ-ով մեկ սփռված հայ բնակչության անվտանգությունն ապահովելու սեպուհ նպատակով /բնութագրաբար, դեռ 1920-1930-ական թթ., քանիցս մերժել է ԽՍՀՄ-ի ներսում հակախորհրդային ապստամբություններ, անձամբ Ստալինի դեմ մահափորձ կազմակերպելու՝ օտարերկրյա ծառայությունների առաջարկները/... թող որ նույն գերմանական ֆաշիզմի հետ գործակցելու գնով /Նոստրադամուսի որոշարկած Քյոլնը տվյալ դեպքում կարելի է համարել ողջ «Մեծ Գերմանիայի» փոխանուն: Իմիջիայլոց, ցայժմ Քյոլնը և մերձակայքը Գերմանիայի ամենահայահոծ վարչատարածքն են, գործում են Սբ Սահակ և Մեսրոպ եկեղեցին, բազմաթիվ հայկական միություններ, մարզամշակութային խմբեր, դպրոց /«Հայ Սփյուռք» հանրագիտարան, էջ 142, Եր., 2003 թ./:

Վերմախտի գեներալի ճանաչված կարգավիճակով «1942-43 թթ. Հայաստանի ազատությունն ու անկախությունը վերականգնելու խնդրի շուրջ համագործակցում է գերմանական ռազմական իշխանությունների և հետախուզական կառույցների հետ»: 1943 թ. հունվարին Բեռլինի հայոց գաղութի ղեկավարությունը Նժդեհին /նամակով/ խնդրում է ստանձնել «գաղութն առաջնորդելու պարտականությունը» /Ռաֆայել Համբարձումեան, Գարեգին Նժդեհ, Եր., 2003 թ., էջ 172/: 2000-ական թթ. սկզբին Երևանի բնակիչ Սահակ Զախարյանը տողերիս հեղինակին վստահեցրել է, որ ըստ Գերմանիայում իր բախտակից ու ազգակից ռազմագերիների շրջանում տարածված տեղեկատվության՝ Նժդեհը հանդիպումներ է ունեցել անձամբ Ադոլֆ Հիտլերի հետ՝ առաջադրելով Հայության համար հետևյալ կենսական հարցերը.

ա) հայերն արիական ցեղ են և իրավունք ունեն արժանանալու բարեհաճ վերաբերմունքի.

բ) հայ ռազմագերիներին հնարավորինս հեռու պահել ամեն տեսակի ծանր /ներառյալ պատերազմական/ փորձություններից.

գ) Կովկասում ձեռնպահ մնալ հայ բնակչության նկատմամբ հաշվեհարդարներից ու սահմանել Հայաստանի անվտանգությունը երաշխավորող հատուկ իրավիճակ:

Սակայն նույն կտրվածքով էլ «հաշտությունը կեղծ էր»: Եվ այլ կերպ լինել չէր կարող, քանզի այդ գործակցությունը միմիայն առժամյա միջոց էր /հերիք է հիշել նաև Հիտլերի ցինիկ հռետորահարցը՝ իսկ ո՞վ է հիշում հայերի ցեղասպանությունը/: Ու երբ վրա հասավ Երրորդ ռայխի մայրամուտը, Նժդեհը, հավատարիմ մնալով «փուշը վերքից այլ /արդեն խորհրդային/ փշով հանելու» մարտավարությանը /տես Ռուբեն Խուրշուդյանի «Երկու խոսք» առաջաբանը՝ «Բանտային գրառումները»/, սկսեց հնարավորն ու անհնար թվացողն անել՝ հիմա էլ ոչ միայն առհասարակ նացիստական կայսրության փլատակների տակից հայությանը հեռազերծ պահելու, այլև դրա նախնական դաշնակից ու իր եղեռնահար ցեղի արնապարտ ոսոխ Թուրքիայի անկումն ու անդնդարկումն արագացնելու համար: Այս անգամ անձամբ փնտրելով ու հետամտելով հակաբևեռի՝ իր իսկ հետ անհաշտ թշնամացած խորհրդային կայսրության /հանձինս վերջինիցս չարագուշակ հատուկ ծառայությունների/ գործակցությունը, թեկուզ արդեն սեփական անվտանգությունը վտանգելու և ի վերջո կյանքն անգամ մատաղելու գնով: Ու այստեղ կրկին հույժ հատկանշական է դառնում Վիեննայի պարագան: Ինչպես ինքը՝ Նժդեհն է կարևորել հանրահամբավ «Ինքնակենսագրությունում» /1944 թ., սեպտեմբեր, դարձյալ սևծովյան Բուլղարիայի մայրաքաղաք/, մինչև վերոշեշտյալ ծառայություններին հանձնվելը հանգիստ կարող էր օդանավով՝ «Par avion իրեն նետել Վիեննա» և հետայդու էլ անհամեմատ հանգիստ պայմաններում պայքարել ընդդեմ պարտվող բևեռի ու նրա հայաքաղ զորակցի /սերնդակապային որոշակի խորհուրդ ենք տեսնելու նաև 1983 թ. Վիեննայի պատերի տակ թուրքական սուլթանազորի ջնջման մեջ 5000 հայազգի հերոսամարտիկների

մեծաբաժնում, ինչը մեկընդմիշտ կասեցրեց Օսմանյան կայսրության հետագա ճարակումը Հին աշխարհի խորքերը/: Սակայն Նժդեհավարի գերադասեց ընտրել վտանգի առավելագույնը՝ հանուն ամենամեծ հայանպաստ արգասիքների: Այլ խնդիր է, որ վերջին մարգարեությունը գոնե նրա կենդանության օրոք՝ կարճաժամկետ հեռանկարում «սև» դուրս եկավ ու Նժդեհն արդեն ափսոսանքով պիտի խոստովաներ. «Ես իմ կյանքով հաստատեցի Հերոդոտոսի խոսքը. «Վտանգավոր է չափից ավելին ցանկանալ»: Ես ուզեցի, որ ցեղի գոյության թշնամին հենց իմ օրով նստե իր հայրենիքի փլատակների վրա և վայե՝ նախանձելով յոթնիցս անիրավված իմ ժողովրդի ճակատագրին» /«Բանտային գրառումներ», էջ 55/: Իսկ բուն բաղձալի արգասիքներն սկսեցին նյութականանալ և թանձրանալ միայն նրա մասունքների «սրբաերրորդված» հայրենադարձից /1983 թ. հոկտեմբերի 7՝ Խուստուփ լեռան լանջ, 1987 թ. մայիսի 8՝ Սպիտակավորի Սբ. Աստվածածին վանքի բակ, 2005 թ. ապրիլի 26՝ Կապան մարզկենտրոնի Նժդեհյան հուշահամալիր/ հետո, իմա՝ Նժդեհյան ոգեդարձից, արդեն զուգապետության՝ ամբողջ երկու հայկական պետությունների /ՀՀ+ ԼՂՀ/, «ձևաչափով», ավելի նշանակալի տարածաշրջանային «բովանդակաչափով» և առավելաչափ աշխարհաքաղաքական ու աշխարհառազմավարական ներուժով...

3. Նամակներ /էպիստոլներ/ 104-106

104. ... Քանի դեռ չի ծնվի ոմն մեկը՝ երկար ժամանակ թափուր մնացած ճյուղից, ով աշխարհի ժողովրդին կհանի ողորմելի և կամավոր ստրկությունից

105 -ու նրանց կտեղավորի Մարսի Հովանավորությամբ՝ զրկելով Յուպիտերին բոլոր պատիվներից ու արժանիքներից և կհաստատվի ազատ քաղաքում, որ գտնվում է

106- այլ փոքրիկ Միջագետքում:

Ցևապես «թափուր ճյուղ» կարող է դիտարկվել դարերով

ընդհատված մեծ ավանդույթ ունեցող հայոց պետականությունը, որի վերականգնման ռահվիրաներից մեկի՝ Գարեգին Նժդեհի ժողովրդանպաստ ու միասնացնող գաղափարախոսությունը անչափազանցորեն ի զորու են նշանավորելու համընդգրկուն հոգևոր և ոգեղեն ազատագրման «ուղիղ ճանապարհ», արդարև մարդարժան կենսակերպ ու մահակերպ՝ զերծ Մամոնայի, կեղծ, առանձնապես զուտ նյութաթաթախ արժեքների պաշտամունքից. «Մարդկայնությունն է մարդկության հայրենիքը, որ մինչև հիմա գոյություն չունի», «Ապրել և գործել միայն այն բանի համար, որի համար արժե մեռնել, և մեռնել այն բանի համար, որի համար արժեր ապրել» /Է՞լ ով, եթե ոչ Նժդեհ./:

1919-21 թթ. ազգային-ազատագրական պատերազմում վերջինիս ընդհանրական Աստված Մարսի հովանու ներքո Նժդեհամարտիկներն անհավասար ճակատելով բազմաքանակ ու բազմազգի թշնամու դեմ /«Մի ամբողջ Բաբելոն». Նժդեհ/՝ մի պատմական պահ, ուղղակի թե անուղղակի, ծնկի բերեցին «Յուպիտեր» հավակնոտ դիցանվամբ խորհրդանշված ժամանակի ամենից «պատվավոր» ու զորեղ երեք կայսրություններին՝ Օսմանյան, ձևավորվող Խորհրդային ու Բրիտա-նական...

Նժդեհը հիմնեց առանձին ժողովրդավարական հանրապետություն /Ինքնավար Այունիք-Լեռնահայաստան-Հայաստան/՝ այդ Քուռ-արաքսյան «փոքրիկ Միջագետքում», որի ազատ մայրաքաղաք հռչակվեց Գորիսը: Եվ ո՞վ կարող է հակաճառել կամ գեթ ո՞վ գիտե. միգուցե հենց այդ պահից ու այդ շենից պիտի որ ակունքվեր ոչ լոկ Նժդեհածին՝ ժողովրդի, այլև դեռ անհայրենիք արար մարդկության միացյալ վերածնունդը, եթե իհարկե վերասերված այդ կայսրությունները չդառնային դավեին դարձյալ Նժդեհի ու նրա պաշտած Ազնվացեղին...

4. 2ք 27

Աստվածային բանը /խոսքը/ կշանթի երկնուստ, նա ով չի կարող այլևս շարունակել. հայտնությունը գաղտնիք է թաքուցյալ, այնպես որ նրանք կսկսեն քայլել վրան ու առաջ /նրա բանտի/:

5. 2ք 28

Մարգարեի անուններից նախավերջինը Դիանայի օրը կընդունի որպես անմռունչ անդորրի իր օր. նա կսկսի ճամփորդել և' ի հեռուն, և' ի լայնս, ցասում առթելու իր պոռթկման մեջ՝ ստրկացումից ձերբազատելով մեծ ժողովրդին:

6. 5ք 29

Մարդն Արևելքից կբարձրանա իր գահից, կհատի Ապենինները, որ տեսնի Ֆրանսիան. նա վար կսուրա երկնքից, անձրևների ու ձյունների միջով, և բոլորին կհարվածի իր մականով:

Վերջին երեք քատրենները,-մեկնաբանում է Ջոն Հռուգը,- «Վերստին վերադարձնում են մեզ 21 -րդ դարի հոգևոր հեղափոխության՝ Արևելքից եկող հիմնադիր-հոր աստվածայնության որոշման 8 բանալիների թեմային» /էջ 165/: Հընթացս հիշատակենք և այդ ինքնին նժդեհացույց 8 բանալիները. 1/ Մարդն Արևելքից, 2/Մեծ Ներմեսի մական, 3/Հալածվող ուսուցիչ, 4/Խորհրդապաշտպանական վարդ /կարմիր գույն/, 5/Մարս և հուր, 6/ Դիանա /Լուսին և խոկում/, 7/ Ցասման հանգեցնող ուխտագնաց, 8/ Թռչուն /որ ճչում է «Հիմա'». հիշենք Նժդեհի ավաղանքը և Հերոդոտոսի վճռակի վկայակոչումը 5ք 94-ի մեկնությունում/ /էջ827/:

Զարմանացունց պայծառատեսությամբ Նժդեհի «հետմահու կյանքն» է կանխապատկերում մանավանդ 2ք 27-ը: Երկրային վախճանից 27 տարի անց /1982 թ. դեկտեմբեր/ Վլադիմիր

քաղաքի բանտի գերեզմանատեղիում Աստվածատեսիլ հրաշքով հայտարերվում է Նժդեհի աճյունը /պարտական ենք նախ Պավլիկ Անանյանին, նրա երկլեզու «Առաջին աղոթքը» նախահոդվածը Գարեգին Նժդեհի «Նամակներ» գրքում /Եր., 2002թ./՝ կազմված թոռնուհու, նույն Պավլիկի տիկնոջ՝ Գոհարինե Տրդատյանի կողմից, նվիրված վերջինիս մորը՝ Նժդեհի դուստր Լիլյա Դադայանին/:

1983-ից ծայր է առել ու ահա արդեն քառորդ դար հանապազօրդում է Նժդեհյան ամենամյա ու բազմահասցե ուխտագնացությունների շարանը՝ հարաճուն մարդահոսքով, ժամանակի մեջ՝ անծայր, տարեցտարի շատացող հատուկ տեսակի համար՝ «Եթե չգամ, ուրեմն չկամ» կենաց ու մահու բարձրագույն գինն ունեցող երդումով: Այս ամենը՝ երկրումս ու Երկրի վրա: Իսկ երկնքից շարունակելու է ավելի ու ավելի բարձր ճայթել ու շանթել հանց ուղեցույց ձայնափարոս, «Աստվածատես Նժդեհի» /Արորդիների հոգելույս քրմապետ Սլակ Կակոսյանի բնորոշումն է/ Աստվածահանգ խոսքը, ասել է թե՝ Աստվածամերձ համամիասնական միտքը, գաղափարը, պատվիրանն ու պատգամը, գործը, կյանքը և նույնիսկ մահը՝ երկնարքայությամբ օծուն ու սրբագործ... Գարեգին Նժդեհի, նրա համամարդկային առաքելության ու առաքինության մասին բազմախորհուրդ տեղեկություններ են հուշարկում նաև, ինչ խոսք, նրա կենսապատում - մահապատումին ու գոնե բուն «Նժդեհ» նշանակություններին /1.պանդուխտ, հերմեսական, 2. սեպուհ, պայազատ, իշխանորդի, 3. տառապյալ /Երեմիա Մեղրեցի, «Բառգիրք հայոց», էջ 241, Եր., 1975/ փոքրիշատե իրազեկներին,-4ք 50 /վերծանությունն ըստ 19-րդ դարի պայծառատես Բլավատսկայայի/, 6ք 24 քատրեններ և հատկապես վերոնշյալները, որոնք ներկայացնում են թարգմանաբար՝ առանց մեկնաբանությունների:

7. 5բ 53

Արևի և Վեներայի օրենքը բախման մեջ է՝ հարմարեցնելով ոգին մարգարեության. ո՛չ մեկը, ո՛չ մյուսը հասկացված չեն լինի, Արևի կողմից /կպահվի/ մեծ Մեսիայի օրենքը:

8. 5բ 79

Սրբազան սխրանալին կգա, որ խոնարհի թևերը, Մեծ օրենսդիրի ժամանման պահին. նա կբարձրացնի անկյալներին, նա կբորբոքի խռովարարներին, նրա նմանները չեն ծնվել /այս/ երկրի վրա:

10. 4բ 31

Լուսինը կեսգիշերին՝ բարձր լեռների վրա, ջահել ի-մաստունը՝ միայնության մեջ, նրա միտքը տեսել է դա. աշակերտները հրավիրում են նրան դառնալ անմահ, նրա աչքերը կենտրոնանում են, նրա /խաչված են/, կրծքին, մարմինը նրա կրակի մեջ է:

11. 10բ 75

Երկար սպասված՝ նա երբեք չի վերադառնա, նա կհայտնութենանա ասիական հողում, /իսկ կլինի/ տանը Եվրոպայում, նա, որ արձակվել է մեծ Հերմեսից և կխոյանա վեր՝ արևելյան արքաներից էլ բարձր:

Գարեգին Ղազարյան, Նժդեհի հետին հետևորդ,
Ազատագրված Բերձոր /նախկին Լաչին/-
Սպիտակավոր - Երևան, Հայաստանի Զրուցակից
թիվ 27, հուլիս 2008 թվական

ՀԱՅՐԵՆԻՔ

Նա ծնուեց մարդու առաջին մտածումի հետ՝ թէ սուրբ է Հայրենի հողը:

Նա ստեղծուեց այն օրը, երբ մարդն առաջին անգամ լինելով գիտակցօրէն ու ժպտադէմ մեռաւ Հայրենի հողի համար: Հայրենիք չէ սոսկ երկիրը, դա Հայրենիք է դառնում այն հոգեւոր արժէքներով, որոնցով նրան օժտում է ժողովուրդը:

Երկիրը - դա Հայրենիքի աշխարհագրական զրահն է: Հայրենիքը - այդ երկիրը մշակող ժողովրդի ոգին է, նրա մշակոյթը:

❋❋❋

Ժողովրդի հոգեւոր ստեղծագործութիւնը՝ ահա Հայրենիքը՝ իր սկիզբը առած նրա բանարուեստի, ձեռագիր գրքերի, սուրբի, լուսակիրի, հերոսի, նրա առաջին աւանդությունների հետ:

Հայաստան երկիրը Հայրենիք դարձրին՝ Մեսրոպի այբուբէնը, Մամիկոնեանների ուխտը, Բագրատունիների շինարարական մեծագործութիւնը:

❋❋❋

Իբրեւ հասկացութիւն՝ Հայրենիքն ընդգրկում է ո՛չ միայն անցեալն ու ներկան, այլեւ՝ գալիքը: Դա ժողովրդի պատմական առաքելութիւնն է ըստ իր վախճանական նպատակի՝ զարգացող մի յաւերժութիւն է Հայրենիքը: Դա եկող ու անցնող սերունդների անմահութիւնն է, որն իբրեւ գաղափար եւ գործ ժողովուրդը դրոշմում է նիւթի վրայ, խօսքի մէջ, եւ այն ապրեցնում իբրեւ անմեռ յուշ, իբրեւ պատմութիւն:

❋❋❋

Հայրենիք չէ կայսրութիւնը: Հայրենիքը խորացող էութիւն է: Դա արտաքին նուաճում չէ, այլ՝ ինքնանուճում, ինքնամշակում:

Հրէության համար՝ հայրենիքը խորհրդանշող «լացի պատ»-ը աւելի մեծ հոգեւոր տարողութիւն ունի, քան Զինաստանը՝ չինացիների համար:

Աշխարհակալութիւ'ն - ահա' հայրենիքի թշնամին՝ հարազատ, թէ օտար: Վերջ ի վերջոյ կործանւում է աշխարհակալող ամէն երկիր - Բաբելոն, Հռոմ, Բիւզանդիա, որովհետեւ նա սպանում է եւ' իր սեփական հայրենիքը:

Խելագար անձնասպանութիւն է աշխարհակալութիւնը, հոգեսպանութիւն:

❋❋❋

Մարդկային գործերի մէջ հայրենիքի պաշտպանութիւնն է ամենասրբազանը:

Հայրենիքի չափ նուիրական է եւ պատերազմը հայրենական: Հաւաքական աւազակութիւն եւ սպանութիւն է այլ կարգի ամէն պատերազմ:

Եւ ճշմատիտ հերոսները նրանք են միայն, որոնք մեծագործում են եւ առաքինանում իրենց վտանգուած հայրենիքը պաշտպանելու ժամանակ:

Հերոսի անունը պիտի զլանալ աշխարհակալական պատերազմի մասնակցող ամէն զօրականի: Սպանութեան եւ կողոպուտի ելած բանակը կարող է քաջ աւազակներ ու մարդասպաններ տալ, բայց ոչ եւ հերոսներ:

Խոստուփ լեռան լանջին, 1989թ.դեկտեմբերի 21-ին, 1990թ. ամռանը դրված Գարեգին Նժդեհի հուշարձանը



Խոստուփ լեռան լանջին, 1989թ.դեկտեմբերի 21-ին, 1990թ ամռանը դրված Գարեգին Նժդեհի հուշարձանը

***

Հայրենիքը չի տրւում այնպէս, ինչպէս ժառանգւում է հայրենական հարստութիւն: Դա ձեռք է բերւում ամէն մի սերունդի եւ նրա առանձին անդամի կողմից, ձեռք է բերւում հայրենաճանաչումով, հայրենապաշտութեամբ, նրան արժանի դառնալու ձգտումով: Կարելի է հայրենիքում լինել, բայց հայրենիքից չլինել, կարելի է հայրենիքում ապրել, բայց եւ այնպէս հոգեհաղորդ չլինել նրան:

Կարելի է, վերջապես, իրաւապես հայրենատէր լինել, իսկ հոգեպէս՝ անհայրենիք:

Արժանի չես հայրենիքիդ, եթէ այն չես դաւանում իբրեւ գերագոյն նպատակ, իսկ անձդ՝ իբրեւ միջոց:

***

Սոցիալապէս որքան արդար՝ այնքան զօրաւոր է հայրենիքը: Երջանիկ է մարդը, որ կարող է ասել. «Իմ հայրենիքում արեւը ծագում է բոլորի եւ ամէն մէկի համար, այնտեղ երկիրը մշակելու եւ հոգեպէս մշակուելու ազատութիւն ունեմ ես»:

***

Հայրենիք ստեղծել՝ նշանակում է բեկոր առ բեկոր յայտնաբերել, իմաստաւորել, պատմականացնել իր երկիրը: Նշանակում է այնպէս հարազատել իր երկիրը, որ նրանում ոչինչ չմնայ անյայտ, անխօս, մեռեալ: Նշանակում է վայր առ վայր նուաճել երկիրը, շունչ եւ իմաստ տալով նրանց:

Ի մի բան՝ հայրենիք ստեղծել՝ նշանակում է հարազատել իր երկիրը եւ հարազատանալ նրան: Այսպիսով ահա, նոյնանում են ժողովրդի ոգին ու հայրենիքը: Սրանց դարաւոր փոխներգործութեան արդասիք է հայրենիքը:

❋❋❋

Ազգային ոգի - ահա՛ գերագոյն հերոսը, միա՛կը, մեր պատմութեան անիւը դարձնող, մեր հաւաքական ճակատագիրը վարող հերոսը:

Էապէս միայն դա է գործում պատմութեան համար: Անհատ հերոսներն ոչ այլ ինչ են, եթե ոչ միայն անձնաւորողներն այդ ոգու:

Մեռնում են հերոսները՝ Մանուէլները, Մուշեղները, Վարդանները. մնում է, սակայն, նրանց ոգին, որն իր մարմնաւորումը գտնելով այլ հայերի մէջ՝ շարունակում է ապրել ու ներգործել:

Եվ հէնց սրանում է հերոսների անմահութիւնը: Զէ՛, չի՛ մեռնում հերոսը. նա միայն իր անօթ

ու անունն է փոխում:

Գարեգին Նժդեհի արձանը
Գյումրիում

Գարեգին Նժդեհ

ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ ԵՐԳԸ

Արազի ափին ծնած դու ընկեր,
Էն Արազին մենք մատաղ,
Մութ բանտերում տանջված ընկեր,
Սուրբ տանջանքիդ մենք մատաղ:

Հու՛ռռա, հու՛ռռա, հու՛ռռա,
Քաջ Նժդեհի սուրը շողշողա:

Ցա՛ր վախեցավ, քեզ աքսորեց
Իր աշխարհեն շատ հեռուն,
Մեզ մոտ եկար, բարով եկար,
Նոր իդեալներ մեզ բերիր:

Հու՛ռռա, հու՛ռռա, հու՛ռռա,
Գարեգինի սուրը շողշողա:

Արյան դաշտում, կռվի դաշտում,
Սուրդ շողա, քաջ Նժդեհ,
Հուռռա, հառաջ, դու գոռացիր,
Կուրծքդ խաչով զարդարեցիր:

Հու՛ռռա, հու՛ռռա, հու՛ռռա,
Քաջ Նժդեհի սուրը շողշողա:

***

Ցեղակրօն խումբեր երթանք Հայաստան
Մեր Ցեղին Ոգին է մեզ ապաստան,
Առաջնորդ ունեինք մենք Նժդեհը քաջ,
Անվեհեր սրտով քայլենք մենք առաջ:

Մենք կ'ուզենք տեսնել Հայաստան ազատ
Մեր Ցեղին օրրանն է ան հարազատ,
Մեր արիւն տալու մենք միշտ պատրաստ ենք,
Բաւական է, որ հայ հողն ազատենք:

Ուխտապետները հոգւով են երդուած
Ցեղակրօն դրօշ իր ծալքերը պարզած,
Մենք հանգիստ չենք տայ նամարդ թշնամւոյն,
Պատրաստ ենք տալու բոսոր մեր արիւն,
Մինչեւ Հայաստան պարզէ Եռագոյն:

Եղբայրական համբոյր՝
անթառամ յիշատակիդ, սիրելի Նժդեհ:
Տիգրան Աւետիսեան

ԵՐԳ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Խօսք՝ Ռ. Ալեքսանի
Երաժշտ.՝ Աբրահամիսի

Զինվորի երթն անշեղ է՝ մահու-կյանքի ճամփին,
Մաղթում է ժողովուրդը՝ օրհնանք մարտիկներին:

Կրկներգ
Քայլենք միայն առաջ,
Հա՛յ զինվորներ մեր քաջ.
Ձեր առջևում Մասիսն է,
Իսկ վերևում՝ Աստված:
Եկել եք դարերից դուք, երկնի ոգուն անսած,
Թողած աստղափոշին սուրբ երթին հաղթանակած:

Կրկներգ
Անմահացած Նժդեհը պաշտպանն է հայրենյաց,
Թամբում է Անդրանիկ Մասիս ու Արագած:

Կրկներգ
Չկա ձեզ մահ, անմահ եք, վկա ոգին նախնյաց,
Ամուր պահեք սրերը, հաղթեք նենգ թշնամյաց:

Կրկներգ
Հավատքն հոգևոր է էրգրում ու երկնքում,
Ուր մեր պապերի միտքը վեհ գործ է ձեռնադրում:

Վարդան-ահաւասիկ մի անուն՝ աւելի հմայքոտ, աւելի զօրաւոր, քան մականը Հայաստանի գահը վայելած բոլոր Թագաւորներին. Մի նախանձելի անուն, որը կրելու, Մամիկոնեան կոչվելու համար աշխարհակալ Բիզանդիոնի հայազգի կայսրերը իրենց ծագումն էին կեղծում: Մի անուն- մի ամբողջ դաւանանք, մի ուխտ, մի բարոյական իմաստասիրութիւն:

Վարդան, զօրավար եւ զօրաւորդ հայոց, անցած, գոյ եւ գալոց սերունդների անունից համբոյր աւարայրիդ, համբոյր անունիդ.

Նժդեհը մակեդոնական հայդուկի զգեստով, 1906թ.

Անդրանիկը բուլղարական բանակի համազգեստով, 1913 թ.

Սեբաստացի Մուրատ

❋❋❋

Մեր սարերը անառիկ եւ հպարտ,
Մեր որդիք կորովի եւ անպարտ.
Խոր ձորեր Սիւնիքի ահաւոր,
Շիրիմ են թշնամու դարաւոր:
Թշնամին հազարով միշտ մեր դեմ,
Զենք դողում, չենք սարսում մենք մահից
Մեր մահը թեթեւ թիթեռի թեւից:
Ինքնավար Սիւնիքին ցանկանանք
Միշտ լինել թշնամուն սպառնանք,
Շատ ապրի մեզ համար այսուհետ,
Քաջ հերոս Նժդեհ սպարապետ:



Տեղ գյուղի համայնապատկերը



Գորիս քաղաքի ժայռերը

Օգտագործված գրականության ցանկ

• Գարեգին Նժդեհ. «Հավատամք», «Հայ դատ»: Կազմող՝ Հ. Վասիլյան, Երևան-1991թ.

• Գարեգին Նժդեհ. «Էջեր իմ օրագրէն», ՌԶՂ, Երևան-1990թ.

• Գարեգին Նժդեհ. «Հատընտիր», «Հայաստան», Երևան-2001թ.

• «Հայրենասիրական երգերի ժողովածու»-կազմող՝ Ա. Խաչատրյան (Արտեմիս), Երևան-2009թ.

• Նժդեհ «Գարեգին Նժդեհ ամբողջական կենսագրութիւն» կազմող՝ Ռաֆայել Համբարձումյան, Երևան-2007թ.

• Նժդեհ «Կեանքն ու գործունէութիւնը նշխարներ վկայութիւններ» ԱԻՕ, ՊԵՑՐՈՒԹ-1968 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ....3
ՆԱՄԱԿ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆԸ....7
ԿՅԱՆՔԸ....8
ԲԱՑ ՆԱՄԱԿ 11-ՐԴ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻՆ....23
ԻՄ ՊԱՏԱՍԽԱՆԸ....27
ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԸ....31
ԲԱՑ ՆԱԿԱՄԱԿՆԵՐ ՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ....35
ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆԸ՝ ԵՐԿՈՒ ԽՈՍՔ....57
ՀԱՅՐԵՆԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆ....61
ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ....62
ՅԵՂԱԿՐՈՆՈՒԹՅՈՒՆ....68
ՅԵՂԱԿՐՈՆՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՄՔԸ....77
ԱՌՅՈՒԾԱԾԱԻՆ ՄԱՅՐԵՐ....86
ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ԽՈՀԵՐ....88
ՆԺԴԵՀ ՄԱԳԱՐԵՆ....92
ՀԱՅՐԵՆԻՔ....103
ԵՐԳ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ....113

ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ

ԱԶԳԱՑԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՎԱՏԱՄՔ

Համակարգչային շարվածքը՝ Արտաշես Խաչիկյանի
Կարինե Մարգարյանի
Սրբագրությունը՝ Վաչագան Մանուկյանի
Խմբագրությունը՝ Ասյա (Ալլա) Բարխուդարյանի

Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» հրատարակչության տպարանում:
Ֆորմատ՝ 70x100 1/16, թուղթ՝ 80 օֆսեթ, տպաքանակ՝ 2000:
Ք. Երևան Սայաթ-Նովա 24 (գրասենյակ)
Ավան, Դավիթ Մալյան 45 (տպարան)
Հեռ. (374 10) 54 49 82, 62 38 63
Էլ. փոստ՝ info@asoghik.am